



LOS ANGELES ՎԱՐՉԱՇՐՋԱՆ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

2019



DEAN C. LOGAN

Գրանցող-Արձանագրություն Պահող/Վարչաշրջանի Քարտուղար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱԿՏ	3
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ	4
ԲԱԺԻՆ 1 – ԱՅԼ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ	6
1-A ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԶԱՐՈՉՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	7
1-B ՓՈՍՏԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ	12
1-C ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ	15
1-D ԿԱՅՔԷՋԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ	44
1-E ԼԵՉՎԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ	45
1-F ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐՈՎ ԱՆՁԱՆՑ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ	47
1-G ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԶԱՐՈՉՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵ	51
1-H ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	51
1-I ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՎԱԶՂՆԵՐ	52
1-J ԱՆՄԻՋԱԿԱՆ ԿՈՆՏԱԿՏՆԵՐ	53
ԲԱԺԻՆ 2 – ԸՆՏՐԱՏԵՂԱՄԱՍԵՐ ԵՎ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐ	53
2-A ԸՆՏՐԱՏԵՂԱՄԱՍԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐ	53
2-B ԸՆՏՐԱՏԵՂԱՄԱՍԵՐ	62
2-C ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐ	65
ԲԱԺԻՆ 3 – ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՍԱՐՔԱԿՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ	66
3-A ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԼՈԳԻՍՏԻԿ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԲԱԶՄԱԼԵՉՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	66
3-B ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ	67
3-C ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ	68
ԲԱԺԻՆ 4 – ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ	69
4-A ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ	69
4-B ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ	69
4-C ԿԻՔԵՐԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ	70
4-D ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ	70
ՀԱՎԵԼՎԱԾ	72

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Los Angeles վարչաշրջանը (վարչաշրջան) երկրի ամենաբնակեցված քվեարկելու իրավասություն ունեցող վարչաշրջանն է ավելի քան 5.4 միլիոն գրանցված ընտրողներով: 2009 թվականից սկսած վարչաշրջանի Գրանցող-Արձանագրություն Պահող/Վարչաշրջանի Զարտուղար (վարչությունը) աշխատել է բարելավել ընտրական փորձառությունը իր քվեարկության լուծումներ բոլորի համար (VSAP) նախաձեռնության միջոցով: Հաշվի առնելով վարչաշրջանի չափսը, բարդությունը և ժողովրդագրական տվյալները՝ վարչության գլխավոր առաջնահերթությունն է վերացնել վարչական պատնեշները և խոչընդոտները, որոնք դժվարեցնում են ընտրողների մասնակցությունն ընտրական գործընթացում: VSAP-ը փորձում է ապահովել, որ վարչաշրջանի ընտրողները մասնակցության ավելի մեծ հնարավորություններ ունենան՝ հարմար, մատչելի և ապահով եղանակով տրամադրելով քվեարկման ընդայնված տարբերակներ, որոնք լիովին համապատասխանեցված են այն գործողությունների հետ, որոնք պետք է ընդլայնեն քվեարկության տարբերակներն ամբողջ նահանգով մեկ:

Ընդլայնելու հասանելիությունը և արդիականացնելու ընտրության տարբերակները California-ում՝ նահանգը նույնպես ձեռնարկել է նախադեպը չունեցող քայլեր, որպեսզի վերասահմանի, թե ինչպիսին է մարդկանց փորձը քվեարկության հարցում: Բավարարելու California-ի բազմազան և աշխարհագրորեն բարդ տեղանքում գտնվող բնակչության կարիքները, նահանգն ընդունել է ավելի ճկուն և ժամանակակից փորձառություն տրամադրելու կարիքը, որն ընտրողներին առաջարկում է ընտրություններ, թե ինչպես, երբ և որտեղ են քվեարկելու: Սենատի օրինագիծ 450-ը, California-ի ընտրողների ընտրության ակտը (VCA) մշակվել էին հեշտացնելու այս փոփոխությունը: Այս փաստաթուղթը նկարագրում է վարչաշրջանի հիմնարար մոտեցումը VSAP-ի և VCA-ի իրականացման հարցում, որը մեծապես կբարելավի ընտրողների քվեարկման փորձառությունը՝ սկսած 2020 թվականի մարտի Նախագահական նախնական ընտրություններից:

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱԿՏ

VCA-ը վարչաշրջանների համար տրամադրում է հիմնարար շրջանակ՝ առաջարկելով ընդլայնված ընտրանքներ ընտրողների համար, տրամադրելով ավելի մեծ ճկունություն և հարմարավետություն: VCA-ի մոդելի հիմնական տարրերը ներառում են՝

- Անձամբ իրականացվող ճկուն քվեարկության ընտրանքներ՝ թույլ տալով ընտրողներին իրենց քվեն կատարել իրենց բնակության վարչաշրջանի ցանկացած ընտրատեղամասում ավելի քան 11-օրյա ժամկետում
- Ընտրատեղամասերում ընտրողին տրամադրվում են ընդգրկուն ծառայություններ և աջակցություն, ներառյալ Ընտրողների պայմանական գրանցումը (CVR)

- Փոստային քվեարկության (VBM) ընդլայնված տարբերակ, ներառյալ հարմարավետ VBM-ի քվեաթերթիկների ընդունման և հանձնման տեղամասերը, որոնք հասանելի են Ընտրության օրվանից 29 օր առաջ (տե՛ս բաժին 2-C):

VCA-ի ընտրական մոդելի հաջող իրագործումը պահանջում է, որ այն ընդունող վարչաշրջանները մանրամասնորեն ուսումնասիրեն իրենց առկա պայմանները և գործընթացները, ներառյալ քվեարկման տեխնոլոգիան, բյուջեի տարողունակությունը, քվեարկման վայրերը և համայնքի ներգրավվածությունը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԲՈԼՈՐԻ ՉԱՄԱՐ

Վարչաշրջանում VCA-ի իրականացման համար վարչությունը մշակել է իր առկա VSAP-ի վերափոխման նախաձեռնություն: Այս փորձի շնորհիվ վարչաշրջանի ընտրողները հայտնվում են նոր քվեարկման փորձառության զարգացման կենտրոնում, որը հարմարավետ, մատչելի և անվտանգ է:

VSAP նախաձեռնությանը խորհուրդ է տրվել հետազոտողների, նախագծագրողների, օգտագործելիության և անվտանգության փորձագետների, տեխնոլոգիական և գիտական ղեկավարների և համայնքային շահագրգիռ կողմերի լայն շրջանակ, այդ թվում՝ Չամայնքների վրա հիմնված կազմակերպությունների (CBO), փաստաբանական խմբերի և հասարակության անդամների լայն ցանկ: Օգտվելով խորհրդատու խմբերի, հարցումների, կիզակետ խմբերի, տեխնիկական վերլուծության և օգտվողների փորձարկումների համակցումից՝ վարչությունը նախադեպ է սահմանել, առաջնորդելով նոր քվեարկման փորձառության մշակման ընդգրկուն գործընթաց, որը բավարարում է նահանգային և տեղական պահանջմունքները, համապատասխանում է ընտրողների կարիքներին և գերազանցում է ընտրության ազգային համակարգի անվտանգության չափորոշիչները: VSAP-ի հիմնական բաղադրիչները ներառում են փոստային քվեարկության (VBM) վերափոխված քվեաթերթիկ, քվեաթերթիկների դրոշմավորման ամբողջապես մատչելի և անվտանգ սարք (BMD), Էլեկտրոնային ընտրացուցակ (ePollbook), փոխգործակցելի քվեաթերթիկի նմուշ (ISB), արդիականացված տարաժամկետման համակարգ (Tally), քվեարկության համար երկարաձգված ժամկետ և ընտրատեղամասեր, այդ թվում բջջային քվեարկության ծրագիր:

VBM-ի վերանախագծված քվեաթերթիկ

VBM-ի նոր քվեաթերթիկը ներկայացվել էր վարչաշրջանի ընտրողներին 2018 թվականի նոյեմբերի Չամընդհանուր ընտրությունների ժամանակ: VBM-ի ամբողջապես վերափոխված քվեաթերթիկն ունի ավելի մեծ տառաչափ և ավելի հստակ ցուցումներ՝ հեշտացնելով այն կարդալը, լրացնելը և վերադարձնելը: Ի լրումն, փոստային միջոցը նախապես վճարված է,

ուստի կարիք չկա այլևս կցել նամականիշ: Նրանք, ովքեր նախընտրում են անձամբ մասնակցել ընտրությանը, կարող են դա անել VBM-ի ցանկացած տեղամասում կամ վարչաշրջանի ցանկացած ընտրատեղամասում:

Քվեաթերթիկների դրոշմավորման սարք

BMD-ն փոխարինում է վարչաշրջանի ժառանգած InkaVote համակարգը: BMD-ն յուրաքանչյուր ընտրողի թույլ է տալիս տասներեք լեզվով հարմարեցնելու իր փորձառությունը թե՛ տեսողական, թե՛ ձայնային հասանելիությամբ (տես բաժին 1-E) և առաջարկում է հասանելիության առանձնահատկություններ, որոնք հաշմանդամություն ունեցող ընտրողների քվեարկության ժամանակ ապահովում են հավասարություն և անկախություն: Վերահսկողության և անվտանգության նպատակով՝ BMD-ներն արտադրում են մարդու համար ընթեռնելի թղթային քվեաթերթիկներ, որոնք գերազանցում են քվեարկման ազգային համակարգի անվտանգության չափորոշիչները:

Էլեկտրոնային ընտրացուցակ

ePollbook-ը փոխարինում է տպագիր ընտրացուցակին, որը նախկինում օգտագործվում էր ընտրատեղամասերում գրանցման նպատակով: ePollbook-ն անվտանգ մասնավոր ցանցի միջոցով միացված է California նահանգի իրավասու ընտրողների տվյալների բազային (տես բաժին 4-C): Սա ընտրողներին հնարավորություն է տալիս գրանցվել և իրենց քվեարկությունը կատարել վարչաշրջանի ցանկացած ընտրական կենտրոնում: ePollbook-ը թարմացվում է իրական ժամանակում և ցույց է տալիս, թե ընտրողն արդեն քվեարկել է՝ ապահովելով քվեարկության ամբողջությունը: Ի լրումն ePollbook-ը հնարավորություն է տալիս իրավասու ընտրողներին գրանցվել՝ քվեարկելու ցանկացած ընտրական կենտրոնում կամ թարմացնել իրենց գրանցումը:

Փոխգործակցելի քվեաթերթիկի նմուշ (ISB)

ISB-ն նոր հարմարավետ տարբերակ է, որն արագացնում է անձամբ քվեարկելու փորձառությունը: ISB-ն թույլ է տալիս ընտրողին թվային կերպով դրոշմավորել իրենց նմուշ քվեաթերթիկը կայքէջում տեղադրված դիմումի միջոցով, որը հասանելի է վարչության կայքէջում (տես բաժին 1-F): Ընտրություններն ավարտելուց հետո՝ Արագ պատասխանի (QR) ծածկագիրը գեներացվում է՝ ստեղծելով քվեարկման անցաթուղթ, որը կարելի է տպել կամ պահել բջջային սարքում և դրանից հետո այն կարելի է տանել ցանկացած ընտրատեղամաս ու սկանավորել այն BMD-ում՝ օգտագործելով իր ներկառուցված QR ծածկագրի ընթերցող սարքը: Ընտրողի ընտրությունները կներմուծվեն BMD-ում՝ թույլ տալով ընտրողին ևս մեկ անգամ վերանայել իր ընտրությունները և կատարել որևէ տեսակի փոփոխություն նախքան քվեարկելը:

Արդիականացված տարածամկետման համակարգ

Տարածամկետման համակարգը թղթային քվեաթերթիկի սկանավորման և տաբուլյացիայի նորարարական լուծում է, որը նախատեսված է աջակցելու վարչաշրջանի կարիքները՝ մշակելով միլիոնավոր քվեաթերթիկներ: Այն օգտագործում է բարձր արագության սկաներներ՝ որսալու քվեաթերթիկների բարձր ճշգրտության պատկերները և հաղորդագրություն ուղարկելու միջնորդ կառույցին, որն էլ արագ ու ճշգրիտ մշակում է թվային պատկերների մեծ ծավալներ: Թղթային քվեաթերթիկից մինչև թվային պատկեր, ապա վերջնական քվեարկության գրառում՝ հանրագումարն գերում է թե ինչպես է յուրաքանչյուր քվեաթերթիկ ընթերցվում և մշակվում՝ թույլ տալով անհատական քվեաթերթիկների հետևում և վերահսկում, ստուգելով ընտրության արդյունքների ամբողջականությունը և ճշգրտությունը:

Ընտրական կենտրոններ

Ընտրական կենտրոնները տեղակայված կլինեն ամբողջ վարչաշրջանի տարածքում: Դրանք կենթարկվեն համապարփակ հարցումների և գնահատումների՝ հավաստիանալու, որ դրանք համապատասխանում են Հաշմանդամ ամերիկացիների օրենքով (ADA) նախատեսված հասանելիության պահանջներին և որակավորման այլ չափանիշներին ինչպիսիք են կայանման հասանելիությունը տվյալ վայրում, հանրային տրանսպորտի հարմարավետ հասանելիությունը և աշխատանքային ժամերը (չափանիշների ամբողջական ցանկի համար տե՛ս բաժին 2-A-ն):

Բջջային քվեարկության կենտրոնի ծրագիր

Վարչությունը նաև կիրականացնի Բջջային քվեարկության կենտրոնի նոր ծրագիր (MVCP)՝ հանրության համար ավելի ընդլայնելով քվեարկման հնարավորությունները: MVCP-ն կթեթևացնի առկա ընտրատեղամասերը, որոնք կարող են շատ ծանրաբեռնված լինել ու կտրամադրի քվեարկման ծառայություններ այն համայնքներին, որոնք աշխարհագրական տեսանկյունից մեկուսացած են կամ համապատասխանաբար չեն սպասարկվում ստանդարտ ընտրատեղամասի կողմից: Բջջային քվեարկության կենտրոնները կտեղակայվեն ամբողջ վարչաշրջանով մեկ ծրագրված ժամանակացույցով՝ ապահովելու ընդգրկուն քվեարկման ծառայություններ և բարձրացնելու ընտրողի իրազեկվածությունը ընտրման ժամանակահատվածում:

ԲԱԺԻՆ 1 – ԱՅԼ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

Բարձրացնելու Los Angeles վարչաշրջանի ընտրողների իրազեկվածությունը VSAP-ի քվեարկման նոր փորձառության վերաբերյալ՝ վարչությունը իրագործել է համապարփակ, բազմալեզու մարկետինգային և տեղեկատվական քարոզչական միջոցառումների քարոզարշավ, որն իր մեջ ընդգրկում է հեռարձակվող հեռուստատեսությունը, ռադիոն, կայքերի պաստառները և թվային հավելվածները, սոցիալական լրատվության հրապարակումները, գովազդ փոստի միջոցով, էլփոստի ծանուցումները, ավտոմատ հեռախոսազանգերը և տեղեկատվական քարոզչական միջոցառումները: Քարոզարշավը

բաժանվում է բազմակի փուլերի, որոնք կուղարկեն առանձնահատուկ հաղորդագրություններ, թե ինչպես է պետք գրանցվել քվեարկելու համար, ինչպես պահանջել VBM քվեաթերթիկ, ինչպես կապ հաստատել վարչության հետ և ինչպես քվեարկման փորձառությունը կփոխվի VSAP-ի և VCA-ի միջոցով:

Վարչությունն ունի աշխատանքային ընթացիկ հարաբերություններ տարբեր լրատվական ցանցերի հետ և նախատեսում է օգտագործել այս հաստատված ռեսուրսները՝ վարչաշրջանի ներկայիս և ապագա ընտրողներին հաղորդագրությունները տարածելու նպատակով: Վարչությունը նաև առավելագույնս կօգտագործի տեղական նորությունների ցանցերը հեռուստատեսությունում, տպագիր և թվային մամուլում՝ տրամադրելու ընտրությունների վճռական տեղեկություններն իրենց համապատասխան հարթակներում:

Բացի այդ, վարչությունը կշարունակի համագործակցել երկարամյա գործընկերների հետ, ներառյալ CBO-ները, ավագ դպրոցները, համայնքային քոլեջները և համալսարանները: Այս համագործակցությունների միջոցով վարչությունը նոր քվեարկության տարբերակների մասին կբարձրացնի իրազեկվածության մակարդակը, ինչպես նաև կխթանի քաղաքացիական ներգրավվածությունը և ընտրողների մասնակցությունը: CBO-ները վարչությանը տրամադրում են շատ կարևոր աջակցություն, որն անհրաժեշտ է արդյունավետորեն իրազեկելու իրենց համայնքներում, ինչպես օրինակ լեզվական կարիքների ներըմբռնում, համայնքի հավաքատեղիներ և հարցեր/մտահոգություններ, որոնք ազդում են անհատական համայնքների վրա: Նրանք նաև ամբողջ վարչաշրջանով մեկ հասանելիություն են տրամադրում թե՛ պետական, թե՛ մասնավոր հաստատություններին:

1-A ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաղորդակցության անհրաժեշտ եղանակների սահմանման նպատակով՝ վարչությունն օգտագործել է ներքին և արտաքին տվյալները, որպեսզի վարչաշրջանի զանազան համայնքներին արդյունավետ կերպով հասանելի դարձնի տեղեկատվությունը: Վարչությունը կուղարկի բոլոր առաջիկա ընտրությունների, ընտրողի գրանցման և առաջարկվող ծառայություններին վերաբերող վճռական տեղեկատվության նորությունների հաղորդագրությունները: Բոլոր նորությունների հաղորդագրությունները կներառեն կոնտակտային տեղեկություններ, ինչպես օրինակ ընտրողի աջակցության մեր անվճար թե՛ժ հեռախոսագիծը և մեր կայքի հղումը:

Ռադիո և հեռուստատեսություն

Վարչությունը կաշխատի տեղական և շրջանային լրատվամիջոցների հետ՝ համակարգելով հանրությանը հասանելի հարցազրույցները, որոնք կտարածեն ընտրությունների մասին

տեղեկատվությունը և կգովազդեն վարչության միջոցառումները: Ի լրումն, վարչությունը կաշխատի բազմալեզու ռադիոյի և հեռուստատեսության լրատվության գործընկերների հետ՝ ստեղծելու և կառավարելու ուղիղ եթերում հեռարձակվող տեղեկատվական հատվածներ՝ նպատակ ունենալով բարձրացնել իրազեկվածությունը և կրթել բնակիչներին առաջիկա ընտրության և լեզվական ծառայությունների վերաբերյալ: Վարչությունը կաշխատի հետևյալ հիմնական տեղեկատվական միջոցների հետ, սակայն չսահմանափակվելով՝

- ABC
- CBS
- KTLA
- FOX
- NBC
- Telemundo (իսպաներեն-լեզու)
- Univision (իսպաներեն-լեզու)

Ռադիո

Վարչությունը կաշխատի տեղական և շրջանային ռադիոկայանների և տեղեկատվական միջոցների հետ, այդ թվում բազմալեզու տեղեկատվական գործակալություններ՝ պատրաստելով ուղիղ եթերում հեռարձակվող սոցիալական գովազդներ և այլ տեղեկատվական բնույթի հարցազրույցներ: Վարչությունը կաշխատի հետևյալ ռադիո ընկերությունների հետ, սակայն չսահմանափակվելով՝

- iHeart Media
- POWER 106
- Entercom
- Entravision (իսպանախոս)
- Liberman Broadcasting (իսպանախոս)
- KNX
- KPCC
- NPR
- K-ABC
- KFI
- KJLH

Տպագիր լրատվություն

Վարչությունը կաշխատի տեղական և շրջանային լրագրողների և թղթակիցների հետ՝ գովազդելու վարչության իրադարձությունները, համակարգելու հարցազրույցները և տարածելու ընտրության մասին տեղեկությունները, որոնք կարող են հրապարակվել իրենց համապատասխան տեղեկատվական միջոցներով: Վարչությունը կաշխատի հետևյալ տպագիր լրատվական միջոցների հետ, սակայն չսահմանափակվելով՝

- Los Angeles Times
- LA Daily News
- Daily Breeze
- Pasadena Star News
- Long Beach Press-Telegram
- Whittier Daily News
- San Gabriel Valley Tribune
- LA Sentinel
- La Opinion (իսպաներեն-լեզու)
- World Journal (չինարեն-լեզու)
- The Korea Times (կորեերեն լեզու)

Սոցիալական լրատվություն

Վարչությունը կշարունակի օգտագործել սոցիալական լրատվության հարթակները՝ ներգրավելով վարչաշրջանի բնակիչներին: Սա կներառի վճարովի թիրախային գովազդներ և սովորական հրապարակումներ, որոնք քաջալերում են իրավասու բնակիչներին և գրանցված ընտրողներին մասնակցել առաջիկա ընտրությանը: Բոլոր հարթակների համար վարչության օգտանունն է՝ @lacountyrcc: Վարչությունը կշարունակի օգտագործել հետևյալ սոցիալական լրատվական հարթակները, սակայն չսահմանափակվելով՝

- Facebook: [facebook.com/LACountyRRCC](https://www.facebook.com/LACountyRRCC)
- Instagram: @lacountyrcc
- YouTube: lacountyrcc
- Twitter: @LACountyRRCC

Ուղևորություն փոխանակման / Տրանսպորտային ընկերություններ

Վարչությունն ամբողջ վարչաշրջանով մեկ կշարունակի համագործակցել Uber, Lyft, Տրանսպորտի փոխադրման ընկերության (Metro), Los Angeles վարչաշրջանի հանրային աշխատանքների վարչության և այլ տրանսպորտային փոխադրող կազմակերպությունների հետ՝ գովազդելու ընտրողների գրանցումը և տեղեկատվությունը՝ նպատակ ունենալով ընտրատեղամասերին տրամադրել զեղչված/անվճար փոխադրման ծառայություններ:

Կինոթատրոններ

Վարչությունը կհամագործակցի կինոթատրոնների գովազդող ընկերությունների հետ, ինչպես օրինակ National CineMedia-ն և Screen Vision Media-ն են՝ վարչաշրջանով մեկ կինոթատրոններում գովազդներ ցուցադրելու նպատակով:

Ցուցատախտակներ/Տրանսպորտ

Վարչությունը կօգտագործի ավտոբուսների կանգառների և առևտրի կենտրոնների ցուցատախտակները և տրանսպորտային գովազդները բնակիչներին տեղեկացնելու առաջիկա ընտրությունների մասին:

Բջջային հավելվածներ

Գովազդներ բջջային հոսքային հավելվածներում, նորությունների հավելվածներում, և նույնիսկ բջջային հեռախոսների խաղային հավելվածները կօգնեն մեր հաղորդագրությունը տեղ հասցնել մեր ավելի երիտասարդ բնակչությանը: Այս հավելվածներից որոշները ներառում են Pandora և այլ թիրախային բջջային հավելվածներ:

Մարկետինգ Էլփոստի միջոցով

Էլփոստի միջոցով թիրախավորված մարկետինգային քարոզարշավները կօգտագործվեն՝ ուղարկելու ընտրություններին առնչվող նորություններ, տեղեկատվական նյութեր և կայքէջի հղումներ առանձնահատուկ ընտրողներին ամբողջ վարչաշրջանով մեկ:

Երաշխավորումներ

Մեծ հետևորդների բանակ ունեցող ազդեցիկ մարդիկ կօգտագործեն իրենց հարթակները՝ աջակցելով մեր ուղերձը և գովազդելով վարչաշրջանի քվեարկման նոր փորձառությունը: Համախոհ երաշխավորողների հիմնական գործառույթները ներառում են, սակայն չեն սահմանափակվում՝

- Անձնական և գործնական սոցիալական լրատվության հարթակներում հրապարակումներ կատարելը
- Երաշխավորող գովազդներ և հայտարարություններ

- Տեսանյութերի և կրթական նյութերի ստեղծում
- Տեղեկատվական քարոզչական բնույթի միջոցառումների մասնակցություն և գովազդում

Գովազդ փոստի միջոցով

Վարչությունը կօգտագործի փոստի միջոցով կատարվող գովազդները՝ ընտրողներին տեղեկացնելու և կրթելու VSAP-ի և VCA-ի վերաբերյալ: Բացի այդ, տարբեր թիրախավորված փոստային քարոզարշավներ (օրինակ՝ խաչածև քվեարկություն) կստեղծվեն և կմշակվեն առանձին ընտրողների խմբերի համար:

Ապրանքանիշ

Վարչությունը կշարունակի օգտագործել արդեն ճանաչված ապրանքանիշը՝ «Քվեարկության լուծումներ բոլորի համար» և VSAP-ի տառային հապավումը: 2018 թվականին VSAP-ի տարբերանշանին ապրանքային նշան էր շնորհվել: Տարբերանշանի ապրանքային նշանն ավելացնում է վստահություն և ապրանքանիշի ճանաչում, մինչ մենք շարունակում ենք գովազդել և զարգացնել մեր տեղեկատվական քարոզչական աշխատանքները՝ VSAP-ի քվեարկման փորձառության նպատակով:



VSAP-ի եռամսյակային տեղեկագրեր/խորհրդին ներկայացվող հաշվետվություններ

Վարչությունը կշարունակի ուղարկել VSAP-ի եռամսյակային տեղեկագրերը և հաշվետվությունները, որոնք տարածվում են թե՛ արտաքին, թե՛ ներքին շահագրգիռ կողմերի միջև, ինչպես օրինակ Los Angeles վարչաշրջանի շրջանային խորհուրդը, վարչաշրջանի 88 քաղաքները և գործընկեր CBO-ները: Տեղեկագիրը տրամադրում է նորություններ VSAP-ի բոլոր խոշոր հիմնական գործողությունների վերաբերյալ: VSAP-ի եռամսյակային տեղեկագրերը հասանելի են առցանց՝ <https://vsap.lavote.net/reports/>

Յեռակա հասանելի փոստային քվեարկություն

Վարչությունը կտեղեկացնի հանրությանը Յեռակա հասանելի փոստային քվեարկության (RAVBM) հասանելիության մասին՝ տրամադրելով նորությունների հաղորդագրություններ և սոցիալական ցանցերի լրատվություն՝ տեղական, տարածքային և համապետական լրատվամիջոցներին ներկայացնելու համար: Բացի այդ, RAVBM-ի հասանելիության և կիրառման մասին տեղեկություններ կտրամադրվեն բոլոր գրանցված ընտրողներին փոստով առաքվող քվեաթերթիկի նմուշների մեջ, Փոստային քվեարկության (VBM) տեղեկատվական կյուբերում, որոնք ուղարկվում են բոլոր VBM ընտրողներին, Էլփոստի թիրախավորված քարոզարշավի միջոցով, ինչպես նաև կիրառարկվեն մեր կայքէջում՝ lavote.net:


1-B ՓՈՍՏԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ

VCA-ի հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ Los Angeles վարչաշրջանը նաև կխթանի և կընդլայնի VBM-ի տարբերակները: Ընտրողների հետևյալ խմբերի համար վարչությունը բոլոր ընտրողներին կուղարկի VBM-ի քվեաթերթիկ յուրաքանչյուր ընտրությունից առաջ՝


- Նախատեսված բնակավայրերի ընտրողները 500-ից ավելի քիչ գրանցված ընտրողներով
- Օրենսդրական կամ կոնգրեսական շրջանում բնակվող ընտրողները, որոնք մասամբ գտնվում են Los Angeles վարչաշրջանը և սահմանակից վարչաշրջանում՝ ուղարկելով իր բոլոր ընտրողներին VBM-ի քվեաթերթիկներ VCA-ի դրույթներին համաձայն (տես A, B և C քարտեզները)
- Այն ընտրողները, որոնք բնակվում են այնպիսի բնակավայրում, որը կամ 30 րոպեի ճանապարհ է ընտրատեղամասից, կամ որում ամենավերջին նահանգային համընդհանուր ընտրության ժամանակ նախորդ ընտրատեղամասի հեռավորությունը մոտակա ընտրատեղամասից կազմել է 15 մղոն

A քարտեզ


55-րդ նահանգի օրենսդիր մարմնի ընտրությունների ընտրական շրջան



B քարտեզ



C քարտեզ



Վարչությունը կշարունակի գովազդել VBM-ը և տրամադրել կրթական նյութեր VBM-ի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվական թերթիկներ, հաճախակի տրվող հարցեր (FAQ-եր), կրթական բնույթի տեսանյութեր և սոցիալական լրատվության գովազդվող հրապարակումներ, որոնք կտարածվեն և կշրջանառվեն վարչաշրջանի բոլոր ընտրողների շրջանում: Վարչությունը կօգտագործի լրատվական միջոցները VBM-ի ընտրանքների մասին ընտրողներին տեղեկացնելու համար, ներառյալ գովազդելով VBM-ի օգտագործումը, ինչպես պահանջել VBM-ի քվեաթերթիկ, ցուցումներ, թե ինչպես է պետք օգտագործել VBM-ի քվեաթերթիկը և ինչպես կարելի է ստուգել VBM-ի քվեաթերթիկի կարգավիճակը: Բացի այդ բոլոր ընտրողները կշարունակեն հնարավորություն ունենալ գրացնվել որպես VBM-ի մշտական (PVBM) ընտրող, երբ նրանք լրացնեն Ընտրողի գրանցման ձևաթուղթը:

1-C ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրությանը պատշաճ կերպով իրազեկելու և VSAP-ի մասին տեղեկություն տրամադրելու համար՝ վարչությունը կշարունակի աշխատել վարչաշրջանի իր գործընկեր գործակալությունների, այլ պետական գործակալությունների, քաղաքային գրացնման ծառայությունների և CBO-ների հետ: Վարչությունն ստեղծել է մի շարք տեղեկատվական թերթիկներ և պաստառներ՝ նպատակ ունենալով կրթել և տեղեկացնել համայնքին VSAP-ի և VCA-ի վերաբերյալ (տե՛ս կցված օրինակները Հավելվածում): Վարչությունը կանցկացնի ներկայացումներ, անձնակազմի կողմից կազմակերպվող միջոցառումներ, կտրամադրի վերապատրաստում և նյութեր ու կապահովի, որ հանրությանը տրամադրվի գործողությունների հստակ ծրագիրը: Այս կազմակերպություններին տրամադրվող բոլոր նյութերը հանդես կգան VSAP-ի ապրանքանիշի ներքո՝ հավաստիացնելով հանրությանը, որ տեղեկատվությունը համապատասխան և ճշգրիտ է:

Համագործակցություն ամբողջ վարչաշրջանի տարածքում/Շահագրգիռ կողմեր

Տարբեր և մեծածավալ լսարանին տեղեկատվությունը տեղ հասցնելը և կրթելը պահանջում է հավաքական գործընկերություն պետական պաշտոնյաների (ընտրված և չընտրված), կառավարական գործակալությունների, վարչաշրջանի վարչությունների, քաղաքների, առևտրի պալատների և այլ շահագրգիռ կողմերի կողմից: Այս կառույցներն աշխատում են VSAP-ի և VCA-ի միջոցով համախմբված քվեարկման ընթացակարգերի առաջիկա փոփոխությունների մասին կրթելու և իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:

Վարչաշրջանի այլ վարչությունների հետ համագործակցությունը կընդլայնի վարչության կարողությունը՝ հանրությանը տեղեկացնելու և կրթելու համար: Վարչաշրջանի հետևյալ կառույցները նախկինում աջակցել են վարչությանը և այդ կառույցներից որոշները կաջակցեն VSAP-ի ուղերձների և ապրանքանիշի գործողությունների իրականացման հարցում՝

- Գնահատողներ
- Լողափեր և նավահանգիստներ
- Շրջանային խորհուրդ
- Գլխավոր գործադիր գրասենյակ
- Սպառողի և բիզնես հարցեր
- Վարչաշրջանով սփռված հեռահաղորդակցության միջոցներ
- Չբուսայգիներ և ժամանց
- Հանրային գրադարան
- Հանրային սոցիալական ծառայություններ
- Հանրային աշխատանքներ
- Գանձապետ և հարկահավաք
- Աշխատուժի զարգացման, տարեցների հարցերով զբաղվող և համայնքային ծառայություններ

Համայնքային միջոցառումներ

CBO-ի փոխհարաբերությունների և վճարովի լրատվության գործընկերությունների միջոցով վարչաշրջանում հնարավորություն ունենալ հյուրընկալել և համաֆինանսավորել միջոցառումները վարչության համար կստեղծի արժեքավոր հնարավորություն՝ ներգրավելու քվեարկման նոր մոդելին առնչվող մարդկանց ավելի լայն խմբեր: Վարչությունը մի շարք կազմակերպությունների և միջոցառումների համակարգողների հետ ունի երկարամյա հարաբերություններ և շատ հանգստյան օրեր կծախսի, որպեսզի կազմի աղյուսակներ, և հանրությանը տրամադրի ընտրություններին առնչվող անհրաժեշտ նյութերը: Աղյուսակ 1-ն ընդգծում է հիմնական միջոցառումների ընտրանին, որոնց հաճախել է վարչությունն այս տարի և ծրագրում է այցելել 2020 թվականին: Բացի այս միջոցառումներից վարչությունը մասնակցել է մի քանի հարյուր այլ համայնքային միջոցառումների:

Աղյուսակ 1. Խոշոր համայնքային միջոցառումներ

ԱՄՍԱԹԻՎ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ՔԱՂԱՔ
17 փետրվարի 2019 թ.	Հրավառելիք փառատոն	Los Angeles
17 մարտի 2019 թ.	La Feria De Salud	Los Angeles
31 մարտի 2019 թ.	Բալի ծաղկի մշակութային փառատոն 2019	Monterey Park
7 ապրիլի 2019 թ.	Կամբոջիա քաղաքի մշակութային փառատոն	Long Beach
13-14 ապրիլի 2019 թ.	Los Angeles Times-ի գրքերի փառատոն	USC – Los Angeles
20 ապրիլի 2019 թ.	LA կենդանաբանական այգու գարնանամուտին նվիրված միջոցառումների շարք	Los Angeles
5 մայիսի 2019 թ.	VegFest 2019	Encino
24-25 մայիսի 2019 թ.	RuPaul's DragCon	Los Angeles
30 մայիսի 2019 թ.	Հավասարության գագաթնաժողով	Los Angeles
21-22 հունիսի 2019 թ.	BET փորձառություն	Los Angeles
25 հուլիսի 2019 թ.	Շարունակական բարելավման գագաթնաժողով 2019	Montebello
26 հուլիսի 2019 թ.	LA-ի վետերանների ռեսուրս ցուցահանդես 2019	Pomona
24 օգոստոսի 2019 թ.	I Heart Wilmington-ի համայնքային բարեկեցության փառատոն	Wilmington
29 օգոստոսի-22 սեպտեմբերի 2019 թ.	LA վարչաշրջանի տոնավաճառ	Pomona
8 սեպտեմբերի 2019 թ.	Festival De Jalisco	Lynwood
8 սեպտեմբերի 2019 թ.	Մեքսիկայի անկախության շքերթ	East Los Angeles
28-29 սեպտեմբերի 2019 թ.	VSAP-ի փորձնական ընտրություններ	Վարչաշրջանի տարբեր վայրերում
19 հոկտեմբերի 2019 թ.	Taste of Soul	Crenshaw
3 նոյեմբերի 2019 թ.	Dia de Los Muertos	East Los Angeles

VSAP-ի պրեզենտացիաներ

Վարչությունը շարունակում է քաղաքային խորհուրդներին, ընտրված պաշտոնյաներին, կառավարական գործակալություններին, CBO-ներին, քաղաքական կազմակերպություններին և այլ շահագրգիռ կողմերին անձամբ տրամադրել VSAP-ի մի շարք պրեզենտացիաներ ամբողջ վարչաշրջանի տարածքում: Պրեզենտացիաների շրջանակը ներառում է՝

- VSAP-ի և VCA-ի մասին ամփոփ տեղեկություններ
- BMD-ի և VSAP-ի այլ բաղադրիչների բացատրություն
- Ընտրատեղամասի վայրի ընտրման գործընթացի ուսումնասիրում
- Տեղեկատվական քարոզչական և այլ գործընկերային հնարավորություններ
- Տեղեկատվական նյութեր, որոնք տուն են առաքվում

Առ այսօր վարչությունը 85 պրեզենտացիա է տրամադրել կառավարական գործակալություններին և 179 պրեզենտացիա՝ CBO-ներին: Վարչությունը կշարունակի օգտագործել VSAP-ի պրեզենտացիաները՝ վարչաշրջանի բնակիչների և այլ շահագրգիռ կողմերի հետ անմիջապես հաղորդակցվելու նպատակով:

Փորձական ընտրություններ

Վարչությունը կազմակերպել էր փորձական ընտրություններ 28-29 սեպտեմբերի 2019 թ. վարչաշրջանում տեղակայված 50 ընտրատեղամասում: Այս միջոցառման նպատակն էր բարձրացնել հանրության իրազեկվածության մակարդակը և ավելացնել VSAP-ի հանդեպ նրանց ծանոթությունը: Չվարձայի միջոցառում էր, բաց հանրության համար և այցելուներին տրամադրեց ընտրատեղամաս այցելելու հնարավորություն, ինչպես նաև իրական փորձառություն BMD-ի օգտագործմամբ (գովազդային նյութերը կցված են Յավելվածում): Բոլոր այցելողները կարող էին փորձական ընտրության քվեարկություն կատարել և ստանալ VSAP-ի մասին ամբողջական փորձառություն: Մասնակցեցին նաև հայտնի դեմքեր, տեղական ռադիոկայաններ և տրամադրվեցին մրցանակներ ու սննդի հյուրասիրություններ՝ հանրության ուշադրությունը հրավիրելու նպատակով: Միջոցառումը հյուրընկալեց ու միջոցառմանը քվեարկեց հանրության ավելի քան 5800 անդամ:

Միջոցառման լրատվական լուսաբանումը նույնպես դրական էր, և վարչությունը օգուտ քաղեց համայնքի այդ մասնակցությունից և հնարավորություն ունեցավ փորձարկելու գործընթացները և ընթացակարգերը մասշտաբայնության և արդյունավետության տեսանկյունից 2020 թվականի ընտրություններից բավականաչափ ժամանակ առաջ: Միջոցառման մասին տեղեկացան ոչ միայն նրանք, ովքեր այցելեցին այդ Փորձական ընտրությունների վայրերը: Սոցիալական լրատվության կոնտակտները նույնպես շատ էական էին, և վարչությունը հնարավորություն ունեցավ ուղիղ կապ հաստատել ավելի քան 1,5 միլիոն ընտրողների հետ իրենց էլփոստի կոնտակտների, նշանակալի լրատվական միջոցների ներգրավվածության և այլ տեղեկատվական քարոզչական միջոցառումների միջոցով:

Ցուցադրության կենտրոններ

Փորձնական ընտրություններից հետո վարչությունը կհյուրընկալի Ցուցադրության (Demo) կենտրոններ ամբողջ վարչաշրջանի տարածքով մեկ 2019 թվականի հոկտեմբերից մինչև 2020 թվականի հունվար՝ նպատակ ունենալով շարունակել իր հանրային ներգրավվածությունը և կրթական քարոզարշավը VSAP-ի համար: Ցուցադրության կենտրոնները հանրությանը թույլ կտան իրենց փորձով հասկանալ, թե ինչպիսին է լինելու ընտրատեղամասը և հնարավորություն կտան գործնականում սովորել BMD-ի և VSAP-ի այլ բաղադրիչները: Առնվազն տաս ցուցադրության կենտրոն կտեղակայվի վարչաշրջանի ռազմավարական տեսանկյունից կարևոր վայրերում՝ ցանկացած ժամանակ ունենալով տարածքներ ամեն հինգ վերահսկողական շրջանում (ցուցադրության կենտրոնների գտնվելու վայրերի համար՝ տե՛ս հավելվածին կից ներկայացված ցուցադրական կենտրոնի թռուցիկները):

Ընտրատեղամասի տեղակայման ծրագիր

Ընտրատեղամասի տեղակայման ծրագիրը (VCPD) մեկնարկել էր վարչության կողմից՝ համալրելու VSAP նախաձեռնությունը, փոխակերպել ընտրողի փորձառությունը հատկապես ընտրատեղամասերի տեղակայվածության առումով: Մեծամասամբ VCPD-ի միջոցով վարչաշրջանը փորձում էր իրականացնել VCA-ը՝ օգտագործելով օրենսդրական պարամետրերը կառուցելու հավանական ընտրատեղամասերի տվյալների բազա համայնքների ընդարձակ ներգրավվածությամբ:

Վարչությունը ընտրատեղամասերի որոշման այս համապարփակ գործողության շրջանակում համագործակցում էր PlaceWorks-ի հետ: Այն ներառում էր աշխարհատարածական վերլուծություն, կառույցների գույքագրում, իրականացման վայրի նախնական գնահատումներ և հուսալի համայնքի ու շահագրգիռ կողմերի ներգրավվածություն: Ընտրողների նախասիրությունները հասկանալու նպատակով հարցումներ և ֆոկուս խմբեր են անցկացվել: Հանրային օժանդակություն և ներգրավվածություն ապահովելու նպատակով՝ վարչությունն անցկացրել է հասարակության անդամների միջև անցկացվող համայնքային հանդիպումների երկու փուլ (լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Աղյուսակ 2-ը և 3-ը): Բացի այդ, առցանց ինտերակտիվ պորտալ էր մշակվել տրամադրելու այդ գործընթացում օգտագործվող տվյալների մասին տեղեկություններ և տրամադրելու հարմարավետ մեթոդ համայնքին, որով նրանք կարող են հավանական ընտրատեղամասերի և VBM-ի տեղամասերի մասին իրենց առաջարկությունները և կարծիքները տրամադրել:

LOS ANGELES ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Հասարակության անդամների միջև անցկացվող համայնքային հանդիպումները ներառեցին հանդիպումներ, որոնք անկացվեցին մասնավորապես հաշմանդամություն և լեզվական փոքրամասնություն ունեցող համայնքների անձանց հետ: Այս հանդիպումներն անցկացվեցին բացառելի VCA-ը, VSAP նախաձեռնությունը, և թե ինչպես նոր մոդելը կավելացնի ընտրողի ճկունությունը՝ քվեարկելու վարչաշրջանի ցանկացած ընտրատեղամասում շուրջ 11-օրյա ժամկետում:



Հասարակության անդամների միջև անցկացվող համայնքային հանդիպումների առաջին փուլը հյուրընկալվեց SBCC Thrive LA-ի Long Beach-ում, CA 5 դեկտեմբերի 2018 թ.

Համայնքային հանդիպումների յուրաքանչյուր փուլն ուներ շատ առանձնահատուկ շեշտադրում: Առաջին փուլը կենտրոնացած էր բացառելի VCA-ը և ընտրատեղամասի նոր մոդելը և փորձում էր հասարակության ներգրավվածությամբ որոշել ընտրատեղամասերի վայրերը: Այն նպատակ ուներ սահմանելու այն կառույցները, որոնք հասարակության կարծիքով ամենահարմար վայրերն էին իրենց համայնքում և ամբողջ վարչաշրջանի տարածքում: Հանդիպումների երկրորդ փուլը կենտրոնացած էր հավաստիանալու, որ մասնակիցները հասկացել են VSAP-ի նոր փորձառության հետ ուղեկցվող բոլոր փոփոխությունները և տրամադրելու խորհուրդ տրվող (եյնելով հանդիպումների առաջին փուլից) ընտրատեղամասային կառույցների և VBM-ի տեղամասերի ցանկը: Մասնակիցներին տվյալները ցուցադրվում էին տեսողական միջոցներով՝ օգտագործելով պարզ գրաֆիկաներ և քարտեզներ: Մասնակցիները ևս մեկ անգամ կարողացան վարչությանը տրամադրել իրենց հետադարձ կապը՝ օգտագործելով VCPP-ի առցանց պորտալը կամ մեկնաբանությունների և առաջարկությունների քարտերը:



Հասարակության անդամների միջև համայնքային հանդիպումների երկրորդ փուլը հյուրընկալվեց NALEO կրթական հիմնադրամում՝ La Verne, CA, 22 մայիսի 2019 թ.

Շարունակելու իր համագործակցությունը համայնքի հետ՝ վարչությունը գործակցում էր 30 CBO-ների հետ՝ նպատակ ունենալով հեշտացնել համայնքային հանդիպումները: Այս կազմակերպությունները համայնքում իրենց կայուն ներկայությունն ունեն, կապեր համայնքային առաջնորդների և կազմակերպիչների հետ, ինչպես նաև մշակութային ներըմբռնում տեղական համայնքային պայմանների և մտահոգությունների վերաբերյալ: Բոլոր խմբերը VSAP-ի և VCA-ի բովանդակության վերաբերյալ ուսուցում, ինչպես նաև հանդիպումների նախապատրաստման համար տարբեր տեղեկատվական քարոզչական ռազմավարություններ ստացան: Այս գործընկերությունը նախատեսված էր հզորացնելու տեղական CBO-ները, որպեսզի կարողանա առաջնորդել քննարկումները և ներգրավել վարչաշրջանի ընտրողներին՝ ընտրական մոդելի բարելավումների և ընտրողներին հասանելի նոր տարբերակների զանազանության մասին իրազեկվածություն տրամադրելով:

Վարչաշրջանում հասարակության անդամների շրջանում համայնքային հանդիպումները խթանելու նպատակով՝ վարչությունը պատրաստել էր տեղեկատվական քարոզչական նյութեր հանդիպումների յուրաքանչյուր փուլին բնորոշ: Այս տեղեկատվական քարոզչական նյութերը, որոնք թարգմանվել էին բոլոր օժանդակ լեզուներով, տարածվել էին CBO-ների, վարչաշրջանի գործակալությունների, քաղաքի գործավարների և կառավարական այլ գործակալությունների ու համայնքային շահագրգիռ կողմերի միջև՝ ներգրավելու մասնակցությունը տարբեր հանդիպումներին:

LOS ANGELES ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Վարչությունը և CBO-ները ջանասիրաբար աշխատեցին՝ խթանելու հանդիպումները և ներգրավելու մասնակիցների տարբեր ժողովրդագրական կառույցներ: Վարչությունը նաև օգտագործեց հաղորդակցության տարբեր այլ միջոցներ՝ մասնակիցների այցելությունը խթանելու նպատակով: Ընդհանուր առմամբ, Էլիոստի միջոցով կապ էր հաստատվել ավելի քան 1,5 միլիոն մարդու հետ, 108639 մարդ էր տեղեկացել այդ մասին և 348950 դիտում էր ունեցել Facebook-ի միջոցառումների գովազդների միջոցով, 797704 դիտում էր ունեցել Nextdoor-ի միջոցով (հավելված, որը վարչաշրջանի տարածքում համայնքներին հաղորդագրություններ է ուղարկում): Շուրջ 2300 այցելու անձամբ մասնակցեց 67 համայնքային հանդիպման, և վարչությունը համայնքային հանդիպումներին ստացած առաջարկությունների քարտերն օգտագործեց՝ տեղեկացնելու 2000 հավանական ընտրատեղամասերի վայրերի տվյալների բազայի ստեղծման իր գործընթացի մասին:



Հասարակության անդամների միջև համայնքային հանդիպումների երկրորդ փուլը հյուրընկալվեց Disabled Resource Paper-ի կողմից Long Beach-ում, CA 3 մայիսի 2019 թ.

LOS ANGELES ԿԱՐՉԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Առաջին փուլի տեղեկատվական թերթիկի օրինակ

VOTING SOLUTIONS FOR ALL PEOPLE

LOS ANGELES COUNTY'S NEW VOTER EXPERIENCE!
SUGGEST VOTE CENTER LOCATIONS NEAR YOU!

In 2020, where will you choose to vote?

Where you shop? Where you work? Where you study? Where you live?

WHEN YOU WANT
Vote in person up to 11 days or drop off your ballot up to 29 days before Election Day.

WHERE YOU WANT
LA County voters can vote at any of the conveniently located Vote Centers throughout the County.

HOW YOU WANT
New accessible voting equipment at Vote Centers. Translated voting materials and assistance available in 13 languages.

ATTEND A COMMUNITY MEETING!
Monday
December 10, 2018
5:00pm - 7:00pm
South Baylo University
2727 West 6th Street
Los Angeles, CA 90057

THIS MEETING WILL COVER:
LA Neighborhoods: Adams-Normandie, Angelino Heights, Chinatown, City Central, County Club Park, Downtown, East Hollywood, Echo Park, Elysian Park, Hancock Park, Harvard Heights, Historic Filipinotown, Hollywood, Hollywood Hills, Jefferson Park, Koreatown, Little Bangladesh, Little Tokyo, Los Feliz, Melrose, Pico-Union, Silverlake, Temple-Beaumont, Thai Town, University Park, Victoria Park, Westlake, Wholesale District, Wilshire Center

CAN'T ATTEND THIS MEETING?
Visit VSAP.LAVOTE.net for the full list of meetings.

Los Angeles County seeks to make these meetings accessible to those who wish to participate. Simultaneous interpretation will be provided in Korean. Language assistance will be available in Spanish.

If you need special assistance to participate in this meeting or an alternative format for the meeting materials, please contact Julia Keh at jkeh@rrcc.lacounty.gov at least 5 working days before the meeting.

For more information, visit VSAP.LAVOTE.net

모든 사람들을 위한 투표 솔루션

LOS ANGELES 카운티의 새로운 유권자 경험!
가까운 투표 센터 위치를 제안하십시오!

2020년에 어디에서 투표하실건가요?

어디서 쇼핑하시나요? 어디서 일하시나요? 어디서 공부하시나요? 어디서 살하시나요?

당신이 원하는 때에
최대 투표일 11일 전부터 직접 투표 하시거나 29일 전부터 우편 투표를 제출할 수 있습니다.

당신이 원하는 곳에서
LA 카운티 유권자는 카운티 전역의 편리한 투표 센터에서 투표 할 수 있습니다.

당신이 원하는 방법으로
투표 센터에서 이용할 수 있는 새로운 투표 장비가 있습니다. 번역된 투표 자료 및 지원은 13개 언어로 제공됩니다.

이 회의는 다음을 다룹니다:
LA 인근: Adams-Normandie, Angelino Heights, Chinatown, City Central, County Club Park, Downtown, East Hollywood, Echo Park, Elysian Park, Hancock Park, Harvard Heights, Historic Filipinotown, Hollywood, Hollywood Hills, Jefferson Park, Koreatown, Little Bangladesh, Little Tokyo, Los Feliz, Melrose, Pico-Union, Silverlake, Temple-Beaumont, Thai Town, University Park, Victoria Park, Westlake, Wholesale District, Wilshire Center

커뮤니티 회의에 참석하십시오!
월요일
2018년 12월 10일
오후 5:00 - 오후 7:00
South Baylo University
2727 West 6th Street
Los Angeles, CA 90057

Los Angeles 카운티는 이러한 회의에 참여를 원하는 사람들이 이용가능 하도록 노력하고자 합니다. 동시 통역은 한국어로 제공됩니다. 스페인어로 언어 지원이 가능합니다. 이 회의에 참석하는데 특별한 도움이 필요하거나 회의 자료의 다른 형식이 필요한 경우 근무일 기준 회의 예정일보다 최소 5일전에 jkeh@rrcc.lacounty.gov로 Julia Keh에게 연락하십시오.

더 많은 정보를 원하시면 VSAP.LAVOTE.net 을 방문하십시오

Առաջին փուլի սոցիալական լրատվության հրապարակման օրինակ

VSAP.LAVOTE.net

LOS ANGELES COUNTY'S NEW VOTER EXPERIENCE!
SUGGEST VOTE CENTER LOCATIONS NEAR YOU!

In 2020, where will you choose to vote?

Where you play? Where you work? Where you study? Where you shop?

ATTEND A COMMUNITY MEETING!
Wednesday
January 9, 2019
7:00pm - 9:00pm
La Crescenta County Library
2809 Foothill Boulevard
La Crescenta, CA 91214

CAN'T ATTEND THIS MEETING?
Visit VSAP.LAVOTE.NET for additional meeting dates and locations across the County.

VOTING SOLUTIONS FOR ALL PEOPLE

VSAP.LAVOTE.net

LOS ANGELES ԿԱՐՉԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ
ԱՆՈՒՆԱՐԿԵՐ ԵՆԸ ԱՆՈՏԱԿԱՆ ԻՆՎԵՐՎՈՐՅԱՆ ՎԵՏՆԵՐՈՒ ԿԱՅԵՐԸ

2020 թ.-ին, որտեղից դուք կվոտեք ըզկարկություն կատարել

Where you play? Where you work? Where you study? Where you shop?









ՀԱՏԱԽԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

Չրեկշարքի 9 Գոթիլլ Բուլեվարի 2019 թ. 19:00 - 20:00
La Crescenta County Library
2809 Foothill Boulevard
La Crescenta, CA 91214

ՅԵՄ ԿԵԼԵՐԻ ԱՆՈՒՆԱՐԿԵՐ ԱՅՄ ԹՅՆԻՔԻՆԸ
Կարողանալով լրատվությունը ընդունել որքան և վայելել տեղեկատվությունը, խնայեք VSAP.LAVOTE.NET

ԲԿԵՄԱԿՄԱՆ ԼՈՒԹՈՒՄՆԵՐ ԲՈՂՈՒԻ ՀԱՄԱՐ

Երկրորդ փուլի տեղեկատվական թերթոնի օրինակ

<p> VOTING SOLUTIONS FOR ALL PEOPLE </p> <p>LEARN ABOUT LA COUNTY'S VOTE CENTERS AND THE NEW VOTING EXPERIENCE!</p>	<p> SOLUCIONES DE VOTACIÓN PARA TODA LA GENTE </p> <p>¡APRENDA SOBRE LOS CENTROS DE VOTACIÓN DEL CONDADO DE LOS ANGELES Y LA NUEVA EXPERIENCIA DE VOTACIÓN!</p>
<p>ATTEND A COMMUNITY MEETING!</p> <p>Friday, June 7, 2019 6:00pm - 8:00pm Chimbole Cultural Center Manzanita Ballroom 38350 Sierra Highway Palmdale, CA 93550</p> <p>FOCUS AREAS: Cities: Lancaster, Palmdale Unincorporated LA County: Acton, Agua Dulce, Anaverde, Bouquet Canyon, Del Sur, Desert View Highlands, Elizabeth Lake, Leona Valley, North Lancaster, Palmdale, Quartz Hill, White Fence Farms</p> <p><small>Can't attend this meeting? Visit VSAP.lavote.net for a full meeting schedule.</small></p>	<p>¡ASISTA A UNA JUNTA COMUNITARIA!</p> <p>Viernes, 7 de junio de 2019 6:00pm - 8:00pm Chimbole Cultural Center Manzanita Ballroom 38350 Sierra Highway Palmdale, CA 93550</p> <p>ÁREAS DE ENFOQUE: Ciudades: Lancaster, Palmdale Áreas no incorporadas del condado: Acton, Agua Dulce, Anaverde, Bouquet Canyon, Del Sur, Desert View Highlands, Elizabeth Lake, Leona Valley, North Lancaster, Palmdale, Quartz Hill, White Fence Farms</p> <p><small>¿No puede asistir a esta junta? Visite VSAP.lavote.net para una agenda completa de juntas.</small></p>
<p>HOW WILL VOTING CHANGE IN 2020?</p> <div style="display: flex; justify-content: space-around;"> <div data-bbox="292 756 406 882">  <p>INNOVATIVE TECHNOLOGY New accessible voting equipment designed by LA County voters to meet all of their needs.</p> </div> <div data-bbox="568 756 698 882">  <p>CONVENIENT VOTE CENTERS LA County voters can vote at any vote center throughout the County over an 11-day voting period.</p> </div> </div> <p><small>Los Angeles County seeks to make these meetings accessible to those who wish to participate. Simultaneous translation will be provided in Spanish. If you need special assistance to participate in this meeting or an alternative format for the meeting materials, please contact Julia Keh at jkeh@rrcc.lacounty.gov at least 5 working days before the meeting.</small></p> <p><small>For more information, visit VSAP.lavote.net</small></p>	<p>¿CÓMO CAMBIARÁ LA VOTACIÓN EN 2020?</p> <div style="display: flex; justify-content: space-around;"> <div data-bbox="893 756 1023 882">  <p>TECNOLOGÍA INNOVADORA Nuevo equipo de votación accesible diseñado por los electores del Condado de Los Angeles para satisfacer todas sus necesidades.</p> </div> <div data-bbox="1185 756 1315 882">  <p>CENTROS DE VOTACIÓN CONVENIENTES Los electores del Condado de Los Angeles pueden votar en cualquier centro de votación en todo el Condado durante un período de votación de 11 días.</p> </div> </div> <p><small>El Condado de Los Angeles procura hacer estas juntas accesibles a todos aquellos que deseen participar. Se proporcionará interpretación simultánea en español. Si usted necesita asistencia especial para participar en esta junta o un formato alternativo para los materiales de la junta, comuníquese con Julia Keh en jkeh@rrcc.lacounty.gov al menos 5 días antes de la junta.</small></p> <p><small>Para más información, visite VSAP.lavote.net</small></p>

Աղյուսակ 2. Los Angeles վարչաշրջանի Գրանցող-Արձանագրություն Պահող/Վարչաշրջանի Քարտուղար Ընտրատեղամասերի տեղակայման ծրագիր (VCPP)				
Համայնքային հանդիպումների առաջին շրջան				
Հանդիպման օր և ժամ	Հանդիպման վայր	Համընթաց թարգմանությո ուն և/կամ լեզվական օգնություն	Առաջատար կազմակերպու յուն	Հիմնական ոլորտներ
Ուրբաթ, 16 նոյեմբերի 2018 թ. Երեկոյան 6:30- 8:30	Salvation Army 736 East Compton Blvd Compton, CA 90221	Իսպաներեն	SBCC Thrive LA	Քաղաքներ` Carson, Compton, Gardena, Long Beach, Paramount LA անկախ վարչաշրջան` Athens Village, East Gardena, East Rancho Dominguez, Rancho Dominguez, Rosewood, West Carson, West Rancho Dominguez, Willowbrook LA թաղամասեր` Century Palms, Cove, Harbor Gateway
Շաբաթ, 17 նոյեմբերի 2018 թ. Ցերեկը 2:30- 4:30	Petit Park Granada Hills հանգստի կենտրոն 16730 Chatsworth Street Granada Hills, CA 91344	Կիրառելի չէ	California Common Cause/Empower LA	Քաղաքներ` Santa Clarita LA անկախ վարչաշրջան` Oat Mountain, Stevenson Ranch, Twin Lakes LA թաղամասեր` Chatsworth, Granada Hills, North Hills, Northridge, Porter Ranch
Չորեքշաբթի 28 նոյեմբերի 2018 թ. Երեկոյան 6:00-8:00	Pacoima քաղաքապետար անի լրատվական սենյակ 13520 Van Nuys Blvd Pacoima, CA 91331	Իսպաներեն	Pacoima Beautiful	Քաղաքներ` San Fernando LA անկախ վարչաշրջան` Kagel, Lopez Canyons LA թաղամասեր` Arleta, Granada Hills, Lake View Terrace, Mission Hills, North Hills, Pacoima, Panorama City, Sun Valley, Sylmar
Հինգշաբթի, 29 նոյեմբերի 2018 թ. Երեկոյան 6:00-8:00	Mt. San Antonio քոլեջ Feddersen համերգասրահ 1100 North Grand Ave Walnut, CA 91789	Իսպաներեն	Ասիացի ամերիկացիների ինքնազարգացմա ն կենտրոն (Center for Asian Americans United for Self Empowerment CAUSE)	Քաղաքներ` Azusa, Covina, City of Industry, Diamond Bar, Glendora, La Puente San Dimas, Walnut, West Covina, LA անկախ վարչաշրջան` Avocado Heights, Azusa, Charter Oak, Hacienda Heights, North Whittier, Rowland Heights, San Jose Hills, Valinda, Walnut, West Puente Valley LA թաղամասեր` Highland Park

<p align="center">Աղյուսակ 2. Los Angeles վարչաշրջանի Գրանցող-Արձանագրություն Պահող/Վարչաշրջանի Քարտուղար Ընտրատեղամասերի տեղակայման ծրագիր (VCPP)</p> <p align="center">Համայնքային հանդիպումների առաջին շրջան</p>				
Հանդիպման օր և ժամ	Հանդիպման վայր	Համընթաց թարգմանություն և/կամ լեզվական օգնություն	Առաջատար կազմակերպություն	Հիմնական ոլորտներ
Հինգշաբթի, 29 նոյեմբերի 2018 թ. Երեկոյան 6:00-8:00	Los Angeles հրշեջ ծառայություն 7063 Laurel Canyon North Hollywood, CA 91605	Իսպաներեն	California Common Cause/Empower LA	Քաղաքներ` Burbank LA անկախ վարչաշրջան` Universal City LA թաղամասեր` Hollywood Hills, North Hollywood, Shadow Hills, Sherman Oaks, Studio City, Sun Valley, Toluca Lake, Toluca Terrance, Toluca Woods, Valley Village
Շաբաթ, 1 դեկտեմբերի 2018 թ. Առավոտյան 10:00-12:00	Westwood հանգստի կենտրոն 1350 South Sepulveda Blvd Los Angeles, CA 90025	Կիրառելի չէ	California Common Cause/Empower LA	Քաղաքներ` Malibu, Santa Monica LA անկախ վարչաշրջան` Santa Monica Mountains, West Los Angeles LA թաղամասեր` Bel Air, Beverly Crest, Brentwood, Century City, Mandeville Canyon, Mar Vista, Pacific Palisades, Palisades Highlands, Palms, Rancho Park, Venice
Երկուշաբթի, 3 դեկտեմբերի 2018 թ. Երեկոյան 6:00-8:00	Sherman Oaks East Valley մեծահասակների կենտրոն շենք A 5056 Van Nuys Blvd Sherman Oaks, CA 91403	Իսպաներեն	California Common Cause	LA թաղամասեր` Arleta, Encino, Lake Balboa, North Hills, North Hollywood, Panorama City, Sherman Oaks, Sun Valley, Valley Glen, Van Nuys
Երեքշաբթի, 4 դեկտեմբերի 2018 թ. Երեկոյան 6:00-8:00	Albert O. Little համայնքակենտրոն 18750 Clarkdale Ave Artesia, CA 90701	Իսպաներեն Հնդկերեն	Ասիացի ամերիկացիների ինքնազարգացման կենտրոն	Քաղաքներ` Bellflower, Cerritos, Downey, Hawaiian Gardens, Lakewood, Long Beach, Norwalk, Paramount LA անկախ վարչաշրջան` Cerritos, Long Beach, Lakewood

<p align="center">Աղյուսակ 2. Los Angeles վարչաշրջանի Գրանցող-Արձանագրություն Պահող/Վարչաշրջանի Քարտուղար Ընտրատեղամասերի տեղակայման ծրագիր (VCPP)</p> <p align="center">Համայնքային հանդիպումների առաջին շրջան</p>				
Հանդիպման օր և ժամ	Հանդիպման վայր	Համընթաց թարգմանությո ուն և/կամ լեզվական օգնություն	Առաջատար կազմակերպու թյուն	Հիմնական ոլորտներ
Չորեքշաբթի, 5 դեկտեմբերի 2018 թ. Ցերեկը 4:00- 6:00	Long Beach պոլիտեխնիկակա ն ավագ դպրոց 1600 Atlantic Ave Long Beach, CA 90813	Իսմերեն Իսպաներեն	SBCC, Thrive LA	Քաղաքներ` Lakewood, Long Beach, Signal Hill LA թաղամաս` Wilmington
Հինգշաբթի, 6 դեկտեմբերի 2018 թ. Երեկոյան 6:00-8:00	Redondo Beach հանրային գրադարան 303 North Pacific Coast Highway Redondo Beach, CA 90277	Իսպաներեն Ճապոներեն	California Common Cause	Քաղաքներ` El Segundo, Gardena, Hawthorne, Hermosa Beach, Inglewood, Lawndale, Manhattan Beach, Palos Verdes Estates, Redondo Beach, Torrance LA անկախ վարչաշրջան` Del Aire, El Camino Village, Harbor Gateway, Lennox, Hawthorne, Wiseburn LA թաղամասեր` Harbor Gateway
Շաբաթ, 8 դեկտեմբերի 2018 թ. Առավոտյան 10:00-12:00	Weingarten East Los Angeles YMCA 2900 Whittier Blvd Los Angeles, CA 90023	Իսպաներեն	NALEO կրթական հիմնադրամ	Քաղաքներ` Alhambra, Commerce, Monterey Park, South Pasadena LA անկախ վարչաշրջան` City Terrace, East Los Angeles LA թաղամասեր` Boyle Heights, El Sereno, Highland Park, Lincoln Heights, Mt. Washington, Wholesale District, University Hills
Երկուշաբթի, 10 դեկտեմբերի 2018 թ. Երեկոյան 5:00-7:00	South Baylo համալսարան 2727 West 6th St Los Angeles, CA 90057	Կորեերեն Իսպաներեն	Կորեամերիկյան կոալիցիա (Korean American Coalition) <i>*Լրացուցիչ հանդիպում ուսումնական տարածք 4-ում</i>	LA թաղամասեր` Adams-Normandie, Angelino Heights, Chinatown, City Central, County Club Park, Downtown, East Hollywood, Echo Park, Elysian Park, Hancock Park, Harvard Heights, Historic Filipinotown, Hollywood, Hollywood Hills, Jefferson Park, Koreatown, Little Bangladesh, Little Tokyo, Los Feliz, Melrose, Pico-Union, Silverlake, Temple-Beaudry, Thai Town, University Park, Victoria Park, Westlake, Wilshire Center

Աղյուսակ 2. Los Angeles վարչաշրջանի Գրանցող-Արձանագրություն Պահող/Վարչաշրջանի Քարտուղար Ընտրատեղամասերի տեղակայման ծրագիր (VCPP)				
Համայնքային հանդիպումների առաջին շրջան				
Հանդիպման օր և ժամ	Հանդիպման վայր	Համընթաց թարգմանություն և/կամ լեզվական օգնություն	Առաջատար կազմակերպություն	Հիմնական ոլորտներ
Երեքշաբթի, 11 դեկտեմբերի 2018 թ. Երեկոյան 6:00-8:00	Inglewood քաղաքապետարանի համայնքային հանդիպումների սենյակ A 1 West Manchester Blvd Inglewood, CA 90302	Իսպաներեն	California Common Cause	Քաղաքներ` Culver City, El Segundo, Hawthorne, Inglewood LA անկախ վարչաշրջան` Ladera Heights, Lennox, Marina del Rey LA թաղամասեր` Baldwin Hills, Del Rey, Hyde Park, Marina Peninsula, Palms, Playa Del Rey, Playa Vista, Venice, View Heights, Westchester, Windsor Hills
Լոս Անջելեսի վարչաշրջանը հանրությանը ներգրավվել է նախագծի սկզբից՝ սկսելով մարդու վրա հիմնված նախագծման գործընթացից, որը հնարավորություն է տալիս տարբեր ծագում և կարիքներ ունեցող ընտրողներին տրամադրել հետադարձ կապ, որը կօգտագործվի նոր Քվեաթերթիկների նշման սարքերի հատուկ տեխնոլոգիական նախագծման տարրերի մասին տեղեկացման համար: Ծրագրի ընթացքում հասարակության ներգրավվածությունը շարունակվեց՝ օգնելու համար գտնել հնարավոր ընտրատեղամասերի տեղանքները և նպաստեց ընտրողների հետաքրքիր նոր փորձառության զարգացմանը:

Քվեաթերթիկների նշման սարք

Քվեաթերթիկների նշման սարքը (Ballot Marking Device, BMD) ձայները գրանցելու նոր վերամշակված մեթոդ է, որը փոխարինում է InkaVote համակարգը: Սարքը պարունակում է ժամանակակից կարգավորելի սենսորային էկրան՝ դյուրին օգտագործման թղթի քվեաթերթիկ ապահովելու համար: Քվեաթերթիկները կարող են ընթերցվել կամ լսվել 13 լեզվով, ներկատուցված ականջակալները մատչելի և անհատական քվեարկության փորձ են ապահովում բոլորի համար: Անկախ քվեարկության փորձ ձեռք բերելու համար մատչելի հնարավորությունները ներառում են տառատեսակի չափը, գույնը և հակադրությունը կարգավորելու և էկրանի անկյունը թեքելու հնարավորությունը, իսկ ինտեգրված քվեատուփը պաշտպանում է ընտրողների գաղտնիությունը: BMD-ն ինքնուրույն սարք է, որը միացված չէ համացանցին կամ որևէ այլ ցանցի: Քվեարկության ընտրությունը մուտքագրելուց հետո BMD-ն տպում է թղթե քվեաթերթիկ, որը ընտրողի կողմից կարող է ֆիզիկապես ստուգվել, նախքան քվեարկելը: Թղթե քվեաթերթիկն ապահով կերպով պահվում է սարքի ներսում գտնվող Ինտեգրված քվեատուփի մեջ: Սա վերացնում է BMD-ից առանձնացված կենտրոնական քվեատուփի մեջ թղթե քվեաթերթիկի գցման լրացուցիչ քայլը:

Ինտերակտիվ նմուշ-քվեաթերթիկ

Ընտրողները հնարավորություն ունեն դիտելու և նշելու իրենց նմուշ-քվեաթերթիկը բջջային սարքում կամ համակարգչում՝ ցանկացած վայրում,

ցանկացած պահի: Ընտրություն կատարելուց հետո Ինտերակտիվ նմուշ-քվեաթերթիկը (Interactive Sample Ballot, ISB) ստեղծում է Ընտրական անցաթուղթ: Տեղամասային քվեարկության գործընթացը արագացնելու նպատակով Ընտրական անցաթուղթը կարող է տպվել կամ պահպանվել բջջային սարքում: BMD-ում տեղադրված է ներկատուցված QR կոդ ընթերցող, որն ընտրողին հնարավորություն է տալիս սկանավորել Ընտրական անցաթուղթը և ներմուծել քվեաթերթիկի ընտրությունները: Այնուհետև, նախքան քվեարկելն, ընտրողը կարող է ստուգել կամ փոփոխություններ կատարել իր ընտրության մեջ:

Էլեկտրոնային ընտրագրքեր

Էլեկտրոնային ընտրագրքերը հնարավորություն կտա ընտրողներին քվեարկել Լոս Անջելեսի վարչաշրջանի ցանկացած ընտրատեղամասում: Էլեկտրոնային ընտրագրքերը փոխարինում է ընտրողների տպագրված ցուցակին, որն օգտագործվում է քվեարկության կենտրոնի աշխատակազմի կողմից՝ իրական ժամանակում ընտրողի գրանցման իրավասությունն ստուգելու համար: Էլեկտրոնային ընտրագրքերը ցույց կտա, եթե ընտրողն արդեն քվեարկել է վարչաշրջանի ցանկացած վայրում՝ արգելելու քվեարկել բազմաթիվ վայրերում: Այս սարքը հնարավորություն կտա կատարել ընտրողների պայմանականորեն գրանցում, ինչն անձին թույլ կտա նույն օրը գրանցվել քվեարկության համար և քվեարկել:

Բարելավված փոստով քվեարկության քվեաթերթիկ

2018թ.-ի նոյեմբերին ներկայացված նոր տեսք ստացած, ամբողջ երեսով մեկ քվեաթերթիկն ունի ավելի մեծ տառատեսակ և ավելի հստակ հրահանգներ՝ փոստով քվեարկության (Vote by Mail, VBM) գործընթացում հեշտությունը և հասանելիությունը բարձրացնելու համար: Լոս Անջելեսի վարչաշրջանի ընտրողները կարող են փոստով ուղարկել VBM քվեաթերթիկ՝ առանց փոստային նամականիշի: Ընտրողները կարող են նաև թողնել իրենց քվեաթերթիկը VBM-ի ցանկացած քվեատուփի մեջ՝ վարչաշրջանով մեկ գտնվող որևէ հարմար վայրում, որը հասանելի կլինի ընտրության օրվանից 29 օր առաջ: Քվեարկության ընթացքում VBM քվեաթերթիկները նույնպես ընդունվելու են ցանկացած քվեարկության կենտրոնում:



Քվեարկության երկարացված ժամկետ

Քվեարկության կենտրոնները հասանելի կլինեն ընտրության օրվանից 10 օր առաջ, ինչը հնարավորություն կտա ընտրողներին երկու հանգստյան օրերին կատարել քվեարկություն LA -ի վարչաշրջանի ցանկացած ընտրատեղամասում: Քվեարկության կենտրոնները բաց կլինեն օրական նվազագույնը 8 ժամ: Կան լրացուցիչ հնարավորություններ բջջային և թռուցիկ ընտրական կենտրոնների համար, որքան անհրաժեշտ է՝ քվեարկությունը երկարաձգելու ժամանակահատվածում տեղավորելու համար:

Ընտրական կենտրոնների տեղակայումներ

Ընտրական կենտրոնները փոխարինում են ընտրատեղամասերը, որպեսզի ընտրողներն այլևս կցված չլինեն իրենց տների հարևանությամբ տեղակայված ընտրատեղամասերին: Ընտրական կենտրոնի մոդելը մեծացնում է ճկունությունը՝ թույլ տալով ընտրողներին կատարել քվեարկություն այն վայրերում, որտեղ նրանք ապրում, աշխատում, սովորում, գնումներ կատարում կամ խաղում են՝ մինչև ընտրությունների օրվանից 10 օր առաջ: Ընտրական կենտրոնները հարմար տեղակայվելու են տարբեր տեսակի հաստատություններում, ինչպիսիք են՝ առևտրի կենտրոնները, զբաղվածության կենտրոնները, դպրոցները, համայնքային արվեստի և մշակութային կենտրոնները, զվարճանքի օբյեկտները, հասարակական շենքերը և երկրպագության վայրերը:

1.3 ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՆ ԵՐԿՎԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Լայնամասշտաբ, հիմնարար ջանքեր, որոնք ազդում են ամբողջ նահանգի քաղաքացիական ներգրավվածության աստիճանի և որակի վրա, պահանջում է ուղեցույցներ, որոնք սահմանում են որակի չափանիշներ՝ ընտրողների ցանկալի փորձառության տրամադրում ապահովելու համար: VCA պահանջները նպաստում են նահանգային մակարդակում կայունացված փորձառությանը, ինչպես նաև անհատական փորձառությանը՝ տարածաշրջանային մակարդակում: Դրան հասնելու համար, Ընտրողների ընտրության մասին օրենքը մշակեց իրավասությունների համար հատուկ պահանջներ՝ հիմնված բնակչության

խտության վրա: Հետևյալ պահանջները վերաբերում են Լոս Անջելեսի վարչաշրջանին:

1.3.1 Ընտրողների ընտրության մասին օրենքի պահանջները LA վարչաշրջանի համար

ՓՈՍՏՈՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

VCA-ն ընդունում է, որ VBM քվեաթերթիկները և դրանք հանձնելու տեղանքները շատ կարևոր են ընտրողների, հատկապես գյուղական վայրերում ապրողների, հաճախակի ճանապարհորդող և այլ վարչաշրջաններում աշխատողների մեծ հասանելիության ապահովման համար: VCA-ն բարձրացնում է փոստով քվեարկության փորձառությունը՝ պահանջելով.

- Բոլոր գրանցված ընտրողներն ստանում են փոստով քվեարկության (VBM) քվեաթերթիկ մինչև 2024թ.: Մինչ այդ, տեղամասում բնակվող ընտրողները քվեարկության կենտրոնից ավելի քան 30 րոպե ճանապարհորդելու ժամանակով, կամ նրանք, ում նախորդ ընտրատեղամասը գտնվում է քվեարկության կենտրոնից 15 մղոն հեռավորության վրա, VBM քվեաթերթիկ ստանում են փոստով:
- Բոլոր ընտրողներն, ովքեր բնակվում են օրենսդիր կամ կոնգրեսական ընտրատարածքում, որը մասամբ գտնվում է Լոս Անջելեսի վարչաշրջանում, և որը նույնպես գտնվում է մեկ այլ վարչաշրջանի մեջ, որն ընտրություն է իրականացնում, փոստով քվեարկության քվեաթերթիկ են ստանում փոստով:
- Քվեաթերթիկի հանձնման վայրում կա անվտանգ, հասանելի և կղպված քվեատուփ՝ հանրային փոխադրամիջոցների հաստատված երթուղիներին հնարավորինս մոտ:
- Յուրաքանչյուր իրավասության տարածքում քվեաթերթիկի հանձնման նվազագույնն երկու վայր, կամ
- Յուրաքանչյուր իրավասության տարածքում քվեաթերթիկի հանձնման մեկական վայր ամեն 15,000 մշտական VBM գրանցված քվեարկողների համար:

- Քվեաթերթիկների հանձնման վայրերը մնում են բաց առնվազն սովորական աշխատանքային ժամերի ընթացքում՝ սկսած ընտրության օրվանից ոչ պակաս քան 28 օր առաջ կամ ներառյալ ընտրության օրը:
- Յուրաքանչյուր իրավասության տարածքում քվեաթերթիկի հանձնման առնվազն մեկ վայրը պետք է լինի հասանելի, անվտանգ, դրսում գտնվող քվեաթերթիկի հանձնման արկղ, որը հասանելի է օրական առնվազն 12 ժամ, ներառյալ սովորական աշխատանքային ժամերը:

ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Լոս Անջելեսի բնակիչների աշխարհագրական բազմազանությունը, բնակչության խտությունը և ամենօրյա շարժումն ստեղծում են ընտրական վայրերի ավելի մեծ պահանջարկ, քան Կալիֆորնիայի այլ վարչաշրջաններում: VCA-ն ապահովում է ընտրական կենտրոնների պահանջարկի այս աճն՝ սահմանելով բնակչության վրա հիմնված պահանջներ: Այն պահանջներն, որոնք պետք է կիրառվեն Լոս Անջելեսի վարչաշրջանում, ներառում են.

- Ընտրական կենտրոնները տեղակայված են գրանցված ընտրողներից ողջամիտ հեռավորության վրա:
- Առնվազն մեկ ընտրական կենտրոն է տրամադրվում առնվազն 1,000 գրանցված քվեարկող ունեցող յուրաքանչյուր քաղաքին:
- Ընտրության օրը և դրանից առաջ երեք օրվա ընթացքում առնվազն մեկ ընտրական կենտրոն է տրամադրվում յուրաքանչյուր 7,500 գրանցված ընտրողների համար:
- Ընտրությունից տաս օր առաջ առնվազն մեկ ընտրական կենտրոն է տրամադրվում յուրաքանչյուր 30,000 գրանցված ընտրողների համար:

VCA-ն ուղեցույց է տրամադրում՝ ապահովելու համար, որ ընտրական կենտրոնները հավասարաչափ բաշխվեն Վարչաշրջանի ամբողջ տարածքում և ունենան քվեարկության սարքավորումներ, որոնք մատչելի են հաշմանդամություն ունեցող անձանց համար: Նվազագույն պահանջները,

որոնք պետք է հաշվի առնել, երբ պետք է տեղորոշել ընտրական կենտրոնները, ներառում են.

- Հեռավորությունը հասարակական տրանսպորտից
- Հեռավորությունը բնակելի կենտրոններից
- Հեռավորությունը ցածր եկամուտով համայնքներից
- Հասանելիություն և անվճար կայանում
- Տարածություն և ժամանակ, որոնք ընտրողին անհրաժեշտ է մեքենայով կամ հասարակական տրանսպորտով ճամփորդելու համար

1.3.2 Լոս Անջելեսի վարչաշրջանի գործառնական պահանջներ

Նահանգային պահանջներից բացի, Լոս Անջելեսի վարչաշրջանն սահմանեց ընտրական կենտրոնի լրացուցիչ չափանիշներ՝ կապված հաստատության չափի, էներգիայի կարիքների, ցանցի միացման, ADA հասանելիության, լեզվական հասանելիության և մեկուսացված համայնքների ներառման հետ: Այս չափանիշները կիրառվել են PlaceWorks-ի կողմից՝ ընտրական կենտրոնների հավանական տեղակայությանն առաջնահերթություն տալու և անհրաժեշտ պահանջներին չհամապատասխանող հաստատությունները պարզելու համար: Սույն զեկույցի հետևյալ բաժինը նկարագրում է, թե ինչպես են կիրառվել այդ նահանգային և գործառնական պահանջները՝ հնարավոր ընտրական կենտրոնի վայրերի ընտրության ժամանակ:



2.0 ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Լոս Անջելեսի վարչաշրջանը կվերափոխի ընտրողների փորձառությունը՝ փոխարինելով ընտրատեղամասերը ճկուն, ըստ ցանկության քվեարկության կենտրոններով, որոնք սկսվում են 2020թ.-ի Նախագահական առաջնային ընտրություններից: Այս նպատակի իրագործման համար Լոս Անջելեսի վարչաշրջանի գրանցողը /վարչաշրջանի քարտուղարը (RR/CC) համագործակցեց PlaceWorks-ի հետ՝ անցկացնելու համար գեոտարածական վերլուծություն, տեղանքի գնահատում և համայնքի ներգրավվածություն: Այս համագործակցության արդյունքում ընտրվեցին առավել կենտրոնական ընտրական կենտրոնների տեղանքները՝ բավարարելու նահանգային և տեղական պահանջները, միաժամանակ բավարարելով ընտրողների բազմատեսակ կարիքները:

2.1 ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


VCA- ի պահանջներից և նկատառումներից դուրս գալով՝ Լոս Անջելեսի վարչաշրջանը հաստատեց լրացուցիչ պահանջներ և չափորոշիչներ, որոնք բարձրացնում են ընտրական կենտրոնների որակը՝ ստեղծելով Լոս Անջելեսի վարչաշրջանի ընտրողների համար հարմարեցված փորձառություն:

Լոս Անջելեսի վարչաշրջանը ձգտում է խրախուսել քաղաքացիական մասնակցությունն սահմանափակ ֆիզիկական կամ ճանաչողական կարողություններ ունեցող անձանց շրջանում և գիտակցում է, որ ընտրական կենտրոնի օբյեկտները պետք է կարողանան սպասարկել այդ ընտրողներին: Այս նպատակի իրագործման համար RR/CC-ն ընդունել է Ամերիկայի հաշմանդամության մասին օրենքի (ADA) հետևյալ պահանջները՝ համապատասխան հարմարությունները հայտնաբերելու համար.

- ADA-ի հասանելի ուղի փողոցից/հանրային տրանսպորտից կամ ավտոկայանատեղից դեպի կենտրոնական դուռ
- Տեղում գտնվող ADA-ի համար նախատեսված ավտոկայանատեղ

- 32 դյույմ լայնությամբ դռներ
- Ներքին խոչընդոտների բացակայություն, որոնք կխանգարեն անվասայլակների հասանելիությունը

Figure 1. Մեծ ընտրական կենտրոնի օրինակի գծապատկեր



ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՉԱՓՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հաստատության չափը և տեսակը, որը լավագույնս բավարարում է ընտրողների կարիքները, տարբեր կլինի ըստ աշխարհագրական շրջանի և բնակչության խտության, բայց բոլորը կունենան որոշ ընդհանուր բնութագրեր: Բոլոր ընտրական կենտրոնները բաղկացած կլինեն վեց տարբեր ոլորտներից.

- Ընտրողների հերթ/Սպասման տարածք
- Գրանցման տարածք
- Քվեաթերթիկի նշման սարքի տարածք

- Փոստով քվեարկության տարածք

Հիմք ընդունելով յուրաքանչյուր աշխարհագրական շրջանում բնակչության պահանջարկը և օբյեկտների մատչելիությունը, ընտրական կենտրոնները կարող են համարվել փոքր, միջին կամ մեծ, ինչը վերաբերում է ընտրական կենտրոնում տեղակայված Քվեաթերթիկների նշման սարքերի (BMD) և էլեկտրոնային ընտրագրքերի կարողություններին և դրա հետ կապված տարածական կարիքներին: Աղյուսակ 1-ը ցույց է տալիս նախագծի հետազոտողների կողմից օգտագործված չափի պարամետրերը՝ որոշելու, թե արդյոք հաստատությունը բավականաչափ մեծ է՝ իրավասության ընտրողների բնակչությունը տեղավորելու համար: Աղյուսակ 1-ը ցույց է տալիս ընտրանքային դասավորությունը մեծ ընտրական կենտրոնի համար: Տե՛ս Հավելված Ա՝ սենյակի չափի ամբողջական մեթոդաբանության համար:

Table 1. Ընտրական կենտրոնի չափի շեմեր

Ընտրական կենտրոնի չափ	Պահանջվող քառակուսի ֆուտ	BMDs-աջակցող
Փոքր	<1,999	<10
Փոքր/Միջին	2,000-2,449	10
Միջին	2,450-3,849	30
Մեծ	>3,850	50

RR/CC- ն օգտագործեց այս նահանգային և գործառնական պահանջներն ու նկատառումները՝ տվյալների բարդ վերլուծություն անցկացնելու համար, որոնք հանգեցրին քանակական չափումների, որոնց միջոցով հաստատությունները կարող են գնահատվել և ընտրվել որպես հնարավոր ընտրական կենտրոններ:

2.2 ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Առավել հարմար ընտրական տեղամասերի որոշումը պահանջում էր կայուն, տվյալների վրա հիմնված գործընթաց, որը պետք է ներառեր նահանգային և տեղական պահանջները՝ տեղական տարածական և սոցիալ-տնտեսական

պայմանների հետ՝ կանխատեսելով մարդկային վարքերն ու ձևերը: Ընտրական կենտրոնների տեղաբաշխման նախագիծը (Vote Center Placement Project, VCPP) կենտրոնացած էր տարածքի վրա հիմնված պահանջարկի վերլուծության վրա՝ ապահովելու համար, որ ընտրական կենտրոնները և Փոստով քվեարկության հանձնման տեղամասերը հավասարաչափ բաշխված են վարչաշրջանով մեկ:

2.2.1 Ուսումնասիրության և հիմնական տարածքներ

Լոս Անջելեսի վարչաշրջանն իր մեջ ներառում է 88 քաղաք և ավելի քան 2600 քառակուսի մղոն չմիավորված տարածք: Վարչաշրջանի 10 միլիոն բնակիչների մեծ մասն ապրում է միավորված քաղաքներում, իսկ շուրջ 1 միլիոն բնակիչ ապրում է չմիավորված շրջաններում: Ապահովելու համար, որ Վարչաշրջանի բոլոր համայնքներն ստացան արդար ներկայացվածություն ընտրական կենտրոնների տեղաբաշխման հարցում և ստուգելու համար ավելի մանրամասն մակարդակի պայմանները, Վարչաշրջանը բաժանվեց համայնքների վրա հիմնված ուսումնասիրության այն տարածքների, որոնք հետագայում խմբավորվեցին տարածաշրջանային կենտրոնացման ոլորտներում: Բոլոր տեխնիկական վերլուծություններն արվել են ուսումնասիրության տարածքի մակարդակում; կենտրոնացման ոլորտներն օգտագործվել են միայն համայնքային հանդիպումների արդար բաշխումն որոշելու համար:

Այս աշխարհագրական սահմանները մշակվել են՝ օգտագործելով GIS-ի վրա հիմնված գործընթացը, որը հաշվի է առել գոյություն ունեցող իրավասության սահմանները, ինչպիսիք են վերահսկիչ շրջանները, քաղաքային սահմանները և շրջանների պլանավորման տարածքները, ինչպես նաև բնակչության խտությունը և բաշխումը: Սկզբնական շրջանում սահմանվել է 189 ուսումնասիրության տարածք, բայց մեկ չմիավորված համայնք հետագայում վերացվել է Սանտա Կլարիտա քաղաքին անեքսիայի պատճառով՝ ուսումնասիրության տարածքների վերջնական ընդհանուր քանակը հասցնելով 188-ի: Ուսումնասիրության տարածքի սահմանները ցույց են տրված Նկար 3-ում:



Մեթոդաբանություն

Ուսումնասիրության տարածքների որոշման գործընթացն սկսվեց՝ յուրաքանչյուր ներառված քաղաքը մեկ ուսումնասիրության տարածքի վերագրելով: 150,000-ից ավելի բնակչություն ունեցող քաղաքները բաժանվել են երկու կամ ավելի ուսումնասիրության տարածքների՝ ուսումնասիրության տարածքներում բնակչության ավելի արդար բաշխումն ապահովելու համար: Այս խոշոր քաղաքներից յուրաքանչյուրին հատկացվեց մի քանի ուսումնասիրության տարածք՝ նրանց ընդհանուր բնակչության հիման վրա.

- City of Los Angeles: 43 Ուսումնասիրության տարածքներ
- City of Long Beach: 5 Ուսումնասիրության տարածքներ
- City of Glendale: 2 Ուսումնասիրության տարածքներ
- City of Santa Clarita: 2 Ուսումնասիրության տարածքներ
- City of Lancaster: 2 Ուսումնասիրության տարածքներ
- City of Palmdale: 2 Ուսումնասիրության տարածքներ
- City of Pomona: 2 Ուսումնասիրության տարածքներ
- City of Torrance: 2 Ուսումնասիրության տարածքներ
- City of Pasadena: 2 Ուսումնասիրության տարածքներ

Վարչաշրջանի չմիավորված համայնքների համար ուսումնասիրության տարածքներն ստեղծվել են՝ ելնելով բնակչության խտությունից և աշխարհագրական դիրքից: Չմիավորված տարածքներից յուրաքանչյուրն գնահատվում էր հետևյալի հիման վրա.

- Փոքր բնակչությամբ աշխարհագրական առումով մեկուսացված համայնքներն ավելացվել են մոտակա քաղաքի ուսումնասիրության տարածքին:
- Առանձին և/կամ աշխարհագրական առումով մեկուսացված համայնքները, որոնք ունեն ավելի մեծ թվով բնակչություն, յուրաքանչյուրը դարձվ անհատական ուսումնասիրության տարածք: Ավելի քան 150,000 բնակիչ ունեցող այս համայնքներից յուրաքանչյուրը բաժանվեց երկու ուսումնասիրության տարածքի, ինչպես և մեծ քաղաքները:
- Փոքր բնակչությամբ աշխարհագրական առումով հարակից համայնքները խմբավորվեցին ըստ համայնքի անվան և աշխարհագրության, բնակչության բաշխման և վիճակագրական ոլորտների:
- Յուրաքանչյուր ուսումնասիրության տարածքին հատկացվել է եզակի նույնականացման համար, որը պատկերված է Աղյուսակ 2-ում:

Figure 2. Ուսումնասիրության տարածքի մեթոդաբանություն






Figure 3. Գյուղական վայրերի ուսումնասիրության տարածքներ, Հյուսիս




Figure 4. Գյուղական վայրերի ուսումնասիրության տարածքներ, Հարավ






Table 2. Ուսումնասիրության տարածքի քարտեզի բանալին

ID #	ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ
1	City of Hidden Hills
2	City of Rolling Hills
3	City of Vernon / Uninc. Vernon
4	Unincorporated Covina - San Dimas
5	Unincorporated Covina Islands
6	Unincorporated Leona Valley-Lake Hughes
7	City of Bradbury / Uninc. Bradbury
8	City of San Marino
9	Unincorporated Acton/ Uninc. South Antelope Valley
10	Unincorporated Agua Dulce - Angeles National Forest- Canyon Country
11	Unincorporated Charter Oak Islands
12	Unincorporated Compton
13	Unincorporated Del Aire
14	Unincorporated La Crescenta - Montrose
15	Unincorporated Lennox
16	Unincorporated Malibu
17	Unincorporated Northeast Antelope Valley
18	Unincorporated Northwest Antelope Valley
19	Unincorporated Quartz Hill -Lancaster
20	Unincorporated San Jose Hills
21	Unincorporated Walnut Park
22	Unincorporated West Athens-Westmont
23	Unincorporated West Carson
24	Unincorporated West Rancho Dominguez
25	City of Industry
26	City of LA - Bel Air - Beverly Crest/ Uninc. Hollywood Hills

ID #	ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ
27	City of La Puente
28	City of Temple City
29	Unincorporated Angeles National Forest
30	Unincorporated East Los Angeles - Southeast
31	Unincorporated East Rancho Dominguez
32	Unincorporated East San Gabriel - Arcadia
33	Unincorporated Monrovia
34	Unincorporated Hawthorne - Alondra Park
35	Unincorporated Lake Los Angeles - Pearblossom - Liano - Valyermo
36	Unincorporated Littlerock
37	Unincorporated San Pasqual - East Pasadena
38	Unincorporated Santa Monica Mountains - Triunfo Canyon
39	Unincorporated Valinda
40	City of Artesia
41	City of Hawaiian Gardens
42	City of La Habra Heights
43	City of LA - Harbor Gateway
44	City of LA - Van Nuys - North Sherman Oaks
45	City of LA - Westwood / Unincorporated Sawtelle VA Center
46	City of Palos Verdes Estates
47	Unincorporated Altadena
48	Unincorporated Ladera Heights / View Park - Windsor Hills
49	Unincorporated Stevenson - Newhall Ranch
50	Unincorporated Bassett - West Puente Valley
51	Unincorporated Pellissier Village - Avocado Heights
52	Unincorporated Sunrise Village - South San Gabriel - Whittier Narrows
53	City of Avalon - Channel Islands North

ID #	ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ
54	City of Baldwin Park
55	City of Commerce
56	City of Cudahy
57	City of Irwindale
58	City of LA - Canoga Park - Winnetka
59	City of LA - Central City North
60	City of LA - Northridge
61	City of LA - Valley Glen - North Sherman Oaks
62	City of Lomita
63	Unincorporated Marina del Rey
64	Unincorporated Topanga Canyon - Topanga
65	Unincorporated West Whittier - Los Nietos
66	City of La Canada Flintridge
67	City of LA - Westchester - Playa del Rey - Los Angeles International Airport
68	City of LA - Wilshire - Koreatown
69	City of Lancaster - Eastside
70	Unincorporated East Los Angeles - Northwest
71	City of Bell
72	City of Huntington Park
73	City of LA - Granada Hills - Knollwood
74	City of Lawndale
75	City of Malibu
76	City of Maywood
77	City of Monrovia
78	City of South El Monte/ Uninc. El Monte - Whittier Narrows
79	City of Westlake Village
80	Unincorporated Florence-Firestone

ID #	ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ
81	City of Agoura Hills
82	City of Alhambra
83	City of LA - Baldwin Hills - Leimert - Hyde Park
84	City of LA - Sherman Oaks - Studio City - Toluca Lake - Cahuenga Pass / Uninc. Universal City
85	City of LA - West Los Angeles
86	City of Rolling Hills Estates / Unincorporated Westfield
87	City of San Fernando
88	City of South Gate
89	City of South Pasadena
90	City of West Hollywood
91	Unincorporated Castaic
92	Unincorporated Rowland Heights
93	City of Covina
94	City of LA - North Hollywood - Valley Village
95	City of LA - Reseda - West Van Nuys
96	City of LA - Sylmar
97	City of Long Beach Central
98	City of Rosemead
99	Unincorporated - Hacienda Heights - Whittier
100	City of Bellflower
101	City of Calabasas
102	City of Gardena
103	City of LA - Hollywood - North
104	City of LA - Hollywood - South
105	City of LA - Palms - Mar Vista - Del Rey
106	City of LA - Venice
107	City of LA - West Adams



ID #	ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ
108	City of LA - Wilshire - West
109	City of Lynwood - Uninc. Lynwood
110	City of Pico Rivera
111	City of San Gabriel
112	City of Sierra Madre
113	Unincorporated Willowbrook
114	City of Bell Gardens
115	City of El Monte
116	City of Inglewood
117	City of LA - Arleta - Pacoima
118	City of LA - Central City
119	City of LA - South Los Angeles
120	City of LA - Sun Valley - La Tuna Canyon
121	City of LA - Wilmington - Harbor City / City of LA Port of Los Angeles
122	City of Lancaster - Westside
123	City of Long Beach North
124	City of Palmdale - Eastside / Uninc. South Antelope Valley
125	City of Palmdale - Westside
126	City of Santa Fe Springs
127	Unincorporated Azusa
128	City of Hermosa Beach
129	City of LA - Brentwood - Pacific Palisades
130	City of LA - Mission Hills - Panorama City - North Hills
131	City of Montebello
132	City of Pasadena - Eastside / Uninc. Kinneloa Mesa
133	City of Walnut
134	Unincorporated South Whittier - East La Mirada

ID #	ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ
135	City of LA - Boyle Heights
136	City of LA - Encino - Tarzana
137	City of La Mirada
138	City of LA - Silver Lake - Echo Park - Elysian Valley
139	City of LA - Sunland - Tujunga - Lake View Terrace - Shadow Hills
140	City of Paramount
141	City of Signal Hill
142	City of Compton
143	City of Duarte
144	City of Glendora / Unincorporated Glendora
145	City of Hawthorne
146	City of LA - West Hills - Woodland Hills \ Uninc. Canoga Park - West Hills
147	City of LA - Westlake
148	City of Monterey Park
149	City of Norwalk
150	City of Pomona - Southside
151	Santa Clarita - South
152	City of LA - Chatsworth - Porter Ranch / Uninc. Northridge - Canoga Park - Oat Mtn.
153	City of Lakewood / Unincorporated Lakewood
154	City of Long Beach West
155	City of Pomona - Northside
156	City of San Dimas / Unincorporated San Dimas
157	City of Diamond Bar
158	City of El Segundo
159	City of La Verne / Unincorporated La Verne - Claremont
160	City of West Covina
161	City of Carson

ID #	ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ
162	City of Downey
163	City of LA - Southeast Los Angeles
164	City of LA - Exposition Park - University Park - Vermont Square
165	City of Long Beach East / Unincorporated Long Beach
166	City of Arcadia
167	City of Beverly Hills
168	City of Glendale - Southside
169	City of LA - Southeast Los Angeles - North
170	City of Rancho Palos Verdes
171	City of Claremont / Unincorporated Claremont
172	City of Culver City
173	City of Pasadena - Westside
174	City of Torrance - North
175	City of Azusa
176	City of Burbank
177	City of LA - Northeast Los Angeles - South
178	City of Manhattan Beach
179	Santa Clarita - North
180	City of Glendale - Northside
181	City of Torrance - South
182	City of Santa Monica
183	City of LA - Northeast Los Angeles - North
184	City of Cerritos \ Unincorporated Cerritos
185	City of LA - San Pedro - LA Port of Los Angeles - Uninc. La Rambla
186	City of Redondo Beach
187	City of Whittier
188	City of Long Beach South



2.2.2 Տվյալների շերտերը

Ուսումնասիրության տարածքները հաստատելուց հետո կիրառվեցին տվյալների կարևորագույն շերտեր՝ որոշելու, թե որտեղ պետք է տեղակայվեն 2020թ.-ի ընտրության ընտրական կենտրոնները՝ համաձայն VCA ուղեցույցի և Վարչաշրջանի ընտրությունների աշխատակազմի կողմից սահմանված լրացուցիչ պահանջների: Հաշվի առնելով ինչպես նահանգի, այնպես էլ տեղական մակարդակում պահանջվող տվյալների լայն շերտերը, կարևոր էր, որ յուրաքանչյուր վերլուծության մեջ օգտագործված տվյալները լինեն առավել ճշգրիտ և արդիական: Տվյալները հավաքագրվել են VSAP Տեխնիկական խորհրդատվական հանձնաժողովի և մի շարք ընթացիկ տվյալների շտեմարան տրամադրող խորհրդատվական հանձնաժողովի ներդրմամբ:

Տվյալների յուրաքանչյուր շերտ պահանջում էր տվյալների այլ աղբյուր և վերլուծության եզակի մոտեցում: Այս վերլուծությունը հետազոտողներին օգնեց ուսումնասիրել սոցիալ-տնտեսական, կյանքի/աշխատանքի, ընտրողի և տրանսպորտի գործոնների միջև փոխհարաբերությունները: Ընտրված տվյալների շերտերն ուսումնասիրելու նպատակը VCA-ում և տեղական պահանջներում ներկայացվող պայմանների առկայությունն ու աշխարհագրական բաշխումն էր: Տվյալների նկատառումները ներկայացված են Աղյուսակ 3-ում և 4-ում: Մեթոդաբանության մանրամասն նկարագրությունը կարելի է գտնել Հավելված Բ-ում:

Table 3. VCA պահանջվող տվյալների շերտերը

Նվազագույն պահանջվող ընտրական կենտրոնի և քվեաթերթիկների հանձնման տեղաբաշխման նկատառումները VCA-ի ներքո
<ul style="list-style-type: none"> • Հեռավորությունը հանրային տրանսպորտից
<ul style="list-style-type: none"> • Տարածություն և ժամանակ VC/Քվեաթերթիկի հանձնման վայր մեքենայով/հանրային տրանսպորտով հասնելու համար
<ul style="list-style-type: none"> • VC և Քվեաթերթիկի հանձնման վայրի մոտ երթևեկության սխեմաներ

<ul style="list-style-type: none"> • Հեռավորություն հանրային կենտրոններից
<ul style="list-style-type: none"> • Հեռավորություն աշխարհագրական առումով մեկուսացված բնակչությունից
<ul style="list-style-type: none"> • Հեռավորություն ցածր եկամտով համայնքներից
<ul style="list-style-type: none"> • Հեռավորություն հաշմանդամություն ունեցող ընտրողներից
<ul style="list-style-type: none"> • Հեռավորություն լեզվական փոքրամասնություն կազմող համայնքներից
<ul style="list-style-type: none"> • Հեռավորություն քիչ ավտոմեքենա ունեցող համայնքներից
<ul style="list-style-type: none"> • Հեռավորություն չգրանցված սակայն իրավունակ ընտրողներից
<ul style="list-style-type: none"> • Հեռավորություն փոստով քվեարկությանը պատմականորեն ցածր մասնակցություն ունեցող համայնքներից

Table 4. Լոս Անջելեսի վարչաշրջանի տվյալների լրացուցիչ նկատառումներ

Տվյալների լրացուցիչ նկատառումներ
<ul style="list-style-type: none"> • Հեռավորությունը զբաղվածության կենտրոններից
<ul style="list-style-type: none"> • Հեռավորությունը ընտրողների մեծ խտության տարածքներից
<ul style="list-style-type: none"> • Հեռավորությունը սպառողների գործունեության տարածքներից
<ul style="list-style-type: none"> • Հեռավորությունը համատեղ ուղևորման տարածքներից
<ul style="list-style-type: none"> • Հեռավորությունը երիտասարդ բնակիչներից (18-ից 24 տարեկան)
<ul style="list-style-type: none"> • Հեռավորությունը ոտքով հասնող թաղամասերից
<ul style="list-style-type: none"> • Հեռավորությունը անվճար/զեղչով և հասանելի ավտոկայանատեղից
<ul style="list-style-type: none"> • Հեռավորությունը հայտնի խոչընդոտներից (ֆիզիկական, հեծանվի և հետիոտնի բախման թեժ կետերից)
<ul style="list-style-type: none"> • Սկզբի/նպատակակետի տարածքի գործունեություն

Հաջորդ բաժինը բացատրում է յուրաքանչյուր շերտի համար օգտագործվող մեթոդաբանությունը, որն օգտագործվել է այն տարածքների որոշման համար, որտեղ պետք է տեղադրվեն ընտրական կենտրոնները: Համակցված շերտերը հաշվի են առնում այն պայմաններն ու խոչընդոտները, որոնք ազդում են ընտրողների վարքի վրա Լոս Անջելեսի վարչաշրջանի տարբեր համայնքներում:

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉՍՓԱՆԻՇ

Աշխարհագրական առումով մեկուսացված համայնքներ

Ապահովելու համար, որ բոլոր ընտրողները քվեարկելու հավասար հնարավորություն ունենան, ուշադիր դիտարկվեց ընտրատեղամասերի հեռավորությունն աշխարհագրական առումով մեկուսացված բնակչությունից: Մեկուսացված համայնքներում բոլոր ընտրելու իրավունք ունեցող ընտրողների խտությունը, ներառյալ իրավունակ չգրանցված ընտրողները, քարտեզագրվել են Վարչաշրջանով մեկ: Քաղաքային տարածքները և մեկուսացված համայնքներից հեռավորությունը Վարչաշրջանի ավելի բնակեցված մասերից նկարագրված էին և օգտագործվում էին պահանջարկի վերլուծության մեջ՝ մատչելիությունն ապահովելու համար: RR/CC-ի փողոցային հատվածի տվյալներն օգտագործվել են ընտրողների իրավունակ բնակչության հետ համատեղ՝ մեկուսացված համայնքները սահմանելու և հասցեագրելու համար:

Մեկուսացված համայնքներ նշանակում են փողոցի հատվածներ, որոնք համապատասխանում ենք հետևյալ պահանջներին.

- Ունեն 1 կամ ավելի իրավունակ ընտրող
- Որևէ մայրուղուց ավելի քան 2 մղոն հեռու են
- 2010 Մարդահամարով սահմանված «քաղաքային տարածքից» ավելի քան 2 մղոն հեռու են

Այս չափանիշը բավարարող փողոցային հատվածների շուրջ օգտագործվել է 0.25 մղոն բուֆեր, որն ստեղծում են մի քանի հստակ տարածքներ: Հաշվարկվել է իրավունակ ընտրողների ընդհանուր բաշխումը և ընտրողների խտությունը յուրաքանչյուր տարածքի

համար: Մեկուսացված համայնքների հեռավորությունները խմբավորվել են որպես 0.25-ից 1 մղոն, 1-ից 5 մղոն, 5-ից 10 մղոն և ավելի քան 10 մղոն: Այս հեռավորությունները օգտագործվել են հատուկ նկատառումների մասին տեղեկացնելու համար՝ քվեարկության աշխարհագրական խոչընդոտներ առաջացնող ընտրողների մուտքն ապահովելու նպատակով:

Ցածր եկամտով համայնքներ

RR/CC-ն պարտավորվել է բավարարել բազմազան բնակչության կարիքներն ամբողջ Լոս Անջելեսի վարչաշրջանում, հատկապես նրանց, ովքեր պատմականորեն թերի են ներկայացվել ժողովրդավարական գործընթացներում: Այս բնակչության մասին ավելի լավ պատկերացում կազմելը կարևոր էր ընտրական կենտրոնների առավել մատչելի տեղաբաշխման որոշման ժամանակ:

Որոշելու համար, թե որտեղ ընտրական կենտրոնները կլինեն ամենից մատչելի ցածր եկամուտ ունեցող բնակչության համար, մարդահամարի բլոկային խմբերը ուսումնասիրվել և նկարագրվել են՝ հաշվարկելու համար վարչաշրջանի բնակչության տոկոսները, որոնք պատկանում են ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին: Բնակարանային և քաղաքաշինության դեպարտամենտի (HUD) տվյալների համաձայն՝ *ցածր եկամուտ ունեցող ընտանիքներն* սահմանվում են որպես ընտանիքներ, որոնց եկամուտները չեն գերազանցում միջին ընտանիքի եկամտի 80 տոկոսը, ինչը Լոս Անջելեսի վարչաշրջանի համար կազմում է 64.300 դոլար: HUD-ի կողմից տրամադրված ցածր եկամուտ ունեցող ընդհանուր բնակչության տվյալները և մարդահամարի ընդհանուր բնակչության տվյալներն օգտագործվել են՝ յուրաքանչյուր մարդահամարի բլոկային խմբի համար ցածր եկամտի կատեգորիայի բնակչության տոկոսը հաշվարկելու համար: Իմանալով, թե որտեղ են ապրում այս ցածր եկամուտ ունեցող ընտանիքները, հետազոտողներն իմացան, թե որտեղ պետք է հիմնել հնարավոր ընտրական կենտրոններ այդ վայրերի հարևանությամբ:



Լեզվական փոքրամասնության համայնքներ

Ապահովելու համար, որ քվեարկության նոր փորձը կհամապատասխանի Վարչաշրջանի բազմազան ընտրագանգվածի կարիքներին, որը ներառում է ավելի քան 180 երկրներից ծագող ընտրողներ, RR/CC-ն կշարունակի լեզվական աջակցություն ցուցաբերել 12 լեզուներով՝ քվեարկության կենտրոնի մոդելի համաձայն: Որպես լեզվական փոքրամասնություններ դասակարգված բնակչությունը քարտեզագրվել է՝ ընդգծելու համար անգլերենին լավ չտիրապետող անգլիախոսների ավելի մեծ մասն ունեցող համայնքները: Այս վերլուծության մեջ օգտագործված ԱՄՆ մարդահամարի դասակարգումը և սահմանումն սահմանում են *փոքրամասնությունների համայնքներն* որպես մեկ այլ լեզու խոսելը և անգլերեն խոսելը «շատ լավից պակաս»: Մարդահամարի տվյալները, որոնք ցույց են տալիս 5 տարեկան և ավելի բարձր բնակչությանն, ովքեր այլ լեզուներ են խոսում և շատ լավից պակաս անգլերեն են խոսում, օգտագործվել են լեզվական փոքրամասնությունների համայնքների տոկոսի և խտության մեկ ակրի հաշվարկման համար:

Քիչ թվով ավտոմեքենա ունեցող համայնքներ

Տեղաշարժի խոչընդոտների ընկալումը և փոխադրման այլընտրանքային միջոցներին սատարելը շատ կարևոր է, երբ նախագծվում են մատչելի քվեարկության կենտրոնները: Վերլուծվել է քիչ թվով ավտոմեքենաներ ունեցող համայնքներից հեռավորությունը՝ հնարավոր խոչընդոտները պարզելու համար, որոնք կարող են այն ավելի դժվար դարձնել ընտրական կենտրոնների հասանելիություն ապահովելու համար: Պահանջարկի վերլուծությունն ուսումնասիրել է Վարչաշրջանի ավտոմեքենա չունեցող յուրաքանչյուր զբաղեցրած բնակարանային միավորների տոկոսը յուրաքանչյուր մարդահամարի բլոկային խմբում՝ նշելով ավտոմեքենա չունեցող մարդկանց ավելի մեծ մասնաբաժնի ունեցող համայնքները: Այս տոկոսը ցույց տվող մարդահամարի տվյալներն օգտագործվել են յուրաքանչյուր բլոկային խմբում մեկ ակրի տոկոսը և խտությունը հաշվարկելու համար, մինչդեռ առանց բնակարանային միավորների բլոկային խմբերը չեն քարտեզագրվել:

ԿՅԱՆՔԻ/ԱՇԽԱՏԱՆՔԻ ՉԱՓԱՆԻՇ

Ընտրողների բնակչության կենտրոններ

Հանդիպել մարդկանց, որտեղ նրանք գտնվում են, անկախ իրենց յուրահատուկ սոցիալ-տնտեսական հանգամանքներից, հանդիսանում է բնակչության կենտրոններից ընտրական կենտրոնների հեռավորության պահանջարկի վերլուծության առաջնայնությունը: Վարչաշրջանում բնակչության անհավասար բաշխման պատճառով, բնակչության կենտրոնները չէին կարող համապատասխան չափվել միայն մարդահամարի տվյալների հիման վրա: Չնայած մարդահամարի տվյալները ցույց են տալիս բնակչության ճշգրիտ խտությունը քաղաքային բնակավայրերում, մեծ թվով աշխարհագրական սահմաններ ունեցող և ցածր բնակչություն ունեցող գյուղական վայրերը ճշգրիտ չեն վերլուծության մեջ: Հետևաբար, բնակչության կենտրոնները որոշվել են ընտրողների իրավասու խտությունից՝ օգտագործելով ընտրողների հատուկ տվյալները, և բնակչության բաշխումը ցուցադրվել է՝ օգտագործելով մարդահամարի նշանակած աշխարհագրական տարածքները:

Յուրաքանչյուր մարդահամարի բլոկի խմբում ընտրելու իրավունք ունեցող ընտրողները հաշվարկվել են RR/CC- ի տվյալների հիման վրա, որոնք ցույց են տալիս ինչպես գրանցված, այնպես էլ չգրանցված իրավասու ընտրողներին՝ ինչպես ներկայիս, այնպես էլ ապագա քվեարկության ձևերին աջակցելու համար: Խտությունը հաշվարկելու համար ձեռնարկվել է յուրաքանչյուր մարդահամարի բլոկում բնակեցված տարածքների մոտավոր ներկայացուցչություն: Այս մեթոդը բացառում է շրջանները, որոնք չունեն ընտրելու իրավունք ունեցող ընտրողներ (մեկ ակրի համար 0.25 իրավունակ ընտրողից պակաս) շրջանի հյուսիսային և արևմտյան մասերում գործող մեծ խմբերում, մինչ հաշվի առնելով ընտրողներին նույն բնակեցված տարածքներում: Այս մեթոդն ապահովում էր, որ պահանջարկի վերլուծությունը պատշաճ կերպով պատկերի բնակեցման կենտրոնների բազմաբնույթ աշխարհագրությունները:

Հեռավորությունը զբաղվածության կենտրոններից

Ընտրական կենտրոնի մոդելի անցումն ընտրողներին հնարավորություն է տալիս քվեարկել Վարչաշրջանի ցանկացած ընտրական կենտրոնում, և ենթադրվում է, որ ընտրողների մի մասը կցանկանա քվեարկել այն վայրում, որտեղ նրանք աշխատում են կամ իրենց ուղևորության ճանապարհին: Վերլուծելու համար, թե որտեղ են աշխատում Լոս Անջելեսի շրջանի ընտրողները, հետազոտողները վերլուծեցին ցերեկային բնակչությունն՝ օգտագործելով Հարավային Կալիֆորնիայի Կառավարությունների ասոցիացիայի (SCAG) կողմից տրամադրված զբաղվածության տվյալները: Հետազոտողները քարտեզագրեցին աշխատանքի խտությունը՝ ցույց տալու վարչաշրջանի շրջակայքում գտնվող ցածր և բարձր խտության կենտրոն ունեցող տարածքները:

Լոս Անջելեսի վարչաշրջանի զբաղվածության կենտրոնների վերլուծության համար, Տրանսպորտի վերլուծության գոտում (TAZ) 1-ին մակարդակի զբաղվածության տվյալներն օգտագործվել են՝ TAZ-ի համար աշխատանքի խտությունը հաշվարկելու համար:

Սանտա Կատալինա կղզու զբաղվածության կենտրոնները վերլուծելու համար աշխատանքի խտությունը հաշվարկվել է՝ Երկայնական ծագման-նշանակետային զբաղվածության վիճակագրության (LODES) տվյալները համախմբելով բլոկի մակարդակին:

ԸՆՏՐՈՂԻ ԶՍՓԱՆԻՇ

Հաշմանդամություն ունեցող ընտրողներ

Լոս Անջելեսի վարչաշրջանի քվեարկության նոր համակարգը նախագծված է, որպեսզի այն հասանելի լինի բոլոր ընտրողներին՝ ապահովելով, որ յուրաքանչյուր ընտրական կենտրոնում առկա է լիովին մատչելի քվեարկող սարքավորում, որ քվեարկության կենտրոնները բավարարեն ADA հասանելիության պահանջները, և այդ նկատառումը հաշվի է առնում հաշմանդամ ընտրողների հեռավորությունը ընտրական կենտրոններից: Օգտագործելով 2016 թվականի Ամերիկյան համայնքների հետազոտության տվյալները, կարելի է հաշվարկել 16 և ավելի տարեկան հաշմանդամություն ունեցող

անձանց թիվը, և յուրաքանչյուր մարդահամարի մեջ հաշմանդամների տոկոսը և խտությունը: Յուրաքանչյուր մարդահամարային տրակտի մեջ շրջանի հաշմանդամություն ունեցող բնակչության տոկոսը քարտեզագրվել է՝ հաշմանդամություն ունեցող անձանց ավելի մեծ բաժին ունեցող համայնքները նույնականացնելու համար, որպեսզի հետազոտողները կարողանան ակտիվորեն հիմնել ընտրական կենտրոններ այն տարածքում, որտեղ ապրում են այդ ընտրողները:

Չգրանցված իրավունակ ընտրողներ

RR/CC-ն պարտավորվում է ներկայումս գրանցված ընտրողներին տեղավորել, միաժամանակ հաշվի առնելով ընտրողների ապագա բնակչության կարիքները: Այս նպատակաուղղվածությունը ներառելով ընտրական կենտրոնների տեղակայությունը որոշելու մեջ նպատակ ունի բարձրացնել ընտրողների մասնակցությունը մատչելիության և արդյունավետ գործընթացների միջոցով, որոնք բարելավում են մասնակցությունը և ժամանակի ընթացքում նվազեցնում են խոչընդոտները:

Որպեսզի պարզվի քվեարկելու իրավունակ սակայն չգրանցված անձանց բաշխումը, այս չգրանցված իրավասու ընտրողների այդ խտությունը յուրաքանչյուր մարդահամարի բլոկային խմբում նկարագրվել է՝ օգտագործելով RR/CC տվյալները, որոնք ցույց են տալիս չգրանցված ընտրողներին փողոցային մակարդակում: Վերլուծվեցին միայն մեկ կամ մի քանի չգրանցված իրավասու ընտրողներով փողոցային հատվածների շուրջ քառորդ մղոնի բուֆեր պարունակող բլոկային խմբերը: Այս մեթոդն օգնեց բացառել տարածքներն առանց չգրանցված ընտրողների վարչաշրջանի հյուսիսային և արևմտյան մասերում՝ հաշվի առնելով չգրանցված ընտրողներին այս նոր բնակեցված տարածքներում:

Փոստով քվեարկության քիչ օգտագործում

VCA-ի նպատակին սատարելու համար փոստով քվեարկության աճը նահանգով մեկ կարևոր էր նույնականացնելու պատմականորեն ցածր VBM օգտագործմամբ համայնքներն՝ ապահովելու համար, որ դրանք գտնվեն հարմար VBM հանձնման վայրերում, սակայն դեռևս հասանելի



են ընտրական կենտրոններին: Մա ընդլայնում է քվեարկության տարբերակները՝ միաժամանակ սատարելով նրանց պատմականորեն ցուցաբերված նախապատվությունը անձամբ քվեարկելուն:

2020թ.-ի ընտրություններում քաղաքային մակարդակի VBM-ի գնահատված օգտագործումն օգտագործվել է ընտրողների պահանջարկի այս չափանիշի վերլուծության համար:

Մեծ հակվածություն ունեցող գրանցված ընտրողներ

Ապահովելու համար, որ ընտրություններին մասնակցելու բարձր հակում ունեցող ընտրողները կշարունակեն իրենց ներգրավվածությունը, հետազոտողները տեղաբաշխեցին և քարտեզագրեցին ընտրողների խտությունը յուրաքանչյուր բլոկային խմբի համար: Քարտեզի վերլուծության մեջ պատկերված են միայն բլոկային խմբերը, որոնք քառորդ մղոն բուֆերային տարածքի մեջ են քվեարկելու մեծ հակվածություն ունեցող մեկ կամ մի քանի ընտրողների հետ: Այս մեթոդն օգնեց բացառել տարածքներն առանց չգրանցված ընտրողների վարչաշրջանի հյուսիսային և արևմտյան մասերում՝ հաշվի առնելով չգրանցված ընտրողներին այս նոսր բնակեցված տարածքներում:

Նոր ի հայտ եկող ընտրողներ

Նոր ի հայտ եկող ընտրողների խտությունը (15-ից 17 տարեկան մարդիկ) վերլուծվել են՝ օգտագործելով տվյալ մարդահամարի բլոկ-խմբի տարածքը, որը քառորդ մղոն բուֆերային տարածքի մեջ են քվեարկելու մեծ հակվածություն ունեցող մեկ կամ մի քանի ընտրողների հետ: Մարդահամարի տվյալներն օգտագործվել են յուրաքանչյուր բլոկ խմբում 15-ից 17 տարեկան մարդկանց թիվը հաշվարկելու համար: Այս մեթոդն օգնեց բացառել տարածքներն առանց չգրանցված ընտրողների վարչաշրջանի հյուսիսային և արևմտյան մասերում՝ հաշվի առնելով չգրանցված ընտրողներին այս նոսր բնակեցված տարածքներում:

ՓՈԽԱՊՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇ

Փոխադրամիջոցների հասանելիություն

Հասարակական տրանսպորտի հասանելիությունը կարևորագույն գործոն է, որը դիտարկվում է ընտրական կենտրոնների ռազմավարական տեղակայման մեջ՝ բոլոր ընտրողների հարմարավետությունն ու մատչելիությունն ապահովելու համար: Փոխադրամիջոցների հասանելիությունը հաճախ անհրաժեշտ է ցածր եկամուտ ունեցող համայնքներում, և նոր ի հայտ եկող ընտրողները ցույց են տալիս հասարակական տրանսպորտի օգտագործման նախընտրություններն ըստ ընտրության, այլ ոչ թե ըստ անհրաժեշտության: Հետազոտողները վերլուծել են ներկա և հեռանկարային ընտրողների և հնարավոր ընտրական կենտրոնների և VMB-ի հեռավորությունը տեղական հանրային տրանսպորտի ցանցերից՝ հասկանալու ընտրողների տեղաշարժը և խոչընդոտները հասանելի վայրեր հասնելու համար:

Լոս Անջելեսի Մետրոպոլիտենի տրանսպորտային մարմնից (METRO) տվյալներ են հավաքվել՝ կապված ֆիքսված ուղիների տարանցման բոլոր կանգառների վերաբերյալ: Տրանզիտային կանգառները դասակարգվել են որպես բարձրորակ կամ ցածր որակի՝ համապատասխանաբար 15 րոպեից պակաս կամ ավելի մեծ ծառայության հաճախության միջակայքների հիման վրա: Տրանզիտ մուտքը Վարչաշրջանի ամբողջ տարածքում այնուհետև դասակարգվեց գերազանց տարանցիկ հասանելիությունից մինչև առանց տարանցման հասանելիության: Գերազանց գնահատականները վերաբերում են բարձրորակ տարանցման կանգառներից քառորդ մղոնի հեռավորության վրա գտնվող տարածքներին: Վարկանիշի մյուս մակարդակների համար ստեղծվել է պարզ բուֆեր տարանցիկ կանգառների շուրջ՝ օգտագործելով հեռավորությունները Աղյուսակ 5-ում:

Տրանսպորտի հասանելիության կատեգորիաներ

Գերազանց	Բարձրակ տրանսպորտային կանգառից 0.25 մղոն հեռավորության վրա
Լավ	Բարձրակ տրանսպորտային կանգառից 0.5 մղոն հեռավորության վրա
Բավարար	Ցածրորակ տրանսպորտային կանգառից 0.25 մղոն հեռավորության վրա
Վատ	Ցածրորակ տրանսպորտային կանգառից 0.5 մղոն հեռավորության վրա
Ոչ մի	Որևէ տրանսպորտային կանգառից 0.5 մղոնից հեռու գտնվող տարածքներ

ընտրողների հարմարավետությունն՝ առաջնահերթություն տալով անվճար և հասանելի կայանատեղին՝ որպես համապատասխան ընտրական կենտրոնի նվազագույն պահանջ:

Խտության վերլուծություն կատարելու համար հավաքվել են կայանատեղիի տվյալները, որոնք գնահատում էին, թե որքան հարմար է յուրաքանչյուր կայանատեղի: Այս վերլուծությունը ավելի մեծ քաշ տվեց անվճար և հանրային մատչելի կայանատեղին: Վերլուծությունը ներկայացնում է Վարչաշրջանի ողջ տարածքում հրապարակայնորեն մատչելի կայանատեղերի խտությունը: Այնուամենայնիվ, այն չի նայում ADA հասանելի տարածություններին, որոնք գնահատվել են աշխատասեղանի վերանայման գործընթացի և ընտրական կենտրոնների տեղում գնահատման միջոցով:

Երթևեկության խցանումներ և նմուշներ

Ճանաչելով, որ երթևեկության օրինաչափությունները և մատչելիության արգելքներն առաջ են բերում քվեարկության մարտահրավերներ, հետազոտողները վերլուծեցին երթևեկի խցանումն ու երթևեկությունը՝ քարտեզագրելով յուրաքանչյուր տրանսպորտային վերլուծության գոտում ճանապարհի մեկ մղոնի հաշվարկները: Լոս Անջելեսի վարչաշրջանի փողոցային տվյալներն օգտագործվել են յուրաքանչյուր TAZ-ի սահմաններում ճանապարհային ընդհանուր մղոնները հաշվարկելու համար, իսկ Էսրին տրամադրել է տվյալներ, որոնք օգտագործվել են TAZ-ի համար յուրաքանչյուր երթևեկության հաշվարկի ընդհանուր թիվը հաշվարկելու նպատակով: Արձանագրված երթևեկության հաշվարկի ընդհանուր թիվը բաժանվել է յուրաքանչյուր TAZ-ի մայրուղու ընդհանուր մղոններով: Այս վերլուծությունը հետազոտողներին օգնեց խուսափել ընտրատարածքային տեղամասերի որոշման ժամանակ հիմնականում գերակշռող տարածքներից:

Բնակչության համար հասանելի կայանատեղիներ

Ընտրողների մասնակցությունը ապահովելու համար շատ կարևոր է, որ ընտրողները կարողանան հեշտությամբ մուտք գործել իրենց ընտրած ընտրական կենտրոն, առանց խոչընդոտ հանդիսանալու նշանակված կայանատեղիի բացակայությանը, մասնավորապես ADA հասանելի ավտոկանգառի կարիք ունեցողները: Հետազոտողները ձգտել են ապահովել



Figure 5. Տվյալների շերտեր, Մաս 1

Պատմության քարտեզներ

Տրամադրելու համար թափանցիկություն և մատչելի մոտեցում ունեցող մեթոդ ընտրական կենտրոնի տեղակայման գործընթացի բարդ վերլուծությունը հասկանալու համար, տեխնիկական խորհրդատուները մշակել են առցանց պատմությունների քարտեզներ, որոնք ապահովում են տվյալների շերտերից յուրաքանչյուրի տեսողական ցուցադրումները, որոնք օգտագործվում են վարչաշրջանի պայմանները վերլուծելու համար: Հեշտ օգտագործման առցանց պլատֆորմը նաև պարունակում է մեթոդաբանության, տվյալների աղբյուրների և ընտրական կենտրոնի տեղաբաշխման ընթացքում օգտագործված մեթոդաբանության ամփոփ նկարագրություն:

Նկարներ 5-ը և 6-ը ցույց են տալիս յուրաքանչյուր տվյալների շերտում օգտագործված չափանիշների վրա տեղադրված պահանջարկը: Մուգ գույները ցույց են տալիս համապատասխան չափանիշի ավելի բարձր կենտրոնացում: Ամենաթեթև գույները ցույց են տալիս համապատասխան չափանիշի բացակայություն կամ շատ ցածր կենտրոնացում:





Figure 6. Տվյալների շերտեր, Մաս 2





2.3 ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հնարավոր ընտրական կենտրոնի հաստատությունը հայտնաբերելու համար, PlaceWorks-ը իրականացրեց վերջերս և նախկինում գործող ընտրատեղամասերի լայնածավալ ստուգատես, որպեսզի հայտնաբերվի, թե դրանցից որոնք կծառայել որպես իդեալական ընտրական կենտրոններ: PlaceWorks-ը նաև հայտնաբերեց ոչ ավանդական հաստատություններ, որոնք երբևէ չեն օգտագործվել քվեարկության համար: Օգտագործելով 2.2.2 բաժնում նշված տվյալների շերտերը, լրացուցիչ հաստատություն, որոնք նախկինում չեն օգտագործվել որպես ընտրատեղամաս, նույնպես հայտնաբերվել և գնահատվել են համապատասխանության համար: Այս հաստատությունների ուսումնասիրման գործընթացը պահանջում էր մտավորապես ութ ամիս ինտերնետի ուսումնասիրություն, աշխարհագրական տարածումային վերլուծություն, հեռախոսային հարցազրույցներ, դաշտային գնահատումներ և շահագրգիռ կողմերի ներգրավվածություն, ինչը հանգեցրեց ավելի քան 10,000 ընտրական կենտրոնի ավելի հավանական տեղակայման տվյալների բազային:

2.3.1 Շահագրգիռ կողմերի ներգրավվածություն

Հաստատության վիճակի մասին ավելի մանրամասներ իմանալու համար, PlaceWorks-ը համագործակցել է հաստատությունների սեփականատերերի, օպերատորների և օգտագործողների հետ, ովքեր հաճախ օգտվում են այդ հաստատությունից և առավելագույնս ծանոթ են դրա առկա պայմաններին: Շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը տեղի է ունեցել շահագրգիռ կողմերի նախասիրությունների և մատչելիության ապահովման համար: Համագործակցությունները տարբեր ձևեր ունեցան, բայց բոլորը ձգտում էին հաստատել հաստատության պայմանները, ինչպիսիք են.

- Աշխատանքային ժամեր
- Հաստատության պատասխանատու անձինք
- ADA մատչելիություն
- Կայանատեղի և ընդհանուր մատչելիություն
- Հաստատության սենյակների չափսեր
- Անվտանգության միջոցներ

- Էլեկտրաէներգիա և ցանցային կապ
- Ընթացիկ ծրագրեր

ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՎԱՐՆԵՐ

Քաղաքային գործավարները կարևոր դեր ունեցան հաստատության պայմանները ստուգելու, հետազոտողների և հաստատությունների պատասխանատուների հետ կապ հաստատելու և լայն հասարակությանը ներգրավելու հարցում՝ մասնակցությունը և հետադարձ կապը խրախուսելու համար: PlaceWorks-ը միացավ աշխատակիցներին՝ Գրանցողի/Վարչապետի գործավարի ամենամյա գազաթաժողովին և ներկայացրեց ֆոկուսային տարածքների գործիքակազմը, որը ներառում էր հնարավոր հաստատությունների և համապատասխան քարտեզների ցուցակ: Գազաթաժողովից հետո աշխատակիցները անցան անհատական աղյուսակների վերանայման և հետադարձ կապի ապահովման, որոնք հետազոտողների կողմից օգտագործվել են՝ որոշելու վայրի սկզբնական համապատասխանությունը:

Որոշ դեպքերում Քաղաքային գործավարները նաև օգտագործում էին իրենց տեղական ցանցերը՝ հաստատությունների ղեկավարների, բիզնեսի սեփականատերերի և գործակալության այլ կապերի հետ հետազոտողներին կապելու համար՝ լրացուցիչ պատկերացում կազմելով գույքի պայմանների վերաբերյալ:

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանրային գործակալությունները կարևոր դեր են ունեցել հաստատությունների պայմաններն ստուգելու համար, քանի որ շատ կենսունակ հաստատություններ, ինչպիսիք են գրադարանները, համայնքային կենտրոնները և քաղաքային դահլիճները, հասարակական սեփականություն են հանդիսանում: Գործակալությունները համագործակցեցին հետազոտողների հետ՝ իրենց իրավասության տակ գտնվող բոլոր հաստատությունների պատվերով պատրաստված աղյուսակները ուսումնասիրելու համար: Որոշ դեպքերում գործակալության ղեկավարները կարողացան ճշտել տեղեկությունները բոլոր հարմարությունների համար: Մյուսներում հետազոտողները կապ հաստատեցին հաստատությունների ղեկավարների հետ՝ առաջին ձեռքից

տրամադրելու և վայրի այցելությունները պլանավորելու հարցում: Հանրային գործակալությունները, որոնց հետ այդ հարցով խորհրդակցել են, ներառում են.

- LA վարչաշրջանի Կենդանիների խնամք և վերահսկողություն
- LA վարչաշրջանի Այգիների և Ժամանցի գոտիների վարչություն
- LA վարչաշրջանի Ջրի և էլեկտրաէներգիայի վարչություն
- LA վարչաշրջանի Աշխատուժի զարգացման, ծերացման և համայնքային ծառայությունների վարչություն
- LA վարչաշրջանի գրադարան
- Լոս Անջելես քաղաքի Քաղաքային ճարտարապետության վարչություն
- Լոս Անջելես քաղաքի Հանրային աշխատանքների վարչություն
- Լոս Անջելես քաղաքի Ժամանցի գոտիների և այգիների վարչություն
- Լոս Անջելես քաղաքի Հանրային գրադարան
- Լոս Անջելես քաղաքի Տնտեսության և աշխատուժի զարգացման վարչություն
- Դպրոցական շրջաններ
- Լոս Անջելեսի վարչաշրջանի Մետրոպոլիտենի տրանսպորտի մարմին (Metro)

ԱՌԵՎՏՐԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

RR/CC-ն և նախագծի հետազոտողները հայտնաբերեցին նորարարական մոտեցում ընտրողների հետ հանդիպելուն, որտեղ նրանք արդեն հավաքվում են առևտրի օբյեկտներ գտնելու համար, որոնք բավարարում են հաստատությունների պահանջները և ստեղծում են հրավիրող և հարմարավետ միջավայր՝ ընտրողների կողմից քվեարկելու համար: Համապատասխան մանրամասն վայրերի հայտնաբերումը բարդ գործընթաց էր, որը հաշվի էր առնում առկա թափուր աշխատատեղերը, համայնքային սենյակների առկայությունը և այս գործընթացում ներգրավվելու

իրավասության հետ ամենահարմար հաստատության հետ շփվելու հնարավորությունը:


Մանրամասն առևտրի վայրերի կարևոր պատասխանատուների հետ կապ հաստատելու համար, RR/CC-ն մասնակցեցին Առևտրի կենտրոնների միջազգային խորհրդի կողմից անցկացվող Արևմտյան խորհրդածողովին և գործարքների իրականացման սիմպոզիումին: Միջոցառմանը մասնակցում էին անշարժ գույքի արդյունաբերության առաջատարներ, ներառյալ անշարժ գույքի գործակալները, բրոքերները և գույքի դեկավարները, որոնք հետաքրքրված են տարածաշրջանային անշարժ գույքի միտումներով և կարիքներով: Մասնակցելով այս իրադարձությանը, RR/CC-ն և PlaceWorks-ը կարողացան կապվել հիմնական շահագրգիռ անձանց հետ, ովքեր կարողացան հաստատել հաստատության առկայությունն ու պայմանները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ - VCPP ԱՌՑԱՆՑ ՊՈՐՏԱԼ

Ընտրական կենտրոնների տեղաբաշխման պորտալը մատչելի է որպես համացանցի վրա հիմնված գործիք, որը հնարավորություն է տալիս հասարակության անդամներին մեկնաբանել հնարավոր ընտրական կենտրոնի գտնվելու վայրերի մասին՝ օգտագործելով ինտերակտիվ քարտեզը: Պորտալը մասնակիցներին հնարավորություն ընձեռեց առաջարկել հարմարություններ՝ նշելով քարտեզի վրա հատուկ գտնվելու վայրը՝ ընտրելու հնարավոր կենտրոնի գտնվելու վայրը և տրամադրելու օբյեկտների մանրամասներ, ինչպիսիք են նրա անունը, կոնտակտային տվյալները, լուսանկարները և առանձնահատկությունները, որոնք կդարձնեն այն իդեալական վայր: Մասնակիցները նաև կարողացան ուսումնասիրել և մեկնաբանել առաջարկվող վայրերը՝ կիսելու օբյեկտի հատկությունների և պայմանների վերաբերյալ իրենց պատկերացումներ, ինչպիսիք են՝ հանրային տրանսպորտի հարևանությունը, ADA հասանելիությունը, աշխատանքային ժամերը, կայանատեղիների հասանելիությունը և պայմանները, ընկալված անվտանգությունը և ընդհանուր հարևանության բնույթը:



Figure 7. VCPP առցանց պորտալ



Պորտալի հետ ներգրավվածությունը խրախուսելու համար, այն նախատեսվել է որպեսզի հնարավոր լինի հեշտությամբ մուտք գործել աշխատասեղանի համակարգիչներից, պլանշետներից և շարժական սարքերից: Օգտատերերի համար հարմար, ֆունկցիոնալ, գրաֆիկական առումով գրավիչ և տրամաբանորեն կազմակերպված հարթակ ստեղծելու համար այն միտումնավոր կերպով մշակված էր բոլոր հնարավորությունների օգտագործողներին բավարարելու համար և ներառում էր մատչելիության այնպիսի հնարավորություններ, ինչպիսիք են՝ հեշտ ընթերցվող տառատեսակները, գույները և էկրանն ընթերցող ինտերակտիվ համատեղելիությունը: Պորտալը թույլ տվեց օգտվողներին, ում ավելի քիչ հարմար է քարտեզներ ընթերցելը, առաջարկվող հարմարությունները ներբեռնել ցանկի ձևաչափով:

Միջ-մշակութային և բազմալեզու մասնակցությանն աջակցելու համար Պորտալը թարգմանվել է 13 լեզուներով:

- Հայերեն | Հայերեն
- Չինարեն | 中文
- Անգլերեն
- Ֆարսի | فارسی
- Հինդի | Հայերեն
- Ճապոներեն | 日本語
- Խմեր | ភាសាខ្មែរ
- Կորեերեն | 한국어
- Ռուսերեն | русский
- Իսպաներեն | Español
- Տազալոզ
- Թայ | ไทย
- Վիետնամերեն | Tiếng Việt

Ընտրական կենտրոնների տեղաբաշխման պորտալը հասանելի էր 2018 թվականի մայիսից մինչև 2019 թվականի մարտը: Այս 10 ամիսների ընթացքում PlaceWorks-ը ուսումնասիրել է հասարակության կողմից ներկայացրած մոտ 1,700 դիտողություններ և առաջարկություններ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆԴՐՈՒՄՆԵՐ
Ի լրումն Պորտալի միջոցով առցանց ներգրավվածության, RR/CC-ն հասարակության անդամներին ներգրավեց համայնքի ուժեղ ներգրավվածության միջոցով, որը ներառում էր 67 հանդիպում 8 ամսվա ընթացքում: Համայնքային այս նախաձեռնությունը հասարակության անդամներին կրթում էր Ընտրողների ընտրության մասին օրենքի և ընտրական կենտրոնի տեղաբաշխման ծրագրի վերաբերյալ, մինչդեռ նրանց հրավիրում էր մեկնաբանել և առաջարկել ընտրական կենտրոնների տեղակայությունների մասին:

Հանդիպման մասնակիցներն այցելեցին բացօթյա կայաններ, որտեղ նրանք հանդիպեցին համայնքային կազմակերպությունների ներկայացուցիչներին, տեխնիկական խորհրդատուների կամ Վարչաշրջանի աշխատակազմի հետ և տեսան ինտերակտիվ ուսումնական ցուցադրություն՝ Պորտալի տարբեր գործառնությունները նրանց ներկայացնելու համար: Նրանք նաև կարողացան իրական ժամանակի մեկնաբանություններ և առաջարկություններ տրամադրել VCPP պորտալի կամ գրավոր մեկնաբանությունների քարտերի միջոցով: Համայնքային ժողովների ընթացքում ստացված մեկնաբանությունների և առաջարկների քարտերը հետագայում մուտքագրվեցին Պորտալ՝ համայնքի բոլոր հանդիպումներում արված բոլոր մեկնաբանությունները հանրության համար տեսանելի դարձնելու նպատակով:

Հանդիպում անցկացնողները բաժանեցին նաև տպագիր բացիկներ՝ QR կոդով, որը կապված էն Պորտալին, որպեսզի մասնակիցներին հնարավորություն ընձեռվի հեշտությամբ մուտք գործել Պորտալ իրենց բջջային սարքերի միջոցով՝ հանդիպման ընթացքում կամ իրենց հարմար ժամանակ: Համայնքային հանդիպումներին վերաբերող լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել Բաժին 3.3-ում:

Figure 8. Բացիկի չափի թուղցիկ



2.3.2 Վայրի գնահատում – Աշխատասեղանային ուսումնասիրություն


ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաստատությունների գնահատման աշխատասեղանային ուսումնասիրության փուլը հնարավորություն տվեց իրականացնել հնարավոր վայրերի առցանց գնահատում, որին հաջորդեց հեռախոսային հարցազրույցները, որոնք հանգեցրին գնահատման գործընթացում հաստատությունների հետ փոխգործակցության առաջին մակարդակին: Վերլուծության այս փուլը ենթադրում էր առկա օբյեկտների գրառումների ուշադիր ուսումնասիրություն և կատարելագործում և ծառայում էր այն հաստատությունների վերացմանը, որոնք չեն բավարարում նվազագույն պահանջները, կրկնօրինակ գրառումներ էին, կամ այլս գոյություն չունեին:

Աշխատասեղանային ուսումնասիրության գործընթացում ձեռք բերված տեղեկատվությունը մուտքագրվել է ArcGIS առցանց ծրագիր, ընտրական կենտրոնի աշխատասեղանային հարցման ծրագիր, իսկ հետագայում ոլորտի հետազոտողների կողմից օգտագործվել է տեղանքի հաստատությունների գնահատումները կատարելիս ստուգելու և հաստատելու համար հաստատության մանրամասները և կոնտակտային տվյալները:



Figure 9. Աշխատասեղանային ուսումնասիրության պորտալ



Տվյալների ուսումնասիրություն

Աշխատասեղանային ուսումնասիրության առաջին փուլը ներառում էր յուրաքանչյուր հաստատության նախնական ստուգում և գնահատում՝ օգտագործելով վեբ-քարտեզագրման գործիքներ, հանրային գրառումներ, Վարչաշրջանի GIS տվյալների շերտեր, տեղական բիզնես տեղեկատու և ընդհանուր առցանց հետազոտություններ: Այս հետազոտության նպատակն էր պարզել, թե արդյոք հաստատությունը բավարարում է նվազագույն պահանջները և պետք է այն տեղափոխվի վերլուծության հաջորդ փուլ, կամ արդյոք այն պետք է անտեսվի որպես ոչ պիտանի վայր: Դիտարկված նվազագույն պահանջները.

- Կայանատեղի առկայություն և տեղակայում—ADA մատչելի և ընդհանուր կայանատեղի
- Հեռավորությունը տրանսպորտից

- ADA մատչելիություն
- Հաստատության կարգավիճակ (չգործող, քանդված, օգտագործման փոփոխություն և այլն)
- Ընդհանուր աշխատաժամեր
- Վստահելի կոնտակտային տվյալներ
- Մասնակցության պատրաստակամություն

Հեռախոսային հարցազրույցներ

Նախնական պահանջները բավարարող հարմարությունները վերլուծության հաջորդ փուլին անցան, որը ներառում էր հեռախոսային հարցազրույց, որը նախատեսում էր հավաքել լրացուցիչ տեղեկություններ հաստատությունների վերաբերյալ՝ որոշելու, թե վայրը պատրաստ է մասնակցել ընտրական կենտրոնի աշխատանքներին և բավարարել վայր այցի պահանջները: Այս խոսակցությունները հաճախ ներկայացնում էին Ընտրողների ընտրության մասին օրենքը և քվեարկության նոր մոդելը և նախաձեռնում էին խիստ կարևոր քայլ՝ հաստատությունների ղեկավարների և ընտրատարածքների ընտրական աշխատակազմի միջև էական հարաբերությունների հաստատման համար:

Հետազոտողները ներակայացրեցին ծրագրի նպատակները և ընտրական կենտրոնի թիրախային բնութագրերը և փորձեցին լրացնել աշխատասեղանի ուսումնասիրության փուլում հայտնաբերված տվյալների բացերը: Հաստատությունների հատուկ մանրամասներ միշտ չէին հասանելի հեռախոսային հարցազրույցների միջոցով, քանի որ պատասխանատու անձը հաճախ տեղյակ չէր տեխնիկական մանրամասների մասին, ինչպիսիք են ցանցի միացումը, սենյակների չափերը և ծրագրերի անհամատեղելիությունը: Եթե հաստատության պատասխանատու անձինք չէին կարող տրամադրել լրացուցիչ մանրամասներ, բայց պատրաստ էին մասնակցել, PlaceWorks-ը հաստատությունները տեղափոխեց վերլուծության հաջորդ փուլ: Հարցազրույցի ընթացքում պատասխանատու անձանց խնդրել են ստուգել.

- Մատչելի սենյակ (ճաշարան, հանդիպումների սենյակ, սպորտային դահլիճ և այլն)
- Սենյակի չափս (քառակուսի ֆուտ կամ չափսեր, եթե հնարավոր է)

- Սենյակում էլեկտրական վարդակների քանակ
- Ցանց և համացանցային կապ
- Պահեստային հարմարություններ
- ADA մատչելիության խոչընդոտներ
- Հաստատության պատրաստակամությունը մասնակցել

Այն հաստատությունները, որոնք անցան ուսումնասիրության հաջորդ փուլ, ստացան երկրորդ հեռախոսագանգ՝ վայր այցելություն նախաձեռնելու համար: Որոշ դեպքերում, այս երկրորդ գանգը պարզապես նախագծի մասին հիշեցում էր, և հետագոտողները հեշտությամբ կարողացան պլանավորել վայրի այցելություններ: Այլ դեպքերում, երկրորդ գանգը կատարվել ավելի բարձր մակարդակի պատասխանատու անձին, ով ցանկություն են հայտնել չմասնակցել, ինչը հանգեցրեց հնարավոր վայրի հետաքննման: Այն դեպքերում, երբ հետագոտողները չկարողացան կապ հասնել համապատասխան հաստատությունների հետ՝ մանրամասները ճշտելու և վայրի այցը պլանավորելու համար, հետագոտողները այդ հաստատություններում իրականացրեցին արտաքին գնահատում:

Ստանդարտ արարողակարգով յուրաքանչյուր հաստատություն պետք է զանգահարել մինչև երեք անգամ, մինչև կապ հաստատվի: Եթե ձայնային փոստն առկա էր, հաղորդագրություն էր թողնվել, և շատ դեպքերում կապի վերջին փորձը կատարվել է է.փոստի միջոցով:

Արդյունքներ

Աշխատասեղանային ուսումնասիրությունից և հեռախոսային հարցազրույցներից հետո յուրաքանչյուր հաստատությանը տրամադրվեց հետևյալ կատեգորիաներից մեկը:

- Ընդունված. Վայրեր, որոնք բավարարում էին նվազագույն պահանջը և հետաքրքրված էին լինելու ընտրական կենտրոններ:
- Ընթացքի մեջ. Վայրեր, որոնք գնահատվել են առցանց՝ ինտերնետային որոնումների միջոցով, բայց չեն գնահատվել հեռախոսային հարցազրույցների միջոցով:

- Սպասողական/Չորոշված. Վայրեր, որոնք չեն ուսումնասիրվել, քանի որ ուսումնասիրության տարածքում թիրախային թիվը արդեն հասել էր:
- Մերժված (ADA). Վայրը չի համապատասխանում ADA պահանջներին:
- Մերժված (կրկնություն). Կրկնված կամ սխալ գրառումներ:
- Մերժված (other). Վայրեր, որոնք որոշվել են անբարենպաստ հետևյալ պատճառներով՝ ներառյալ սենյակի անբավարար չափը, ծրագրային անհամատեղելիությունը, այլևս գոյություն չունեցող օբյեկտներ, հաստատությունները չեն ցանկացել մասնակցել, կամ չեն ճանաչվել գործընկեր գործակալությունների և Քաղաքային ծառայողների կողմից որպես հարմար հաստատություն:

Այն հաստատությունները, որոնք դասակարգվել են որպես «Ընդունված» կամ «Ընթացքի մեջ», տեղափոխվել են վերլուծության հաջորդ փուլ, որով նախատեսվում է այցելել վայրը: «Սպասողական» դասակարգված հաստատությունները արխիվացվել են: Մերժված օբյեկտները արխիվացվել են որպես ոչ պիտանի: Այս վայրերը կարող են հարմար դառնալ, եթե ADA-ին համապատասխան շենքի բարելավումներ են արվել, կամ եթե նրանք ցանկություն են հայտնում մասնակցելու:

Բնակչության վրա հիմնված ուսումնասիրության տարածքի թիրախների արդյունքներ

Հետագոտողները վերլուծել են 188 ուսումնասիրության տարածքներ, որոնք պարունակում են ավելի քան 10,000 հավանական օբյեկտներ՝ նպատակ ունենալով ցուցակը նեղացնել 2300 ամենահարմար վայրերով: Օգտագործելով բնակչության և զբաղվածության կենտրոնի տվյալների շերտերից ստացված տեղեկությունները, հետագոտողները կարողացան մշակել բանաձև՝ որոշելու, թե ինչպես պետք է վերջնական ընտրական կենտրոնների հաստատությունները բաշխվեն ամբողջ Վարչաշրջանում: Այս բանաձևն օգտագործվում էր յուրաքանչյուր ուսումնասիրության տարածքում ընտրական կենտրոնների թիրախային թիվը հաստատելու համար՝ ըստ VCA-ի բնակչության վրա հիմնված պահանջների:



Այս բանաձևի կիրառումը հետազոտողներին օգնեց կրճատելով հասնել 10,000 հաստատության՝ ռազմավարակ տեսանյունից փնտրելով այնպիսի հաստատություններ, որոնք միմյանցից ոչ ավելի քան քառորդ մղոն հեռավորության վրա էին գտնվում, մինչդեռ պահպանելով VCA-ի բնակչության վրա հիմնված պահանջները (տես Բաժին 1.3.1), որոնք ապահովում են ընտրատարածքներում քվեարկելու արդար հնարավորությունները:

Ձգտելով գերազանցել VCA պահանջները, հետազոտողները բազմապատկեցին յուրաքանչյուր ուսումնասիրության տարածքի համար նախատեսված ընտրական կենտրոնների թիրախային թիվը 2.2-ով, որպեսզի ապահովեն RR/CC-ն անհրաժեշտ առավելագույն հնարավորություններ, քան անհրաժեշտ է, ինչը հնարավորություն կտա ճկունություն ցուցաբերել ընտրությունները համակարգելով հաստատության մատչելիության հետ:

Երբ ուսումնասիրության տարածքի ճշգրտված թիրախները բավարարվեցին, հաստատությունները պատրաստ էին պլանավորված այցերի համար՝ ուղղված «տեղի-ճշմարտության» աշխատասեղանի հետազոտության արդյունքների հայտնաբերմանը, այսինքն՝ անձամբ հաստատել այդ տվյալները և հաստատել վերջնական առաջարկությունը՝ հաստատությունը որպես պոտենցիալ ընտրական կենտրոն ծառայելու համար:

2.3.3 ԴԱՇՏԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ / Վայր-ճշմարտություն

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այն հաստատություններում, որոնք անցել են դաշտային ուսումնասիրության փուլ, անցկացվել են վայրի այցելություններ՝ տեղում վիճակն ստուգելու համար: Հետազոտողներն օգտագործեցին այս հնարավորությունն՝ հետազոտության ճշգրտությունն ստուգելու, տվյալների բացերը լրացնելու և ցանկացած անսպասելի պայմաններ հայտնաբերելու համար, որոնք կարող են փոխել վայրի համապատասխանությունը: Գործընթացի այս փուլի նպատակն էր որոշել, թե որ հաստատություններն են առավել հարմար, ինչը հանգեցրեց վերջնական առաջարկությունների՝ 1000 հավանական ընտրական կենտրոնների համար: Ուսումնասիրողները գնահատեցին հետևյալ պայմանները.

Համընդհանուր մատչելիություն

Ներքին խոչընդոտների առկայություն

ADA-ի համար նախատեսված կայանատեղի

Համապատասխան սենյակի չափսեր և պահեստային տարածք

Էլեկտրաէներգիա և էլեկտրական հզորություն

Անվտանգ ցանցային կապ

Վեց ամսվա ընթացքում դաշտային հետազոտողների մի խումբ այցելեց 2,300 հաստատություն ամբողջ Լոս Անջելեսի վարչաշրջանում: Միջին հաշվով, հետազոտողները յուրաքանչյուր հաստատությունում անցկացրեցին 15-30 րոպե, մեքենաներով անցան մոտավորապես 20,000 մղոն, և, ի վերջո, տրամադրեցին մոտ 4,000 ժամ հատկացված հաստատությունները գնահատելու համար:

Պլանավորում

Գույքի սեփականատերերի և ղեկավարների հարմարության համար հետազոտողներն սկսեցին ոլորտի վերանայման գործընթացը՝

հեռախոսագանգեր կատարելով՝ նախօրոք տեղեկացնելով վայր այցելելուց և դաշտային գնահատումներ կատարելուց առաջ: Մշակվել է առցանց պլանավորման գործիք՝ ավելի քան 2,000 հաստատություններ այցելությունները համակարգելու հավակնոտ ջանքերին հետևելու համար:

Անհրաժեշտության դեպքում, PlaceWorks-ը համագործակցեց Քաղաքային գործավարների և դպրոցական շրջանների հետ՝ ծրագրեր և անձնակազմի ժամանակացույցեր համակարգելու համար: Քաղաքային գործավարները հաճախ օգնում էին հեշտացնել խոսակցություններն՝ ուղարկելով հիշեցումներ, հաստատելով կոնտակտային տվյալները և, որոշ դեպքերում, օժանդակելով հնարավորությունների մատչելիությանը:

PlaceWorks-ը ձգտում էր նվազագույնի հասցնել կանոնավոր գործողությունների և ծրագրերի խանգարումներն ու խափանումները, և, հնարավորության դեպքում, պլանավորել վայրերի այցելությունները՝ հաստատությունների խնդրանքները բավարարելու համար:

Այլ դեպքերում, երբ հաստատությունները չունեն աշխատանքային նորմալ ժամեր, վայրի այցելությունները նշանակվեցին աշխատանքային ժամերին՝ հաստատությունների ղեկավարության հետ հանդիպելու հույսով: Այս մոտեցումը հատկապես կարևոր էր այն ժամանակ, երբ գնահատում էին երկրպագության վայրերը, որտեղ ղեկավարներին դժվար էր հասնել շաբաթվա օրերին:

Այն դեպքերում, երբ զանգահարման կամ էլնամակագրման երրորդ փորձից հետո ուսումնասիրողները չկարողացան կապ հաստատել հաստատության պատասխանատուի հետ, իրականացվեց արտաքին գնահատում: Այս արտաքին գնահատականներն սահմանափակվում էին կայանատեղիի և ADA-ի հասանելիության հաստատմամբ, բայց դրանք սովորաբար լրացվում էին վերլուծության աշխատասեղանի ուսումնասիրության փուլում հավաքված տվյալներով: Տեղանքի այցն իրականացվել է անկախ ամեն ինչից:

Տվյալների հավաքագրում

Դաշտային տվյալներն արդյունավետորեն հավաքելու համար հետազոտողներն օգտագործեցին հարմարեցված, ցանցի վրա հիմնված գործիքներ, ինչպիսիք են Survey123- ը և Workforce ArcGIS-ի համար, որոնք համատեղելի էին բջջային կապով կամ վեբ գննարկիչով հագեցած ցանկացած սարքի հետ: Այս նորարարական գործիքները հետազոտողներին թույլ տվեցին.

Անհատ ուսումնասիրողների համար նշանակել վայրի այցելություններ

Դիտել նշանակված վայրի այցելությունները

Պլանավորել ուղիները՝ հիմնված նշանակված հաստատությունների հեռավորության վրա

Լրացնել հաստատությունների գնահատման ձևերը

Փաստաթղթավորել հաստատության վերաբերյալ նշումները

Լուսանկարել և պահպանել հաստատության լուսանկարները



Գնահատման չափանիշ

Դաշտային այցելություններ կատարելիս, հետազոտողներն իրենց ջանքերը կենտրոնացրեցին աշխատասեղանային ուսումնասիրության ընթացքում չհաստատված տվյալների բացերը լրացնելու և աշխատասեղանային ուսումնասիրության արդյունքների հետ կապված որևէ փոփոխության կամ անհամապատասխանության մասին նշելու վրա: ADA-ի մատչելիության գնահատման չափանիշները հիմնված են ԱՄՆ Արդարադատության նախարարության կողմից հաստատված ընտրատեղամասերի համար նախատեսված ADA ցուցակի վրա: Զգուշորեն գնահատվել են վայրի հետևյալ բնութագրերը:

1. Կայանատեղի

Վայրի կայանատեղիների դիրքն ու քանակը (սովորական և ADA)

- ADA կայանատեղին պետք է գտնվի մատչելի մուտքին հնարավորինս մոտ տարածության վրա:

ADA կայանատեղիի մակերես

- ADA տարածքը պետք է լինի կայուն, ամուր և չսահող մակերեսի վրա և չունենա լայն չեղքեր և վնասված ծածկույթ:

ADA կայանատեղիների թեքություն (իջնող և բարձրացող թեքություն)

- Թեքությունը պետք է չգերազանցի 2.08 տոկոսը՝ որևէ ուղղությամբ:

Ուղևորի իջեցման և նստման տարածքներ

- Երբ գոյություն ունեն ուղևորների մի քանի իջեցման տարածքներ, առնվազն մեկ իջեցման տարածք պետք է մատչելի լինի:

2. Մատչելի ճանապարհի մոտակա մատչելի կայանատեղից մինչև հիմնական մուտքը

Մայթի կտրվածքի վայրեր և հիմնական թերություններ

Թեքահարթակ. թեքություն և արգելակիչներ

- Թեքահարթակները պետք է համապատասխանեն թեքության, լայնության, իջեցումների, բազրիկների և եզրերի պաշտպանության պահանջներին:
- Թեքահարթակները պետք է ուղիղ իջեցումներ ունենան ներքևի, վերևի մասերում և որտեղ թեքահարթակները փոխում են ուղղությունը:

Մակերեսը ճանապարհի երկայնքով

- Մակերեսները պետք է լինեն կայուն, ամուր և չսահող:

Բարձրության կտրուկ փոփոխություն կամ ցցված առարկաներ

- Ճանապարհը պետք է ազատ լինի հարթության, աստիճանի, բարձր շեմերի կամ թեք քայլուղիների կտրուկ փոփոխություններից:
- Օբյեկտներ, որոնք կախված են քայլուղիների վրա պետք է լինեն առնվազն 80 դյույմ բարձր, և ոչ ավելի քան 12 դյույմ ցցված:
- Դրսի ցցված օբյեկտները ներառում են սյան կամ պատի վրա ամրացված ցուցանակներ և ծառերի ցածր կախված չյուղեր:
- Ներքին ցցված առարկաները ներառում են հրդեհաշիջման սարքեր, պատի վրա ամրացված ցուցադրման պատյաններ, բաց սանդուղքներ, ելքի նշաններ, գլխավերևի ցուցանակներ, վահանակներ և կամարակապ դռներ:

Լրացուցիչ նկատառումներ

- Մատչելի ուղին պետք է լինի 36 դյույմ լայնությամբ և չունենա առանց թեքահարթակի աստիճանների կամ մայթեզրեր:
- Եթե մատչելի ուղու վրա առկա են խոչընդոտներ, որոնք հնարավոր չէ մեղմացնել, պետք է ընտրվի և գնահատվի այլընտրանքային ուղի:

- Այն դեպքերում, երբ մոտակա կայանատեղին չի գտնվում հաստատության հետ նույն կամ հարակից թաղամասում, կայանատեղիից ճամփորդության ճանապարհը չի գնահատվել:

3. Մատչելի ուղի տրանսպորտի մոտակա կանգառից մինչև հիմնական մուտք

Մայրի կտրվածքի վայրեր և հիմնական թերություններ

Հասանելի թեքահարթակի թեքություն

Անցուղիների մակերես

Բարձրության ցանկացած կտրուկ փոփոխություն

Մատչելի ուղու երկայնքով մտահոգիչ այլ մանրամասներ

Եթե մոտակա կայանատեղին չի գտնվում հաստատության հետ նույն կամ հարակից թաղամասում, կայանատեղիից ճամփորդության ճանապարհը չի գնահատվել.

4. Շենքի մատչելի մուտքեր

Հիմնական մուտքի դռան լայնություն

- Մատչելի մուտքի դռներից մեկը պետք է ունենա առնվազն 32 դյույմ լայնություն inches՝ 90 աստիճանով բացվելու դեպքում:

5. Սենյակի մանրամասներ

Մատչելի սենյակների քանակը և դրանց չափստերը

- Սենյակի չափսի դասակարգումների և տարողունակության համար տես Աղյուսակ 1:
- Մի քանի սենյակներ կարելի է միացնել, եթե սենյակների մեջ կամ հստակ գծով տեսադաշտ:

Էլեկտրական վարդակների քանակ

Սենյակը կղպելու հնարավորություն

6. Լիֆտեր և վերելակներ

Եթե քվեարկության տարածքը մուտքի հետ միևնույն հարկում չի գտնվում, պետք է գործի անկախ շահագործվող վերելակ կամ լիֆտ՝ մատչելի ուղի տրամադրելու համար:

- Վերելակի կամ լիֆտի դռներն, ինչպես նաև դրանց ներսի տարածքը պետք է լինի բավականին լայն, որպեսզի տեղավորի անվասայլակներ կամ տեղաշարժման այլ սարքեր:

7. Հաստատության այլ մանրամասներ

Ցանցային կապ

- Պահեստային սենյակից բացի բոլոր սենյակները պետք է ունենան մուտք դեպի համացանց

Աշխատանքային ժամեր

Արդյունքներ

Դաշտային գնահատման գործընթացում պատկերացումներ ստացվեցին հաստատության պայմանների վերաբերյալ և բացահայտվեց, որ այցելված հաստատությունների մոտ 84 տոկոսը համարվել է հարմար որպես հավանական ընտրական կենտրոններ: Մնացած 16 տոկոսը չի բավարարել պահանջները և չի համարվել հարմար որպես հավանական ընտրական կենտրոն: Այս հաստատություններն արխիվացվել են Վարչաշրջանի տվյալների բազայում՝ որպես ապագա տեղեկանք օգտագործելու համար, քանի որ կատարվում են ADA-ի մատչելի շենքերի փոփոխություններ և հաստատությունների ղեկավարները հարմարվում են քվեարկության նոր մոդելին:

Վայրերի մերժման ամենատարածված պատճառներն էին.

ADA մատչելիություն. Այն վայրերը, որոնք չեն ապահովում ADA մատչելիություն, չկարողացան բոլորի համար արդար



մատչելիությունն ապահովել, հետևաբար, չեն բավարարում նվազագույն պահանջները:

Սենյակի չափսեր. Հաստատությունների սենյակները չափազանց փոքր էին անհրաժեշտ սարքավորումները տեղավորելու համար: Քվեարկության նոր մոդելի համաձայն, սենյակի նվազագույն հարմար չափը մոտավորապես 1,000 քմ է: Սենյակի նվազագույն հարմար չափը իջեցվել է որոշ ուսումնասիրության տարածքներում՝ ավելի մեծ սենյակներ ունեցող օբյեկտների բացակայության պատճառով: Այն հարմարությունները, որոնք ընդունվել էին, բայց սկզբնական պահանջված չափից պակաս էին, կամ հանրային օբյեկտներ էին, կամ այն հաստատությունները, որոնք նախկինում ծառայում էին որպես ընտրատեղամասեր:

Մուտքի մերժում. Դաշտային ուսումնասիրողներին մերժել են մուտք գործել հաստատություն՝ չնայած նախկինում ունեցած պայմանավորվածության:

Մասնակցության մերժում. Վայրի պատասխանատու անձերը կա՛մ ցանկացան այլևս չմասնակցել գործընթացին, կա՛մ հաստատության պայմանները ներկայացրին մատչելիության բախումները: Որոշ դեպքերում սենյակները, որոնք նախկինում օգտագործվում էին քվեարկության համար, այլևս չեն կարող օգտագործվել ծրագրերի կամ սեփականության իրավունքի փոփոխության պատճառով:

Որոշ հաստատություններ չեն բավարարում ընտրական կենտրոնի համապատասխանության պահանջներին, բայց ներկայացնում էին այլ ցանկալի որակներ և առաջարկվում էին որպես փոստով քվեարկության ներկայացման վայրեր: Ենթակառուցվածքների ձեռագման և քաղաքականության վերջին փոփոխությունների պատճառով, երկրում գործող շատ հաստատություններ չեն բավարարում ADA-ի հիմնական պահանջները:

ADA մատչելիության մեղմացման միջոցառումներ

Շենքերի արդիականացման այս դարաշրջանում ճկունություն թույլ տալու համար, PlaceWorks-ը գնահատեց այն օբյեկտները, որոնք

չկարողացան բավարարել ADA-ի հասանելիության պահանջները՝ պարզելու հնարավոր մեղմացման միջոցառումները, որոնք կարող են բարելավել մատչելիությունը համեմատաբար արագ և մատչելի: Մեղմացման հայտնի հնարավորություններ ունեցող հաստատությունները չեն մերժվել, եթե չլինեն համապատասխան բնակչության հարևանությամբ այլ ADA մատչելի և լիովին հարմար հաստատություններ: Համաձայն ADA-ի ընտրատեղամասերի ցուցակի, աջակցվող մեղմացման միջոցառումները կարող են ներառել.

Երթևեկության կոներ. Երթևեկության կոները կարող են օգտագործվել ավտոկանգառի և ուղևորների բեռնման գոտիներ նշելու, ժամանակավոր կայանման նշաններ պահելու և ցանկացած նախանշված օբյեկտների մասին նախազգուշացնելու համար:

Վայանման նշաններ. Ժամանակավոր կայանման նշանների կարելի է դնել կոների վրա՝ նշելով միկրոավտոբուսի համար մատչելի և այլ մատչելի կայանատեղիները:

Ուղղություն ցույց տվող նշաններ. Ուղղություն ցույց տվող նշանները կարող են օգտագործվել հասանելի ուղիները, մուտքը և քվեարկության տարածքը ցույց տալու համար, եթե ճամփորդության ուղին պարզ չէ:


Շարժական թեքահարթակներ. Առանց բազրիքների շարժական թեքահարթակները կարող են օգտագործվել եզրաքարեր մուտք ապահովելու համար և տեղադրվում են ուղու մեջ անցքեր կամ բացեր ծածկելու համար: Բազրիքների շարժական թեքահարթակները կարող են օգտագործվել չափազանց մեծ աստիճանների հասանելիությունն ապահովելու համար:

Սեպեր. Սեպերը կարող են մատչելիությունն ապահովել՝ թեթևակի փոխելով ուղու մակարդակը:

Դուռը փակվելու արգելանք. Դուռը փակվելու արգելանքները կարող են օգտագործվել դռներն ավելի լայն բացելու համար, եթե 90 աստիճանում դռան լայնությունը բավարար չէ մատչելիության համար:

Դռան շարժական սյուներ. Դռների միջի կենտրոնական սյունը որոշ դեպքերում կարող է հեռացվել՝ անվասայլակներին և տեղաշարժման այլ սարքերին պահանջվող լայնությունն ապահովելու համար:

ADA հասանելիության մեղմացման միջոցների օրինակներ



Source: <https://www.ada.gov/votingchecklist.pdf>

Մասնակցության խոչընդոտներ

Նախկինում որպես ընտրատեղամասեր աշխատող հաստատությունները հնարավորություն էին տալիս պատկերացում կազմել ընտրությունների անցկացման պատմական մարտահրավերների վերաբերյալ և արտահայտեցին ակնկալվող դժվարությունները, որոնք կարող են առաջանալ քվեարկության նոր մոդելի պատճառով: Որոշ դեպքերում այդ դժվարությունները որպես խոչընդոտ հանդիսացան մասնակցության համար: Հայտնաբերված խոչընդոտները ներառում են.

Ծրագրային խոչընդոտներ. Հաստատության ներսում հարմարավետ սենյակները հաճախ զբաղված են շարունակական ծրագրերի

համար, որոնք կա՛մ եկամուտ են բերում, կա՛մ ծառայություններ են մատուցում համայնքին: Քվեարկությունը տեղավորելու համար այս ծրագրերը դադարեցնելը կամ չեղարկելն անհարմարություն է առաջացնում հաստատությունների և այդ ծառայություններին ապավինած համայնքի անդամների համար:

Աշխատանքային ժամեր. Հաստատությունները ի վիճակի չեն ապահովել անհրաժեշտ անձնակազմը և սարքավորումների շահագործման հետ կապված ծախսերի ավելացումն՝ սովորական աշխատանքային ժամերից դուրս:

ADA մատչելիություն. ADA-ի համար անբավարար մատչելիություն ունեցող հաստատությունները դժվարացնում են հաշմանդամ ընտրողների մուտքը և այդ հաստատություններից օգտվելը:

- **Անբավարար քանակությամբ ցուցանակներ.** Երբ մշտական ցուցանակներն առկա չեն, ընտրողները դժվարանում են հաստատությունում տեղակայել նշանակված սենյակները: Արտաքին ցուցանակների սահմանափակ տեսանելիությունն ընտրողների համար դժվարացնում է հաստատության տեղակայումը, ներառյալ կայանատեղին և նշանակված մուտքերը:

Ընդունված հաստատություններ

Որպեսզի ընտրական կենտրոնի մոդելի միջոցով ապահովված ճկունությունը լիարժեքորեն ընդունվի, PlaceWorks-ը փորձեց պարզել հաստատության մի շարք տեսակներ, որոնք բավարար քանակություն են ապահովելու Լոս Անջելեսի ընտրողների բազմազան նախասիրությունների համար:

Որպես հավանական ընտրական կենտրոններ ընդունված ամենատարածված հաստատություններն էին հանրակրթական դպրոցները, երկրպագության վայրերը և հանրային հաստատությունները, ինչպիսիք են գրադարանները և համայնքային հանգստի կենտրոնները: Մա համահունչ է թիրախային խմբին և համայնքային հետազոտությունների արդյունքներին, որոնք ցույց են տվել, որ ընտրողները հիմնականում գերադասում են քվեարկել այնպիսի տեղերում, ինչպիսիք են գրադարանները, դպրոցները, համայնքային կամ հանգստի կենտրոնները և քաղաքապետարանները: Այս ընդունված հաստատությունները տեղափոխվեցին Ընտրական կենտրոնի վայրի համապատասխանության գործիք՝ վերջնական առաջարկությունների համար ընտրելու առավել հարմար 1,000 ընտրական կենտրոններ:


2.3 ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԱՅՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ

VCA ուղեցույցներին և գործառնական այլ պահանջներին օժանդակելու համար, ընտրական կենտրոնների վերջնական առաջարկությունները մշակելիս, մշակվել է Ընտրական կենտրոնի վայրի համապատասխանության գործիք: Այս գործիքը հետազոտողներին հնարավորություն տվեց հետազայում վերլուծել 2,300 ընդունված հաստատություններ և որոշել լավագույն 1,000 հաստատությունները, որոնք կօգտագործվեն 2020-ի

Նախագահական առաջնահերթ ընտրություններում և դրան հաջորդող ընտրություններում: Նպատակն էր՝ հաստատությունների գնահատման ընթացքում ընդունել ավելի շատ հաստատություններ, քան պահանջվում էր՝ պահանջարկի շերտերը և այլ չափանիշներ օգտագործելու համար՝ այդ ընդունված հաստատությունները դասակարգելու և գնահատելու համար: Ընտրական կենտրոնի վայրի համապատասխանության գործիքը հետազոտողներից թույլ տվեց ուսումնասիրել տարբեր սցենարներ՝ նշելով պահանջարկի տարբեր շերտեր:

Այս սցենարներն ունեին չորս հիմնական կատեգորիա՝ սոցիալ-տնտեսական, կյանքի/աշխատանքի, ընտրողի և տրանսպորտի, և յուրաքանչյուր հիմնական կատեգորիա ուներ ենթակարգեր: Պահանջարկի յուրաքանչյուր շերտի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տես Բաժին 2.2.2:

Figure 10. VSAP գործիք



2.3.1 Գործիքի մշակման գործընթաց

Ընտրական կենտրոնի վայրի համապատասխանության գործիքն ստեղծվել է օգտագործողի համար հարմար վեբ հավելվածի միջոցով՝ թույլ տալու ճկունությունը տարածել և քննարկել մեթոդաբանությունը VSAP տեխնիկական խորհրդատվական հանձնաժողովի, Խորհրդատվական հանձնաժողովի, Գործադիր կառավարման հանձնաժողովի և RR/CC աշխատակազմի բոլոր անդամների հետ:

Ընտրական կենտրոնի վայրի համապատասխանության գործիքը բաղկացած է չորս հիմնական բաղադրիչներից.

- **Հրահանգներ.** Օգտագործողներին տրամադրել է ընդհանուր հրահանգներ, թե ինչպես օգտագործել գործիքը և նկարագրել վերջնական ելքային քարտեզում օգտագործված սիմվոլիկան:
- **Քարտեզ.** Ցուցադրեց համապատասխանության մոդելի սցենարների արդյունքները և վայրի ընտրության գործիքի վերջնական արդյունքը: Արդյունքները ցույց տվեցին նախընտրելի տեղանքներն՝ ելնելով ընտրված կշռման և խորհրդանշված հաստատությունների հիման վրա՝ ըստ սենյակի չափի:
- **Համապատասխանության մոդելավորում.** Գործիք, որն օգնեց օգտագործողներին ձևավորել իրենց նախընտրելի հարմարության մոդելն՝ ընտրելով և կշռելով տարբեր սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական պահանջարկի շերտերն ըստ տոկոսների և կատարելով վերլուծությունը՝ ջերմային քարտեզի արդյունքի արտադրության համար, որը ցույց է տալիս ամբողջ վարչաշրջանի ընտրական կենտրոնների համապատասխանությունը: Օրինակ՝ տրանսպորտի կանգառների մոտակայքում ամենահարմար ընտրական կենտրոնները որոշելու համար օգտագործողները մշակեցին այդ մոդելը և մյուսների համեմատ ավելի բարձր տոկոս տվեցին «Փոխադրումներ-տարանցիկ հասանելիություն» շերտին: Գործիքը նաև հնարավորություն տվեց հետազոտողներին գործարկել տարբեր սցենարներ՝ տեսնելու, թե ինչպես կշռվածությունը կազդի ընտրական կենտրոնների արդար բաշխման վրա:
- **Վայրի ընտրության գործիք.** Կիրառեց համապատասխանության մոդելի կողմից նշված սցենարներն առկա հարմարություններին՝

որոշելու, թե ինչպես է հարմար վայրերի ընտրությունն արդարացիորեն բաշխվելու ամբողջ Վարչաշրջանում: Այս գործիքը հետազոտողներին թույլ տվեց պատկերացնել, թե ինչպես շերտերի կշռվածությունն ազդում է ամբողջ վարչաշրջանի հաստատությունների արդար բաշխման վրա:

Օրինակ, եթե որոշակի տարածաշրջանում առկա է ADA մատչելի շինությունների առատություն, և հետազոտողները կիրառում են այնպիսի սցենար, որն առաջնահերթություն է տալիս ADA մատչելիության կշռվածության աստիճանին, ընտրական կենտրոնները կարող են այդ հատուկ տարածաշրջանում ի հայտ գալ խմբավորված, ինչը կարող է հանգեցնել այնպիսի սցենարի, որը շրջանցում է բնակչությանը և այլ սոցիալ-տնտեսական կարիքներ:

- **Հաստատություն/Մենյակի միավորի չափանիշ.** Միավորներ տրվել են յուրաքանչյուր ընտրական կենտրոնին՝ ելնելով սենյակի չափից, կայանման որակից, հաստատության տեսակից և ADA մատչելիությունից: Միավորների չափանիշների մանրամասները կարելի է գտնել Աղյուսակ 6-ում: Հետազոտողները և խորհրդատվական խմբերը կարողացան հարմարեցնել վայրի ընտրության մոդելը՝ համապատասխանության միավորներ ստեղծելու համար:
- **1320 կանոն (1/4-մղոնի կանոն).** Որպեսզի ընտրական կենտրոններում ամբողջ վարչաշրջանում ընթանան արդար ընտրություններ, օգտագործողները կարողացան ընտրել այնպիսի տարբերակ, որն ապահովելու էր, որ ընտրական կենտրոններն առնվազն մեկ մղոն հեռավորության վրա լինեն միմյանցից: Եթե հայտնաբերվեց հեռավորության բախում, ընտրվեց ամենաբարձր գնահատականներ ունեցող վայրերը:

վայրի համապատասխանության գործիքի մշակման գործընթացի վրա ազդել և այն գնահատել է VSAP ծրագրի թիմը և Խորհրդատվական կոմիտեները: Տեխնիկական խորհրդատուները ներկայացրեցին սցենարային մոդելները VSAP ծրագրի թիմին, խորհրդատվական կոմիտեին և տեխնիկական



խորհրդատվական հանձնաժողովին, և նրանք հնարավորություն ունեցան իմանալ մանրամասներ մեթոդաբանության վերաբերյալ և ներդրում ապահովել ուսումնասիրության հետ կապված:

Այս խորհրդակցությունները հանգեցրեցին ուսումնասիրության սցենարների համաձայնեցված մոտեցմանը, ներառյալ մոդելի մուտքերի և պարամետրերի, որոնք կօգտագործվեն վերջին 1,000 առաջարկվող ընտրական կենտրոնների որոշման համար:

Table 5. Մենյակի և հաստատության գնահատման չափանիշ

Հաստատությունների ցուցիչ	Միավոր	Միավորների դասակարգում
Մենյակի չափի միավոր		
	0	փոքր, <1,999 քր./ֆուտ
	2	անհայտ
Չափ	3	փոքր/միջին, 2,000 - 2,449 քր./ֆուտ
	7	միջին, 2,450 - 3,849 քր./ֆուտ
	9	մեծ > 3,850 քր./ֆուտ
Անփութիված սենյակի չափի միավոր	0-9	Ինչպես նշված է վերևում
Հաստատության միավոր		
Կայանատեղիների քանակ	0-9	2 կատեգորիաների գումար. ADA կայանատեղի; ոչ-ADA կայանատեղի
	2	Մասնավոր
	5	Հանրային դպրոց K-12
Հաստատության տեսակ	6	Արվեստների և մշակունքի կենտրոններ, առևտրի կենտրոններ
	7	Հանրային քոլեջներ/համալսարանների, այլ հանրային հաստատություններ

Հաստատությունների ցուցիչ	Միավոր	Միավորների դասակարգում
	9	Համայնքային կենտրոն, գրադարան, այգիների և հանգստի գոտիների հաստատություն և այլն:
ADA մատչելիություն	0-9	4 կատեգորիաների գումար. թեքահարթակներ; գուգարաններ; անցուղու լայնություն; լրացուցիչ գործոններ
Այլ	0-9	3 կատեգորիաների գումար. Առաջարկված հանրության կողմից; հաստատությունն ունի կղզիկով դուռ՝ BMD-ներն ապահովելու համար; լրացուցիչ գործոններ
Հաստատության ընդհանուր միավոր	0-9	4 կատեգորիաների միջինը

3.0 ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ և ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

LA վարչաշրջանի RR/CC-ն ներգրավեց հասարակությունն ընտրական կենտրոնների ընտրության ամբողջ ընթացքում և կշարունակի համագործակցությունն եկող տարիների ընթացքում ընտրողներին ընտրական նոր մոդելի ներկայացման ընթացքում: RR/CC-ն համագործակցեց PlaceWorks-ի հետ՝ մոտեցումների մի շարք ոլորտներում շահագրգիռ կողմերի լայն շրջանակներին հաղորդակցվելու համար: Շահագրգիռ կողմերն օգնեցին լրացնել տվյալների բացերը և արժեքավոր պատկերացումներ տրամադրել հաստատությունների հետ ունեցած առաջին իսկ փորձառություններից:

3.1 VSAP ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐ

PlaceWorks-ը համագործակցեց գոյություն ունեցող հանձնաժողովների հետ, որոնք ակտիվորեն խորհուրդ էին տալիս և աջակցում էին VSAP նախագիծը: Թե՛ VSAP-ի Խորհրդատվական Կոմիտեի, թե՛ Տեխնիկական Խորհրդատվական Կոմիտեի նպատակն էր ապահովել, որ քվեարկության նոր համակարգի մշակման գործընթացը առաջնահերթություն տա ընտրողի կարիքներին՝ միաժամանակ օգտագործելով հիմնավորված տվյալներ որոշումների կայացման համար: VSAP նախագծի Ընտրական կենտրոնի տեղակայման նախագծի (Vote Center Placement Project, VCPP) մասի համար հանձնաժողովներն իրենց ուշադրությունը կենտրոնացնում են տեխնոլոգիայի և մատչելիության նկատառումներից այն տարածական տարրերի վրա, որոնք շատ ազդում են կենսունակ ընտրական կենտրոնի իրագործելիության վրա:

Ընտրողների և սպառողների վարքագծի, ճանապարհորդության պահանջարկի և ուղևորությունների կատարման, տարածական վերլուծության և տվյալների գիտությունների բնագավառներում տեխնիկական փորձագետների հետադարձ կապ ստանալու համար PlaceWorks-ն աշխատել է VSAP ծրագրի թիմի հետ՝ երկու հանձնաժողովներին առնչվող փորձաքննությունների ավելի լայն շրջանակ ներառելու համար: Նահանգային համալսարանների և վարչաշրջանի տվյալների գրասենյակների յոթ տեխնիկական փորձագետներ հրավիրվել են

միանալ VSAP տեխնիկական խորհրդատվական կոմիտեին: Վեց քաղաքային գործավարներ հրավիրվել են մասնակցել VSAP Խորհրդատվական կոմիտեի աշխատանքներին: Հրավերները նպատակ ունեին պահպանել աշխարհագրական շրջանների և բազմաբնույթ բնակչության արդարացի ներկայացուցչությունը:

Տեխնիկական խորհրդատուները 13 ամիսների ընթացքում հանդիպել են այդ հանձնաժողովների հետ ընդհանուր առմամբ ինն անգամ: Բացի հանձնաժողովների արդեն իսկ հաստատված նպատակներից, PlaceWorks-ն անդամներին ապավինեցին:

VSAP Խորհրդատվական կոմիտե

- Կիսել պատկերացումներ և ուղեցույցներ ընտրական կենտրոնների տեղակայման համար:
- Հայտնաբերել տեղանքներում կամ ըստ զգայուն բնակչության քվեարկության աշխարհագրական կամ ժողովրդագրական խոչընդոտները:

VSAP Տեխնիկական խորհրդատվական կոմիտե

- Ուսումնասիրել և տրամադրել տվյալների աղբյուրներ:
- Ուսումնասիրել տարածական վերլուծության մեթոդաբանությունը:
- Տրամադրել կարծիք և ուղեցույց պահանջարկի վերլուծության գործընթացի վերաբերյալ:
- Տրամադրել ընդհանուր ուղեցույց՝ կապված ընտրական կենտրոնի չափանիշների և գնահատման գործընթացի հետ:

Տե՛ս Հավելված C՝ VSAP-ի խորհրդատվական և տեխնիկական խորհրդատվական կոմիտեի մանրամասների համար:

3.1.1 Վայրի հարմարության գործիք վեբինար

PlaceWorks-ի և RR/CC-ի աշխատակիցները հյուրընկալեցին վեբինար, որտեղ երկու հանձնաժողովներն էլ առաջարկված էին վերանայել և մեկնաբանել վայրի համապատասխանության գործիքների մշակման մեթոդաբանությունը: Կոմիտեի անդամներին ներկայացվեց նաև



սցենարների մի շարք, որոնք ցույց էին տալիս, թե ինչպես է գործիքի ուսումնասիրությունը տարբեր արդյունքներ տալիս Վարչաշրջանի ողջ տարածքում տեղամասային կենտրոնների տեղակայման գործում: Խորհրդատուները ներկայացրեցին հետևյալ սցենարները և խնդրեցին հետադարձ կապ նախընտրելի մոդելավորման վերաբերյալ:

- **Առկա մտածելակերպ.** Ենթադրում է, որ ընտրողները քվեարկելու են իրենց տների մոտ, իսկ բնակչության խտությունը կշռում է ավելի ծանր, քան պահանջարկի մյուս շերտերը:
- **Հարմարավետություն.** Ենթադրում է, որ ընտրողները կքվեարկեն առավել հարմար տեղում՝ սովորաբար իրենց ճանապարհորդած երթուղիների երկայնքով և աշխատանքի վայրում և այլ նպատակակետերում:
- **Սոցիալ-տնտեսական կենտրոնացում.** Առաջնահերթություն է տալիս այն պատմականորեն ցածր ներկայացված բնակչությանը տարածքներում գտնվող հաստատություններիին:

Արդյունքներ

Վեբինարից ստացված առավել ուշագրավ առաջարկությունն ենթադրում էին, որ կշռվածքը ճշգրտվի՝ իջեցնելով «Քվեարկողների բնակելի վայրի» կշիռը և բարձրացնելով «Փոստով քվեարկության քիչ օգտագործում» տոկոսի կշիռը: Այս ճշգրտումն ավելի քիչ կանդրադառնա ընտրական կենտրոնների տեղակայմանը բնակելի բնակչությանը մոտ և ավելին այն տարածքների վրա, որտեղ ընտրողները ցուցաբերել են անձամբ քվեարկելու հետաքրքրություն: Այս առաջարկությունը կիրառվեց, որի արդյունքում առաջարկվեց ընտրական կենտրոնի առաջարկվող վայրերի վերջնական ցուցակը:

3.2 ՎԻՃԱԿԱԳՐՈՐԵՆ ՎԱՎԵՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ և ԹԻՐԱՆԱՅԻՆ ԽՄԲԵՐ

VSAP նախագծի թիմը համագործակցեց կարծիքի ուսումնասիրության և ռազմավարության խորհրդատուների՝ airbank, Maslin, Maullin, Metz & Associates (FM3) հետ՝ անցկացնելու հասարակական կարծիքի ուսումնասիրություն, որը կօգնի ցույց տալ, թե ինչպես կարելի է ընտրական կենտրոնները հավասարաչափ բաշխել՝ ընտրողների նախասիրությունների բազմազան շրջանակին համապատասխանելու համար: Ներգրավման այս փուլը բաղկացած էր մի շարք թիրախային խմբերից, LA վարչաշրջանի

գրանցված ընտրողների հարցումներից և երկրորդ հետազոտությունից՝ քվեարկելու իրավունք ունեցող չգրանցված բնակիչների շրջանում:

Հետազոտությունն ուսումնասիրել է այն վայրերը, որտեղ մարդիկ հայտնում են, որ իրենք պատրաստ են քվեարկել, ընտրական կենտրոնի գտնվելու վայրի հատկանիշները, որոնք համարվում են ամենակարևորը, շաբաթվա օրերը և օրվա այն ժամանակները, երբ մարդիկ գերադասում էին քվեարկել: և մշտապես փոստով քվեարկողների շրջանում առկա միտումները:

3.2.1 Թիրախային խմբեր

Թիրախային խմբերի հարցումներն անցկացվել են վարչաշրջանի մի շարք վայրերում՝ տարբեր համայնքների և ժողովրդագրական խմբերի բազմազան կարծիքները լսելու համար: Շահագրգիռ կողմերին առաջարկվել է տրամադրել իրենց քվեարկության փորձի և նախասիրությունների վերաբերյալ:

Ութ թիրախային խմբեր հարցումներ են անցկացվել 2018թ. Մայիսից մինչև հունիս ամիսը: Երկու խմբի հարցում է անցկացվել մեծ հակվածություն ունեցող ընտրողների շրջանում, մեկ խումբ՝ պակաս հակվածություն ունեցող ընտրողների շրջանում, մեկ խումբ՝ 60-ից 74 տարեկան ընտրողների շրջանում, մեկ խումբ՝ 18-ից 30 տարեկան ընտրողների շրջանում, մեկ խումբ՝ իսպանախոս ընտրողների շրջանում, մեկ խումբ՝ մանդարինախոս ընտրողների շրջանում և մեկ խումբ՝ քվեարկելու իրավունք ունեցող, բայց ներկայումս Լոս Անջելեսի վարչաշրջանում չգրանցված բնակիչների շրջանում:

3.2.2 Հարցումներ

Ընտրողների շրջանում հարցումն անցկացվել է հուլիսին՝ Լոս Անջելեսի վարչաշրջանում գրանցված 2,144 ընտրողների պատահական նմուշումամբ: Հարցումներն անցկացվել են առցանց և հեռախոսով (բջջային և ֆիքսված) և հասանելի էին անգլերեն, իսպաներեն, չինարեն և կորեերեն: Մոյն հետազոտության համար սխալի սահմանն է ±2.6 տոկոս՝ 95 տոկոս վստահության մակարդակում:

Չգրանցված բնակչության հարցումն անցկացվել է 2018 թվականի օգոստոսից սեպտեմբեր ամիսների ընթացքում Լոս Անջելեսի վարչաշրջանում գտնվող 501 բնակիչների միջև, ովքեր իրավունք ունեն քվեարկելու, բայց ներկայումս


գրանցված չեն: Հարցումներն անցկացվել են առցանց և հեռախոսով (բջջային և ֆիքսված) և հասանելի էին անգլերեն, իսպաներեն, չինարեն և կորեերեն:

3.2.3 Արդյունքներ

Որտեղ քվեարկել

Թիրախային խմբերը և հարցումները պարզել են, որ ընտրողների մեծամասնությունը նախընտրում է քվեարկել տան մոտակայքում գտնվող վայրում, բայց շատերը դեմ չեն քվեարկելու հաճախակի այցելած այլ վայրերում: Վարչաշրջանի տարածքում, գրանցված ընտրողների 77 տոկոսը կնախընտրեր քվեարկել կամ ներկայացնել իրենց քվեաթերթիկն իրենց տան մոտ գտնվող վայրում (տես Նկար 12): Որից 42 տոկոսն ասաց, որ դեմ չեն քվեարկել իրենց աշխատավայրի մոտ, իսկ մեծ մասը (ընդհանուր հարցվածների 25 տոկոսը) ասաց, որ սա կլինի նրանց երկրորդ ընտրությունը: Նմանապես, 37 տոկոսն ասաց, որ կքվեարկի առևտրի կամ տնային այլ գործերի համար նախատեսված վայրերի մոտ, բայց ընտրածների մեծ մասի համար դա երկրորդ ընտրություն է: Ավելի քչերն ընտրեցին իրենց երեխայի կամ իրենց սեփական դպրոցների կամ ժամանցի վայրերի մոտ քվեարկելը:

Figure 11. Քվեարկելու կամ փոստով քվեարկության քվեաթերթիկը հանձնելու նախընտրելի վայրեր (Դասակարգված՝ ընստ առաջին և երկրորդ ընտրության)



Ընտրողներն, ընդհանուր առմամբ, ցանկություն հայտնեցին շարունակել քվեարկությունն այն տեղերում, որոնք նախկինում այցելում էին որպես

ընտրատեղամասեր, ինչպիսիք են՝ հանրային գրադարանները, դպրոցները, համայնքային կամ հանգստի կենտրոնները և քաղաքապետարանները (տես Աղյուսակ 7): Այնուամենայնիվ, ընտրողները բացարձակ դեմ չեն քվեարկել ավելի նորարարական տեղերում, ինչպիսիք են՝ հանրային այգիները, շարժական ընտրական կենտրոնի ավտոբուսը կամ բեռնատարը կամ այնտեղ, որտեղ նրանք առևտուր են անում: Բնակչության տարբեր հատվածներ ավելի բաց են քվեարկելու որոշ վայրերում քան մյուսները: Օրինակ, 18-ից 49 տարեկան ընտրողներն ավելի բաց են, քան 50 տարեկան կամ ավելի բարձր տարիքի մարդիկ՝ ավելի քիչ ավանդական տեղերում քվեարկելու համար, ինչպես, օրինակ, շարժական ընտրական կենտրոնը:

Table 6. Քվեարկության համար նախընտրելի հաստատությունների տեսակներ

Տեղակայում	Աայտնել քվեարկելու ցանկություն
Հանրային գրադարան	91%
Տեղական տարրական, միջին կամ ավագ դպրոց	88%
Համայնքային կենտրոն կամ հանգստի կենտրոն	80%
Հանրային քոլեջ կամ համալսարան	76%
Տեղական քաղաքապետարան	73%
Հանրային այգի	71%
Հանրային պլազա կամ հրապարակ	70%
Շարժական ընտրական կենտրոնի ավտոբուս կամ բեռնատար	70%
Առևտրի կենտրոն կամ մոլ	69%




Տեղակայում	Մայտոեղ քվեարկելու ցանկություն
Սուպերմարկետ	69%

Այս տեղամասերում քվեարկելու պատրաստակամությունը միշտ չէ, որ կապված է այն բանի հետ, թե որքան հաճախ ընտրողներն այցելում են այդ վայրն ընտրությունից դուրս: Օրինակ, տեղական քաղաքապետարանները հանրաճանաչ են որպես վայրեր, որտեղ ընտրողները պատրաստ կլինեն քվեարկել, բայց հարցման և թիրախային խմբի մասնակիցներն ասում էին, որ դա այն վայր չէ, որը հաճախ այցելում են: Պատճառները, որոնք ընտրողները հիմնականում գերադասում են այս առաջին 10 տարածքները, կարելի է վերագրել անձնական անվտանգության, գաղտնիության, կայանատեղիի մատչելիության և հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի համար:

Երբ քվեարկել

Ընտրողները նաև տարբեր նախապատվություններ ունեն այն բանի համար, երբ նրանք քվեարկում կամ փոստով քվեաթերթիկ են ներկայացնում: Չնայած 37 տոկոսը նախընտրում էր քվեարկել կամ քվեաթերթիկը ներկայացնել քվեարկության օրը, 63 տոկոսը նախընտրում էր քվեարկել նախքան ընտրությունների օրը: Որոշ ընտրողներ նույնպես պատրաստ էին քվեարկել ավելի պակաս ավանդական ժամանակաշրջանում, ինչպես, օրինակ, երեկոյան 8-ից 10-ը ընկած ժամանակահատվածում (տե՛ս Նկար 13):

Figure 12. Քվեարկության համար նախընտրելի օրեր և ժամեր



Նախընտրելի ժամեր*

Ժամ	% հավանականություն
5 AM–7 AM	29%
7 AM–8 PM	89%
8 PM–10 PM	54%
10 PM–12 AM	22%
12 AM–5 AM	11%

Ժողովրդագրական միտումներ

Ուսումնասիրությունը պարզել է նաև, որ առկա է քվեարկության տեղանքների, ժամանակների և առանձնահատկությունների նախապատվությունների փոքր տարբերություն ներկայումս գրանցված ընտրողների և քվեարկելու իրավունք ունեցող, սակայն չգրանցված ընտրողների միջև: Չգրանցված մասնակիցներն ու գրանցված ընտրողներն ընտրեցին նույն 10 տեղերը, որտեղ, ամենայն հավանականությամբ, նրանք կքվեարկեն: Բնակչության երկու խմբերի միջև հիմնական տարբերությունն այն է, որ դասակարգումն ըստ տեղանքների, ժամանակների և առանձնահատկությունների, կարևորությունն ավելի պակաս է եղել չգրանցված մասնակիցների մոտ, քան գրանցվածների:

Հատկապես, սակայն, չգրանցված ընտրողները նշել են, որ ավելի շատ հավանական է, որ նրանք հաշվի առնեն գրանցումը քվեարկելու համար, եթե նրանք իմանային, որ ընտրական կենտրոնները կառաջարկեն անհապաղ գրանցում տեղում, և որ ավելի մեծ ճկունություն կլինի, թե երբ և որտեղ կարող են քվեարկել, ի տարբերություն ժամանակից շուտ գրանցվելու անհրաժեշտության և միայն մեկ օր քվեարկելու իրավունք ունենալուն:

3.2.4 Հետևանքներ

Համայնքների հարցումներ արդյունքները մեծ դեր են խաղացել պահանջարկի տարբեր շերտերի կշիռը որոշելու հարցում, որոնք օգտագործվել են Լոս Անջելեսի վարչաշրջանում ընտրական կենտրոնների արդար բաշխումն որոշելու համար: Հետադարձ կապը, որը նախանշում էր տների մոտ և ծանոթ տեղերում քվեարկության նախապատվությունը, կիրառվել է Վայրի համապատասխանության գործիքում ծանրակշիռ հաստատելու համար և դիտարկվել է նախնական մոդելի սցենարների մշակման ժամանակ՝ VSAP խորհրդատվական և տեխնիկական խորհրդատվական հանձնաժողովներին ներկայացնելու համար: Թիրախային խմբերի և հարցումների արդյունքների վերաբերյալ մանրամասների համար տե՛ս Հավելված D:

3.3 ՎԱՐՉԱԾՐՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆԴՊՈՒՄՆԵՐ

Համայնքների ներգրավման խորհրդատուների և համայնքային 40 գործընկերների հետ համագործակցելով՝ VSAP ծրագրի թիմը հյուրընկալեց երկու փուլ կարծիքի հավաքագրում, որոնք հանգեցրին մոտ 70 հանդիպումների վարչաշրջանի ողջ տարածքում: Այս հանդիպումները նպատակ ունեին լայն հասարակությանը բացատրել VCA-ն, ընտրական կենտրոնի մոդելը և Վարչաշրջանի նոր համակարգը: Նրանք կրթել են առկա ընտրողներին և իրավասու չընտրողներին ընտրողների փորձառության բարելավման և պահանջվող նշանակալից ներդրման մասին՝ տեխնիկական վերլուծության գործընթացի մասին տեղեկացնելու համար:

3.3.1 Գործընկեր կազմակերպություններ

Հասարակությանը կարծիքների ցանկացած լայնածավալ հարցման հեռանկարային նախաձեռնության ներգրավելը պահանջում է լայն մոտեցումներ, ներառյալ բովանդակալից կապեր համայնքների

ղեկավարների և կազմակերպիչների հետ, ովքեր ստեղծել են հեղինակություն և մշակութային պատկերացում տեղական պայմանների և մտահոգությունների վերաբերյալ: RR/CC-ն ընդունել է դիմումներ տեղական համայնքի գործընկերներից, ովքեր խորը կապեր ունեն համայնքում և հետաքրքրություն են ունեցել VCA-ի մասին սովորելու, ինչպես նաև քվեարկության կենտրոնի տեղադրման ծրագրի վերաբերյալ իմանալու: Առցանց դիմումները հասանելի էին VSAP ինտերնետային էջում 60 օրվա ընթացքում: Այս ընթացքում Համայնքների վրա հիմնված կազմակերպությունների (CBO) մի շարք տեսակներ ներկայացրեցին դիմումներ, որտեղ նկարագրում էին որակները, որոնք նրանց ավելի հարմար էին մասնակցելու: RR/CC-ն ուսումնասիրեց ավելի քան 80 դիմում կարծիքի հարցման երկու փուլերի համար: Դիմողներից պահանջվում էր նկարագրել գրավոր և, այնուհետև, հեռախոսային հարցազրույցի ժամանակ իրենց՝

- Կազմակերպության ծառայությունները, փորձառությունն ու տարողունակությունը
- Հարաբերությունն աշխարհագրական սպասարկման տարածքի հետ
- Հաղորդակցման եղանակները և համայնքի հասանելիությունը
- Կազմակերպության առաքելությունը և շահագրգիռ կողմերը
- Գոյություն ունեցող հարաբերությունները համայնքային գործընկերների հետ (ներառյալ RR/CC)

Դիմումի և հարցազրույցի գործընթացները հանգեցրին համագործակցության տարբեր չափերի 40 CBO- ների՝ համայնքների հիմնական խմբերից մինչև ազգային մեծ իրավապաշտպան խմբակներ և տարբեր առաքելություններ, ներառյալ ընտրողների իրավունքները և շրջակա միջավայրի արդարությունը: Գործընկերոջ հարցաշարը և Հրավերքի նամակը տեսքը Հավելվածներ E և F:

Գործընկեր կազմակերպություններն սերտորեն համագործակցեցին VSAP ծրագրի թիմի և PlaceWorks-ի հետ՝ ստանալու դասընթացներ և ուղորդություններ, որոնք պատրաստելու են նրանց՝ բարդ սլայդների և գնահատման գործընթացները հանրությանը հաղորդելու համար: Ընտրված գործընկերներին տրվել են հետևյալ առաջադրանքները.



- Իրականացնել հանրային շփումներ՝ շեշտը դնելով ուսումնասիրության տարածքի(ների) վրա:
- Մոբիլիզացնել համայնքի գործընկերները՝ մասնակցելու կարծիքների հավաքագրման ջանքերին:
- Ընտրել վայրեր և կազմակերպել և կառավարել բոլոր հանդիպումների նյութատեխնիկական ապահովումը, ներառյալ տեղադրումը և ապամոնտաժումը:
- Մասնակցել խմբակային դասընթացին ծրագրի ակնարկի, ներկայացման բովանդակության, տեղեկությունների փոխանակման և կարծիքի հավաքման նյութերի վերաբերյալ:
- Նպաստել համայնքային հանդիպումներին:
- Զեկուցել հանդիպումների արդյունքների վերաբերյալ:

Գործընկեր կազմակերպությունները յուրաքանչյուր հանդիպման համար ստանում էին 2,000 ԱՄՆ դոլարի գումար՝ աշխատակազմի աշխատանքի, տպագրության ծախսերի, նախուտեստների, ինչպես նաև մրցանակների և նվերների համար նախատեսված ծախսերի համար: Կազմակերպչական ծախսերը կրճատելու համար, VSAP ծրագրի թիմը և PlaceWorks-ն, ըստ պահանջի, տրամադրել են տպագիր նյութեր, հաստատությունների համար վճարման չեղարկումներ, տեխնոլոգիա և անձնակազմի աջակցություն: VSAP նախագծի թիմը նաև կապ հաստատեց գործընկեր կազմակերպությունների և Քաղաքի գործավարի միջև՝ լրացուցիչ կապի և աշխատակազմի աջակցություն ցուցաբերելու համար:

3.3.2 Լեզվական հասանելիություն

Համայնքների ներգրավման գործընթացին արդար հասանելիություն ապահովելու համար VSAP ծրագրի թիմը իրականացրեց լեզվական հասանելիության վերլուծություն և միաժամանակյա թարգմանչական ծառայություններ: PlaceWorks-ն իրականացրեց ժողովրդագրական վերլուծություններ՝ օգտագործելով մարդահամարի տվյալները, որոնք նույնականացնում են լեզվական առումով մեկուսացված համայնքներին: Այս վերլուծության միջոցով PlaceWorks-ն իմացավ, որ Վարչաշրջանում իսպանախոս մեծ բնակչությունը թարգմանության մեծ կարիք ունի ամբողջ տարածաշրջանում, որին հաջորդում են չինարենը և կորեերենը:

Համայնքային հանդիպումների առաջին փուլը տրամադրել է իսպաներենի միաժամանակյա թարգմանություն 12 շրջաններում, չինականի՝ 2 շրջաններում և կորեերենի՝ 1 շրջանում: Այլ լեզուների համար աջակցությունը ցուցաբերվեց CBO-ների կամ Վարչակազմի աշխատակազմի կողմից, որոնց երաշխավորվել են, որ գոնե մեկ հանդիպման անցկացնող կարող է սահուն կերպով գրուցել հետազոտության մեջ նշված լեզուներով:

Հանդիպումների երկրորդ փուլի համար հետազոտության մեթոդաբանությունը ճշգրտվել է՝ ներառելու համայնքի անդամների, գործընկեր կազմակերպությունների և Վարչաշրջանի աշխատակազմի հետադարձ կապը՝ փորձ ունենալով քաղաքային համայնքներում: Հետադարձ կապը պահանջում էր միաժամանակյա թարգմանություն լրացուցիչ լեզուներով՝ այլ լեզվական փոքրամասնություններին սպասարկելու համար, որոնց հետ հնարավոր է չի հաջողվել գրուցել առաջին փուլի ընթացքում: Կարծիքի ուսումնասիրության երկրորդ փուլի ընթացքում 20 լեզուներով տրամադրվել է միաժամանակ թարգմանություն, տես Աղյուսակ 8: Լեզվի հասանելիության մեթոդաբանությունը տես Հավելված G-ում:



Table 7. Անցկացված հանդիպումների ցանկ

ՅՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	ՀԱՆԴԻՊՄԱՆ ՎՄՅՐ	ՄԻՃԱՄԱՆԱԿՑԱ ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ
1 փուլի հանդիպումներ (Նոյեմբ 16, 2018 - Հունվ. 19, 2019)		
SBCC Thrive	Compton	Spanish
Neighborhood Empower LA/CA Common Cause	Granada Hills	N/A
Pacoima Beautiful	Pacoima	Spanish
CAUSE	Walnut	N/A
Neighborhood Empower LA/CA Common Cause	North Hollywood	Spanish
Neighborhood Empower LA/CA Common Cause	Los Angeles	N/A
California Common Cause	Sherman Oaks	Spanish
CAUSE	Artesia	Spanish
SBCC Thrive	Long Beach	N/A
California Common Cause	Redondo Beach	N/A
NALEO	Los Angeles	Spanish
Korean American Coalition	Los Angeles	Korean
California Common Cause	Inglewood	N/A
Coalition for Humane Immigrant Rights	Lancaster	N/A
Armenian National Committee-Pasadena Chapter	Pasadena	N/A
Armenian National Committee-Western	Glendale	N/A
Black Women for Wellness	Palmdale	Spanish
SBCC Thrive	Wilmington	N/A
Black Women for Wellness	Newhall	N/A
League of Women Voters-Los Angeles	Malibu	N/A
League of Women Voters-Los Angeles	Canoga Park	N/A

ՅՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	ՀԱՆԴԻՊՄԱՆ ՎՄՅՐ	ՄԻՃԱՄԱՆԱԿՑԱ ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ
NALEO	Claremont	N/A
Black Women for Wellness	Los Angeles	Spanish
Armenian National Committee-Crescenta Valley	La Crescenta	N/A
California Common Cause	Pasadena	N/A
CAUSE	Arcadia	Spanish, Chinese
United Cerebral Palsy of Los Angeles, Ventura and Santa Barbara Counties	Culver City	N/A
Arts for LA	Los Angeles	Spanish
NALEO	Montebello	Spanish, Chinese
National Iranian American Council	Beverly Hills	N/A
League of Women Voters--Whittier	Whittier	N/A
Coalition for Humane Immigrant Rights	Huntington Park	Spanish
National Iranian American Council	Reseda	N/A
2-րդ շրջանի հանդիպումներ (2 մայիսի 2019թ. - 29 հունիսի 2019թ.)		
League of Women Voters, Los Angeles	Porter Ranch	N/A
Disabled Resource Center	Long Beach	American Sign Language
Long Beach Gray Panthers	Long Beach	Khmer
League of Women Voters, Los Angeles	Santa Monica	N/A
Glassell Park Improvement Association	Los Angeles	Armenian
Black Women for Wellness	CA 90037	N/A
Black Women for Wellness	Carson	Spanish
League of Women Voters, Torrance Area	Torrance	Japanese



ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	ՀԱՆՐԻՊՄԱՆ ՎԱՅՐ	ՄԻՃԱՄԱՆԱԳՑԱ ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ
United Cerebral Palsy of Los Angeles and Disability Rights California	Culver City	American Sign Language
Armenian National Committee of America, Crescenta Valley Chapter	Studio City	Thai
Southern California Resource Services for Independent Living	Hawaiian Gardens	Hindi
Pat Brown Institute for Public Affairs at Cal State LA	Downtown Los Angeles	Tagalog
NALEO Educational Fund	La Verne	N/A
Asian Americans Advancing Justice (AAAJ) & RR/CC	Covina	N/A
Southern California Resource Services for Independent Living	Norwalk	N/A
Armenian National Committee of America, Western Chapter	Burbank	N/A
California Common Cause	San Gabriel	N/A
Armenian National Committee of America, Pasadena Chapter	Pasadena	Chinese Spanish
California Common Cause	West Hollywood	Russian
NALEO Educational Fund	Los Angeles	Chinese Vietnamese Spanish
Monrovia Area Partnership (MAP) Program	Los Angeles	N/A
Black Women for Wellness	Palmdale	Spanish
First African Methodist Episcopal Church (FAME) and Alpha Kappa Alpha (AKA)	Los Angeles	Korean
League of Women Voters, Los Angeles	Calabasas	N/A
South Bay Counseling Center (SBCC) Thrive LA	Harbor City	N/A
Southeast Los Angeles (SELA) Collaborative	South Gate	Spanish

ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	ՀԱՆՐԻՊՄԱՆ ՎԱՅՐ	ՄԻՃԱՄԱՆԱԳՑԱ ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ
Black Women for Wellness	Santa Clarita	N/A
South Bay Counseling Center (SBCC) Thrive LA	Hawthorne	Spanish
FarsiVoter	Encino	Farsi
South Bay Counseling Center (SBCC) Thrive LA	North Hills	N/A
Lake Los Angeles Park Association	Littlerock	American Sign Language, Spanish
Black Women for Wellness	Northridge	N/A
Pacoima Beautiful	Pacoima	Spanish
InnerCity Struggle	Los Angeles	Spanish

3.3.3 Առաջին փուլ, Համայնքային ներգրավվածություն

Համայնքային ժողովների առաջին փուլը նպատակ ուներ բացատրել VCA-ն և ընտրական կենտրոնի նոր մոդելը, ինչպես նաև հավաքել կարծիքներ ընտրական կենտրոնի հնարավորությունների վերաբերյալ: Տվյալները ներկայացվել են հեշտ հասկացվող աղյուսակների և քարտեզների միջոցով: Հանդիպումների անցկացնողները տրամադրեցին ուսումնական հրահանգներ՝ առցանց պորտալի և մեկ-առ-մեկ խոսակցությունների օգտագործման համար՝ ցանկացած չլուծված հարցերին պատասխանելու համար: Մասնակիցները կարողացան մեկնաբանություններ և առաջարկություններ անել առցանց Պորտալի կամ գրավոր մեկնաբանության քարտերի միջոցով: Մասնակիցներին խնդրվեց նաև լրացնել հարցաթերթիկ, որն ուղղված էր հիմնականում այն հարցի վրա, թե որտեղ են հարցվածները գերադասում քվեարկել և ինչպես են նրանք մտադիր մուտք ունենալ իրենց նախընտրած ընտրական կենտրոն: Տե՛ս Հավելված H-ը՝ 1-ին փուլի ներգրավման արդյունքների մասին մանրամասների համար:

Հարցման արդյունքներ

Այս հանդիպումների մասնակիցներից շատերը (71 տոկոս) հայտնում են, որ նախընտրում են քվեարկել իրենց տների մերձակայքում, 7 տոկոսը ցանկանում է քվեարկել իրենց աշխատավայրերի մոտ, 18 տոկոսը բաց է տարբեր տեղամասերում քվեարկելու գաղափարի համար, իսկ 4 տոկոսը գերադասում են քվեարկել փոստով: Ինչ վերաբերում է, թե ինչպես մասնակիցները մուտք կունենան քվեարկության վայրեր, 65 տոկոսը նշում է, որ ավտոմեքենան իրենց նախընտրած տրանսպորտային միջոցն է, 22 տոկոսը նախընտրում է օգտագործել հեծանիվի, գնացքի, ավտոբուսի, մեքենայի և քայլելու որոշակի համադրություն, 8 տոկոսը նախընտրում է քայլել և 5 տոկոսը գերադասում են կա՛մ հեծանիվը, գնացքը կա՛մ ավտոբուսը:

Figure 13. Քվեարկության նախընտրելի վայրեր





Figure 14. Փոխադրումների նախընտրելի ռեժիմ





Համայնքի առանձնահատկություններ

Մասնակիցներին հրավիրվել էր զբաղվել այնպիսի գործունեությամբ, որը հետադարձ կապ էի ակնկալում համայնքի ընդհանուր պայմանների վերաբերյալ, և թե ինչպես են ազդում այդ պայմաններն այնտեղ, որտեղ մարդիկ ցանկություն կունենան քվեարկել: Մասնակիցներին առաջարկվել է հաշվի առնել այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են լուսավորությունը, ճանապարհորդության մատչելի ուղիները, ճանաչված հավաքվելու վայրերը, կայանման պայմանները և այլն: Նրանք կանաչ և կարմիր կաշուն պիտակներ տեղադրեցին այնպիսի վայրերում, որտեղ նրանք կզգան կամ չեն զգա հարմարավետ քվեարկելու համար՝ ելնելով այդ հատկանիշներից:

Կաշուն պիտակների մեծ մասը կանաչ էին և հիմնականում աջակցում էին հատուկ օբյեկտների կամ հաստատությունների տեսակներին: Կառավարական շենքերը, զբոսայգիները և հանգստի վայրերը և եկեղեցիները հիմնականում ստացան կանաչ կաշուն պիտակների աջակցություն: Մի քանի հանդիպումների ընթացքում մասնակիցները դպրոցների մոտ տեղադրեցին նշանակալի քանակությամբ կարմիր պիտակներ: Այս պիտակներն աջակցում էին մեկնաբանություններին, որ դպրոցները չեն հանդիսանում քվեարկության նախընտրելի վայրեր՝ մարդաշատության և անվտանգության խնդիրների պատճառով: Կարմիր կաշուն պիտակներով նշվեցին նաև ճանաչելի երթևեկի խցանումների և սահմանափակ կայանման վայրերը, ինչը համահունչ էր գրավոր մեկնաբանություններին՝ որոշակի խաչմերուկներից և մայրուղիներից խուսափելու հետ կապված: Վերջապես, կարմիր կաշուն պիտակներ տեղադրվեցին մասնավոր օբյեկտներում կամ դրանց մերձակայքում, ինչպիսիք են գոլֆի խաղադաշտը, համապատասխան մեկնաբանությունների, որոնք անհանգստություն էին հայտնում այս տեսակի օբյեկտների գերզբաղվածության վերաբերյալ:



Հանրության մեկնաբանություններ

Համայնքի հարցումից բացի, կայքի համար դիտողությունների և առաջարկությունների լայն շրջանակ ստացվեց համայնքից և որն ամփոփված է ըստ թեմաների Աղյուսակ 9-ում և հետևյալ բաժնում: Այն դեպքերում, երբ առաջարկները ներառում էին մեկնաբանություններ, մեկնաբանությունները բարձրացվեցին առաջարկությունից անկախ:

Table 8. Հանրության մեկնաբանությունների ամփոփում

Մեկնաբանությունների թեմա	Մեկնաբանությունների քանակ
Ընդհանուր մեկնաբանություններ	597
<i>Մատչելիություն</i>	327
<i>Կայանատեղի</i>	101
<i>Ծրագրեր/Գործողություն</i>	17
<i>Անվտանգություն</i>	8
<i>Չափ</i>	43
<i>Ընտրության հետ կապված</i>	33
<i>Հաստատության տեսակ</i>	68

Հանդիպումների ժամանակ առաջարկված հաստատություններ	265
Պորտալի միջոցով առաջարկված հաստատություններ	41

Մատչելիություն

Այս մեկնաբանությունները կապված են հաստատության գտնվելու վայրի և այդ վայրը գտնելու և դրան հասնելու հարմարության հետ: Հարմարությունը կարող է կապված լինել մարդու անձնական աշխարհագրական հեռանկարի, երթևեկության պայմանների կամ մատչելիության այլ հայտնի խնդիրների հետ: Այս թեմայով գրված մեկնաբանությունները վերաբերում են հասարակական տարանցման, հեծանիվների և հետիոտների հասանելիությանը, ինչպես նաև ADA համատեղելիության առկայությանը:

Կայանատեղի

Ավտոկանգառի հետ կապված մեկնաբանությունները տալիս էին կարծիքներ՝ կապված նշանակված կայանատեղիների, փողոցային կայանատեղերի և ADA կայանատեղիների առկայության պայմանների և ընդհանուր առկայության հետ:

Ծրագրեր/Գործողություն

Վայրի առկայության հետ կապված մեկնաբանությունները, որոնք հիմնված են դրա շարունակական ծրագրերի կամ գործողությունների վրա, մտավախություն են հայտնում, որ հաստատություններն օգտագործվում են որպես ընտրական կենտրոններ այնպիսի եղանակով, որը չի խանգարում ծրագրերին, դասերին կամ կանոնավոր բիզնես գործողություններին:

Անվտանգություն

Անվտանգության հետ կապված մեկնաբանությունները վերաբերում են տեղանքի անվտանգության մասին մտահոգություններին: Մտահոգությունները կարող են ներառել հետիոտների/երթևեկի դիսկերը, համայնքային հանցագործությունը կամ խտրականության տարածվածությունը:

Չափ



Չափի հետ կապված մեկնաբանությունները կարծիքներ են հայտնում հաստատության ներքին պայմանների, ներառյալ սենյակի չափի, դասավորության և մատչելիության հետ կապված:

Ընտրության հետ կապված

Քվեարկությանը վերաբերող մեկնաբանությունները վերաբերում են ընտրողների գրանցմանը, ընտրական գործողություններին և ընտրությունների անվտանգությանը: Այս մեկնաբանությունները կենտրոնացած չեն ընտրական կենտրոնի գտնվելու վայրերի վրա և ուսումնասիրվել են վարչաշրջանի աշխատակազմի կողմից՝ անհրաժեշտության դեպքում ներառելու համար:

Հաստատության տեսակ

Շատ մեկնաբանություններում նշվում էին հաստատություններ և թե ինչպես են ընտրողները զգում այնտեղ քվեարկելիս: Որոշ մեկնաբանություններ վերաբերում են հատուկ հաստատություններին, իսկ մյուսները կենտրոնանում են ընդհանուր հաստատության տեսակների վրա: Օրինակ, մի քանի մեկնաբանությունում մտահոգություն է հայտնվել դպրոցներում քվեարկության վերաբերյալ, իսկ ոմանք էլ ուրախություն են հայտնել առևտրի կենտրոններում քվեարկության կապակցությամբ: Այս կատեգորիայի այլ մեկնաբանություններ պարզապես արտահայտեցին աջակցություն կամ դրա բացակայությունը հաստատության համար:

Առաջարկվող վայրեր

Համայնքային այս հանդիպումներում առաջարկվել է ընդհանուր առմամբ 306 հաստատություններ. որից 171-ը PlaceWorks-ի կողմից արդեն քննարկման ենթակա չէր: Այս հաստատություններն ստացան աշխատասեղանի ուսումնասիրություն և կա՛մ մերժվեցին, կա՛մ ընդունվեցին վայրի այցելության գործընթացում: Արդեն քննարկվող հաստատությունների վերաբերյալ առաջարկություններն օգտագործվել են աշխատասեղանի ուսումնասիրության աջակցման համար, և, շատ դեպքերում, տրամադրվել են այնպիսի պատկերացումներ, որոնք օգնել են հաստատությունը տեղափոխել վերլուծության հաջորդ փուլ:

3.3.4 Երկրորդ փուլ, Համայնքի ներգրավվածություն

Ներգրավման հանդիպումների երկրորդ փուլը հիմնականում ծառայեց հանրությանը տեղեկացնելու 2,000 առաջարկվող պոտենցիալ ընտրական կենտրոնների հաստատությունների համար: Ներգրավվածության այս փուլը պակաս ինտերակտիվ էր և ավելի շատ ուղղված էր այն բանին, որ մասնակիցները լիովին հասկանան քվեարկության նոր մոդելին ուղեկցող բոլոր փոփոխությունները և պատմեն, թե ինչպես են իրենց կարծիքը դիտարկվել և կիրառվել հնարավոր հաստատությունների ընտրության հարցում: Չնայած ոչ մի պաշտոնական գործողություն չի իրականացվել, մասնակիցները դեռ հնարավորություն ունեցան մեկնաբանություններ տալ և առաջարկություններ ներկայացնել հնարավոր հաստատությունների վերաբերյալ: Երկրորդ փուլի ընթացքում ստացվեցին նվազագույն մեկնաբանություններ, իսկ ներկայացրածները վերաբերում էին ընտրողների գրանցմանը, ընտրական գործողություններին և անվտանգությանը: Հետևաբար, ներկայացված մեկնաբանությունների վերլուծություն անհրաժեշտ չեղավ, որպեսզի տեղեկացվի ընտրական կենտրոնների տեղամասերի վերջնական ընտրության մասին:

3.3.5 Արդյունքներ

Համայնքային գործընկերները ջանասիրաբար աշխատեցին մասնակիցների ժողովրդագրական բազմազան մարմինը ներգրավելու համար և կարողացան մոտ 2,300 մասնակից հրավիրել ժողովներին ամբողջ Վարչաշրջանում: Հանդիպումներն ընդգրկում էին 30 աշխարհագրական շրջան, և անցկացվեցին լրացուցիչ հանդիպումներ հաշմանդամություն ունեցող անձանց ուղղակիորեն հասնելու համար, և, ի պատասխան համայնքային խմբերի հարցումների, որոնք հետաքրքրված էին ավելին իմանալու ընտրական կենտրոնի մոդելի վերաբերյալ: Այս աշխույժ ջանքերը հանգեցրին համայնքային նշանակալի ներդրման և խթան հանդիսացան միջգերատեսչական կարևոր համագործակցության համար:

4.0 ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տվյալների և դաշտային վերլուծության և հանրային կարծիքի հավաքագրման լայնամասշտաբ վերլուծություն կատարելուց հետո, տեխնիկական խորհրդատուները մշակեցին 2,000 հավանական ընտրական կենտրոնի առաջարկությունների վերջնական փաթեթ, որն իր մեջ ներառում էր լավագույն 1,000 ընտրական կենտրոններ, գումարած լրացուցիչ 1,000 ամենից հնարավոր ընտրական կենտրոններ, որոնք կօգտագործվեն, եթե լավագույն 1,000-ից որևէ մեկը հնարավոր չէ օգտագործել որպես ընտրական կենտրոն 2020 թվականի նախագահական ընտրություններում: Այս հաստատությունները հետագայում վերլուծվելու են Լոս Անջելեսի վարչաշրջանի ընտրական շտաբների կողմից՝ ապահովելու VCA-ի, գործառնական պահանջների և հաստատությունների պայմանների լիարժեք պահպանում:

4.1 ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՍՈՂԵԼ, ԿՅԱՆՔ/ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտողների կողմից առաջարկված մոդելը, որն ընտրում է ընտրական կենտրոնի վերջնական առաջարկությունները, մշակվել է VSAP Խորհրդատվական Կոմիտեների աջակցությամբ և նպատակ ունի ապահովել հավասարակշռված մոտեցում գործառնական պահանջների կատարման նկատմամբ՝ Լոս Անջելեսի վարչաշրջանի բոլոր ընտրողների կարիքները բավարարելիս:

Կյանք/աշխատանք մոդելն աջակցում է այն արձագանքին, որ ընտրողներն առավել հարմարավետ են քվեարկում իրենց տների կամ աշխատատեղերի մոտակայքում և այնպիսի ծանոթ հաստատություններում, ինչպիսիք են հասարակական շենքերը և դպրոցները: Մոդելը մշակելու համար, որը, ի վերջո, որոշելու էր առավել իդեալական ընտրական կենտրոնները, յուրաքանչյուր հաստատության սենյակի միավորը, օբյեկտի գնահատականը և համապատասխանության միավորը, հաշվարկվում էին վերջնական մոդելի հավասարման մեջ և հավասարապես դասակարգվում: Այս հավասարումն ապահովեց, որ վայրի ֆիզիկական բնութագրերը տրվել են

համապատասխան կշռման հավասարության համապատասխանության գնահատման մեջ նշված սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական գործոններին: Բաժին 2.3-ում բացատրված 1320 կանոնը օգտագործվել է ընտրատեղամասերի միջև առնվազն մեկ քառորդ մղոնի հեռավորությունն ապահովելու համար: Աղյուսակ 10-ը ցույց է տալիս տվյալների շերտերը և համապատասխան կշռվածությունը, որն օգտագործվում է վերջնական ընտրական կենտրոնի առաջարկությունների ընտրության ժամանակ:

Կյանք/աշխատանք մոդելն օգտագործվել է հայտնաբերելու 2,000 պոտենցիալ ընտրական կենտրոնների առաջարկություններ՝ դասակարգված Լավագույն 1,000-ով և Առաջատար 1,000 հաստատություններով: Լավագույն 1,000 ընտրական կենտրոններն առավել շատ առաջարկվող հաստատություններն էին: Եթե Լավագույն 1,000 վայրերից մեկը հնարավոր չլիսի օգտագործել ընտրությունների ժամանակ, Առաջատար 1,000 պոտենցիալ ընտրական կենտրոնները կտրամադրեն այլ տարբերակներ համապատասխան վայրերում:

Table 9. Պահանջարկի գնահատման բաշխում

Պահանջարկի շերտ	Կշռի տոկոս
A. Կյանք/Աշխատանք - Ընտրողի ապրելու վայր	24
B. Կյանք/Աշխատանք - Աշխատավայր	15
C. Կյանք/Աշխատանք - Հավասար բաշխում	1
D. Սոցիալ-տնտեսական - Ցածր եկամտով համայնքներ	5
E. Սոցիալ-տնտեսական - Քիչ թվով ավտոմեքենա ունեցող	5
F. Սոցիալ-տնտեսական - Մեկուսացված համայնքներ	5
G. Սոցիալ-տնտեսական - Լեզվական փոքրամասնություններ	5
H. Ընտրողների բնութագրեր - Չգրանցված իրավունակ ընտրողներ	7
I. Ընտրողների բնութագրեր - Մեծ հակվածություն ունեցող գրանցված ընտրողներ	2
J. Ընտրողների բնութագրեր - Նոր ի հայտ եկող ընտրողներ	5




K. Ընտրողների բնութագրեր - Փոստով քվեարկության քիչ օգտագործում	10
L. Ընտրողների բնութագրեր - Հաշմանդամություն ունեցող ընտրողներ	4
M. Փոխադրում - Փոխադրամիջոցների հասանելիություն	5
N. Փոխադրում - Ավտոկանգառի առկայություն	2
O. Փոխադրում - Երթևեկության խցանումներ	5
Տոկոս	100

4.2 ՓՈՍՏՈՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՎԱՅՐԵՐ

Փոստով քվեարկության համար ներկայացման վայրերի վերաբերյալ առաջարկություններն առաջ են եկել առկա Փոստով քվեարկության համար վայրերի մասին Վարչաշրջանի գրառումների միջոցով, և դրանցից շատերը կմնան նույնը: Լրացուցիչ վայրեր կարելի է դուրս բերել Առաջատար 1,000 ընտրական կենտրոնների համար առաջարկած հաստատություններից: Այն հաստատությունները, որոնք չունեն համապատասխան չափի սենյակներ տվյալ ընտրության համար, բայց ունեն այլ ցանկալի բնութագրեր, կդառնան իդեալական Փոստով քվեարկության համար ներկայացման վայրեր, որոնք կարող են ապագա ընտրությունների համար հեշտությամբ դառնալ լիարժեք սպասարկման ընտրական կենտրոններ: Առաջարկված Փոստով քվեարկության համար ներկայացման վայրերի ամբողջական ցանկը տրամադրվում է Հավելված I-ում:

Figure 16. Փոստով քվեարկության վայրեր





4.3 ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2,000 ընտրական կենտրոնների առաջարկվող հաստատությունների ամբողջական ցանկը ներկայացված է Հավելված J-ում: Այս հաստատությունները միայն առաջարկություններ են: Դրանք երաշխավորված չէ, որ կդառնան պաշտոնական ընտրական կենտրոններ: Վարչաշրջանի ընտրության աշխատողները կուսումնասիրեն յուրաքանչյուր հաստատություն՝ VCA-ի և գործառնական պահանջների համապատասխանությունն ապահովելու համար և կտրոհորդեն ընտրությունների հյուրընկալելու իրենց կարողությունները որոշելու համար հարմարություններ ձեռք բերելու հնարավորությունները:

PlaceWorks-ը RR/CC-ին տրամադրել է ուղեցույց՝ ժամանակի ընթացքում առաջարկվող հաստատությունների տվյալների բազան պահպանելու համար: Այս պրակտիկ մոտեցումն ապահովում է, որ տվյալների թարմացված շերտերն օգտագործվում են ընտրական կենտրոնների աշխարհագրական պահանջարկի որոշման համար: PlaceWorks-ը նաև զեկուցեց վերլուծության ընթացքում ստացված դասերի մասին, որպեսզի Վարչաշրջանի ընտրական անձնակազմը կարողանա նախապատրաստվել հաստատությունների ընտրության և անցկացման խոչընդոտներին:

Հաջորդ բաժինը նկարագրում է, թե ինչպես են Լավագույն 1,000 առաջարկվող ընտրական կենտրոնների հաստատությունները բաշխվում ամբողջ Վարչաշրջանով մեկ: Յուրաքանչյուր քարտեզ ցույց է տալիս Ընտրական կենտրոնների բաշխումն՝ ըստ VCA պահանջների վերաբերյալ, որոնք նկարագրված են Բաժին 2.2.2-ում և կրկին ներկայացված են Աղյուսակ 11-ում:

Table 10. VCA-ի կողմից պահանջվող տվյալների շերտեր

VCA-ի համաձայն առաջարկվող ընտրական կենտրոնների և Փոստով քվեարկության վայրերի նվազագույն նկատառումները
• Հեռավորությունը հանրային տրանսպորտից
• VC/Քվեաթերթիկի հանձնման արկղին մեքենայով/հանրային տրանսպորտով հասնելու հեռավորությունն ու ժամանակը
• VC և Քվեաթերթիկի հանձնման արկղի շրջակայքի երթևեկության մոդելները
• Հեռավորությունը բնակության կենտրոններից
• Հեռավորությունն աշխարհագրական առումով մեկուսացված բնակչությունից
• Հեռավորությունը ցածր եկամտով համայնքներից
• Հեռավորությունը հաշմանդամություն ունեցող քվեարկողներից
• Հեռավորությունը լեզվական փոքրամասնության համայնքներից
• Հեռավորությունը քիչ թվով ավտոմեքենա ունեցող համայնքներից
• Հեռավորությունը չգրանցված իրավունակ քվեարկողներից
• Հեռավորությունը պատմականորեն փոստով քվեարկությունից քիչ օգտվող համայնքներից

Figure 17. Լավագույն 1,000 ընտրական կենտրոնների քարտեզ







Figure 18. Առաջատար 2,000 Հնտրական կենտրոնների քարտեզ



Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ Բնակչության կենտրոններից հեռավորության

Կյանք/աշխատանք մոդելը, որն օգտագործվում էր ամենահարմար հաստատությունները հայտնաբերելու համար, շեշտը դնում է ընտրողների տների և զբաղվածության վայրերի մոտ ընտրական կենտրոնների տեղակայման վրա: Նկր 19 ցույց է տալիս առաջարկվող ընտրական կենտրոնների տեղակայումներն՝ ըստ բնակչության կենտրոնների: Ինչպես ցույց է տրված քարտեզի բացատրության մեջ, մուգ գույները ներկայացնում են բնակչության ավելի մեծ խտություն ունեցող տարածքներ: Սև կետերի կլաստերը ցույց են տալիս պոտենցիալ ընտրական կենտրոնների գտնվելու վայրն՝ ըստ բնակչության այդ կենտրոնների: Առաջարկվող ընտրական կենտրոնները հակված են հավաքվելու բնակչության ավելի խիտ տարածքներում, բայց չեն անտեսում Վարչաշրջանի ավելի քիչ բնակեցված տարածքները:


Ինչպես ցույց է տրված Աղյուսակ 12-ում, առաջարկվող ընտրական կենտրոնների 33.5 տոկոսը գտնվում է բարձր խտության տարածքներում, մինչդեռ ընտրական կենտրոնների 39.1 տոկոսը գտնվում են շատ ցածր կամ ցածր խտության վայրերում:

Ցուցադրված բնակչության խտությունը հաշվի է առնում բնակեցված տարածքները յուրաքանչյուր բլոկի խմբում և բացառում է բլոկային խմբերը, որոնց թիվը կազմում է մեկ ակրի համար 0.25 իրավունակ ընտրողից պակաս ընտրող:

Table 11. Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ Բնակչության կենտրոններից հեռավորության

ԲՈՒՈՐ ԻՐԱՎՈՒՆԱԿ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԽՏՈՒԹՅՈՒՆ	ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԸՆԴՄԱՆՈՒՄ
Very Low (≤ 5)	13.8 %
Low (≤ 10)	25.3%
Moderate (≤ 15)	27.4%
High (≤ 20)	15.6%
Very High (≤ 368)	17.9%

Figure 19. Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ Բնակչության կենտրոններից հեռավորության






Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ Զբաղվածության կենտրոններից հեռավորության

Նկար 19-ի նման, Նկար 20-ը օգտագործում է Կյանք/Աշխատանք մոդելը՝ պատկերացնելու առաջարկվող ընտրական կենտրոնների գտնվելու վայրը զբաղվածության կենտրոնների մասով: Զբաղվածության կենտրոնները վերաբերում են այն ոլորտներին, որոնցում խմբավորված են զբաղվածության վայրերը: Առաջարկվող ընտրական կենտրոնները հակված են հավաքվելու զբաղվածության կենտրոնների մոտ, միաժամանակ ապահովելով զգալի թվով (28%) հաստատություններ՝ ավելի քիչ զբաղվածության կենտրոններ ունեցող տարածքներում: Ինչպես ցույց է տրված Աղյուսակ 13-ում, առաջարկվող ընտրական կենտրոնների 41.1 տոկոսը գտնվում է շատ բարձր և բարձր խտությամբ զբաղվածության կենտրոններում, մինչդեռ 31.7 տոկոսը գտնվում են շատ ցածր և ցածր խտության կենտրոններում:

Table 12. Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ Զբաղվածության կենտրոններից հեռավորության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՏՈՒԹՅՈՒՆ	ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՈՎՈՍԸ
Very Low (≤ 2.6)	28.4%
Low (≤ 2.8)	3.3%
Moderate (≤ 5.4)	27.2%
High (≤ 38.9)	37.8%
Very High (≤ 474.2)	3.3%

Figure 20. Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ Զբաղվածության կենտրոններից հեռավորության



Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ Ցածր եկամտով համայնքներից հեռավորության


Ընտրական կենտրոնների տեղակայումն այն խմբերի մոտակայքում, ովքեր պատմականորեն թերագնահատվել են ժողովրդավարական գործընթացներում, նույնպես կարևոր գործոն է ընտրական կենտրոնների նոր մոդելի մեջ: Նկար 21-ում ներկայացված է ցածր եկամուտ ունեցող համայնքների գտնվելու վայրն առաջարկվող ընտրական կենտրոնների համեմատ:

Ցածր եկամուտ ունեցող ընտանիքներն սահմանվում են Բնակարանային տնտեսության և քաղաքաշինության վարչության կողմից (HUD), որպես ընտանիքներ, որոնց եկամուտները չեն գերազանցում միջին ընտանիքի եկամտի 80 տոկոսը, ինչը Լոս Անջելեսի շրջանի համար կազմում է \$64,300: Ինչպես ցույց է տրված Աղյուսակ 13-ում, առաջարկվող ընտրական կենտրոնների 36 տոկոսը գտնվում է ցածր եկամուտ ունեցող համայնքների բարձր կամ շատ բարձր կենտրոնացման տարածքներում, մինչդեռ 41.8 տոկոսը գտնվում է ցածր եկամուտ ունեցող համայնքների շատ ցածր կամ ցածր կենտրոնացման տարածքներում:

Table 13. Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ Ցածր եկամտով համայնքներից հեռավորության

ՑԱՐԻ ԵԿԱՄՈՒՑ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՑՈՒԲԱՔԱՆՁՑՈՒՐ ԲԼՈԿՍՑԻՆ ԽՄԲՈՒՄ	ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԸՆԴՄԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՑ
Very Low (≤ 14)	20.9%
Low (≤ 23)	15.1%
Moderate (≤ 38)	22.1%
High (≤ 61)	27.8%
Very High (≤ 100)	14.0%

Figure 21. Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ Ցածր եկամտով համայնքներից հեռավորության






Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ քիչ թվով ավտոմեքենա ունեցող համայնքներից հեռավորության

Ընտրական կենտրոնների հարևանությունը քիչ թվով ավտոմեքենա ունեցող համայնքներին վերլուծվել է՝ առանց անձնական տրանսպորտային միջոցների ընտրական կենտրոն մուտք գործելու խոչընդոտները ճանաչելու համար: Նկար 22-ը ցույց է տալիս առաջարկվող ընտրական կենտրոններն՝ ըստ տրանսպորտային միջոցների հասանելիություն չունեցողներով զբաղեցրած բնակարանների յուրաքանչյուր բլոկային խմբում: Ինչպես ցույց է տրված Աղյուսակ 15-ում, առաջարկվող ընտրական կենտրոնների 36.2 տոկոսը տեղակայված է այն տարածքներում, որտեղ առանց անձնական տրանսպորտային միջոցների ընտրողների ներկայացվածությունը ցածր է:

Table 14. Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ քիչ թվով ավտոմեքենա ունեցող համայնքներից հեռավորության

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ ՀԱՍՏԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂՆԵՐՈՎ ԶԲԱԴԵՑՐԱԾ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՏՈՎՈՍԸ	ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՄՆԵՐԻ ՏՈՎՈՍԸ
Very Low (≤ 2)	15.1%
Low (≤ 4)	21.1%
Moderate (≤ 13)	33.1%
High (≤ 35)	4.3%
Very High (≤ 95)	30.7%

Figure 22. Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ քիչ թվով ավտոմեքենա ունեցող համայնքներից հեռավորության




Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ աշխարհագրական առումով մեկուսացված համայնքներից հեռավորության

Ապահովելու համար, որ բոլոր ընտրողները քվեարկելու հավասար հնարավորություն ունենան, ուշադիր դիտարկվեց ընտրատեղամասերի հարևանությունն աշխարհագրական առումով մեկուսացված բնակչությանը: Նկար 23-ը պատկերում է առաջարկվող ընտրական կենտրոնները՝ կապված աշխարհագրական այս մեկուսացված համայնքների ընտրողների հետ, ներառյալ իրավունակ չգրանցված ընտրողները:

Այն նաև ցույց է տալիս LA վարչաշրջանի քաղաքային տարածքները և մեկուսացված համայնքներից հեռավորությունը՝ Վարչաշրջանի ավելի բնակեցված հատվածներից: Արդյունքում, աշխարհագրական առումով մեկուսացված բնակչության մոտ 48 տոկոսը տեղակայված է ընտրական կենտրոնից 5 մղոնի սահմաններում:

Ավալոն քաղաքը, որը գտնվում է Կատալինա կղզում, եզակիորեն մեկուսացված է Լոս Անջելեսի վարչաշրջանի մայրցամաքից: Այս աշխարհագրական շրջանում ընտրողներին տեղավորելու համար RR/CC-ն կանխորոշել էր, որ Ավալոնի քաղաքապետարանում կտեղադրվի ընտրական կենտրոն, և այս տարածաշրջանի վերլուծություն չի իրականացվել:

Figure 23. Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ աշխարհագրական առումով մեկուսացված համայնքներից հեռավորության:






Առաջարկվող Հնտրական կենտրոններն՝ ըստ լեզվական փոքրամասնություններ ունեցող համայնքներից հեռավորության

Հնտրական կենտրոնի մոդելի համաձայն, RR/CC-ը կշարունակի լեզվական աջակցություն ցուցաբերել բացի անգլերենից նաև 12 լեզուներով: Այս վերլուծության մեջ օգտագործված ԱՄՆ մարդահամարի դասակարգումն սահմանում է լեզվական փոքրամասնությունների համայնքները որպես անհատների խմբավորում, ովքեր «շատ լավ» են խոսում անգլերենից բացի այլ լեզուներով և անգլերեն են խոսում «պակաս քան շատ լավ»:

Նկար 24-ում ներկայացված է առաջարկվող ընտրական կենտրոնների գտնվելու վայրը լեզվական փոքրամասնություններ ունեցող համայնքների հետ կապված: Լեզվական փոքրամասնություն կազմող ընդհանուր բնակչության մոտ 63%-ը գտնվում է առաջարկվող ընտրական կենտրոնից կես մղոնի սահմաններում:

Figure 24. Առաջարկվող Հնտրական կենտրոններն՝ ըստ լեզվական փոքրամասնություններ ունեցող համայնքներից հեռավորության




Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ չգրանցված իրավունակ քվեարկողներից հեռավորության

RR/CC-ն ընդունում է ներկայումս չգրանցված ընտրելու իրավունք ունեցող ընտրողներին ներգրավելու կարևորությունը: Այս կարևոր շահագրգիռ կողմերի մասնակցությունը խրախուսելու համար ընտրական կենտրոնների հաստատությունները պետք է լինեն հեշտ հասանելի և արդյունավետ օգտագործելու համար:

Նկար 25-ում ներկայացված է ընտրական կենտրոնի առաջարկվող հաստատությունների գտնվելու վայրը չգրանցված իրավասու ընտրողների հետ համեմատ: Վերլուծությունը հայտնաբերեց բլոկային խմբեր մեկ կամ մի քանի չգրանցված իրավասու ընտրողներով: Բոլոր չգրանցված ընտրողների մոտ 60 տոկոսը գտնվում է առաջարկվող ընտրական կենտրոնից կես մղոնի սահմաններում:

Figure 25. Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ չգրանցված իրավունակ քվեարկողներից հեռավորության






Առաջարկվող Հնտրական կենտրոններն՝ ըստ ընտրողների մեծ խտության տարածքներից հեռավորության

Հնտրություններին մասնակցելու խիստ հակում ունեցող ընտրողների կարիքներին աջակցելու համար ընտրական կենտրոնները պետք է տեղակայվեն ընտրողների մեծ թվով գրանցում ունեցող տարածքների հարևանությամբ: Նկար 26-ը ցույց է տալիս առաջարկվող ընտրական կենտրոնները՝ կապված մեծ հակվածություն ունեցող ընտրողների հետ (ակտիվ ընտրողների) յուրաքանչյուր բլոկային խմբում, պատկերելով միայն բլոկային խմբերը՝ 1 կամ ավելի մեծ հակվածություն ունեցող ընտրողներով: Հնդհանուր գրանցված ընտրողների մոտ 60 տոկոսը գտնվում է առաջարկվող քվեարկության կենտրոնից կես մղոնի սահմաններում:

Figure 26. Առաջարկվող Հնտրական կենտրոններն՝ ըստ ընտրողների մեծ խտության տարածքներից հեռավորության



Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ պատմականորեն փոստով քվեարկության քիչ օգտագործող համայնքներից հեռավորության


Պատմականորեն փոստով քվեարկության քիչ օգտագործող բնակչության մոտ ընտրական կենտրոնների տեղակայումն ընդլայնում է քվեարկության տարբերակները: RR/CC-ն պետք է գտնի նուրբ հավասարակշռություն, երբ ընտրում է պաշտոնական ընտրական կենտրոններ փոստով քվեարկող բնակչության համար: Այս հավասարակշռությունը պետք է ապահովի լիարժեք սպասարկման հաստատություններ, միաժամանակ ապահովելով շատ բարձրորակ փոստով քվեարկության համար ներկայացման վայրեր:

Նկար 27-ում ցույց է տրված Փոստով քվեարկության օգտագործումը՝ քաղաքի մակարդակով 2020թ.-ի ընտրություններին (RR/CC-ի կողմից տրամադրված գնահատականներ): Ինչպես ցույց է տրված Աղյուսակ 16-ում, առաջարկվող ընտրական կենտրոնների 22.6 տոկոսը գտնվում է այն համայնքներում, որտեղ կան ավելի քան 55 տոկոս ընտրող, որոնք օգտագործում են Փոստով քվեարկության ընտրանքները, մինչդեռ 15.1 տոկոսը գտնվում է այն համայնքներում, որտեղ 35 տոկոսից պակաս Փոստով քվեարկողներ կան:

Table 15. Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ պատմականորեն փոստով քվեարկության քիչ օգտագործող համայնքներից հեռավորության

ՓՈՍՏՈՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՈՆՍՎՈՐ ՏՈԿՈՍԸ	ՔԳԵՆՐԿՈՒԹՅԱՆ ՏՈՆՍՎՈՐ	ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԸՆԴՆԱՆՈՒՐ ՏՈԿՈՍԸ
55.1% and Above		13.0%
45.1%-55%		9.6%
35.1%-45%		62.3%
25.1%-35%		14.8%
25% or Less		0.3%

Figure 27. Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ պատմականորեն փոստով քվեարկության քիչ օգտագործող համայնքներից հեռավորության






Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ հաշմանդամություն ունեցող ընտրողներից հեռավորության

Ընտրական կենտրոնների նոր մոդելը նախագծված է որպեսզի այն հասանելի լինի բոլոր ընտրողներին՝ ապահովելով, որ ADA մատչելի ընտրատեղամասերը տեղակայված լինեն հաշմանդամություն ունեցող ընտրողների մոտ: Նկար 28-ը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր մարդահամարների տրակտի մեջ հաշմանդամություն ունեցող ընտրողների տարածվածությունն՝ առաջարկված ընտրական կենտրոնների համեմատությամբ: Հաշմանդամություն ունեցող ընտրողների մոտ 78 տոկոսը գտնվում է առաջարկվող ընտրական կենտրոնից կես մղոնի սահմաններում:

Figure 28. Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ հաշմանդամություն ունեցող ընտրողներից հեռավորության



Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ հանրային տրանսպորտից հեռավորության

Յածր եկամուտ ունեցող համայնքները հաճախ ապավինում են տրանսպորտի հասանելիությանը, և նոր ի հաստ եկող ընտրողները նախընտրում են օգտվել տրանսպորտից ըստ ընտրության, քան ըստ անհրաժեշտության: Նկար 29-ը ցույց է տալիս տրանսպորտի հասանելիությունը՝ բաժանված հետևյալ կատեգորիաների.


- **Ոչ մի** - Որևէ տրանսպորտի կանգառից ավելի քան 0.5 մղոն հեռավորության վրա գտնվող տարածքներ:
- **Վատ** - Յածր որակի տրանսպորտի կանգառից մինչև 0.5 մղոն հեռավորության վրա գտնվող տարածքներ:
- **Լավ** - Բարձր որակի տրանսպորտի կանգառից մինչև 0.5 մղոն հեռավորության վրա գտնվող տարածքներ:
- **Բավարար** - Յածր որակի տրանսպորտի կանգառից մինչև 0.25 մղոն հեռավորության վրա գտնվող տարածքներ:
- **Չերազանց** - Բարձր որակի տրանսպորտի կանգառից մինչև 0.25 մղոն հեռավորության վրա գտնվող տարածքներ:

Բարձր և ցածր որակի տրանսպորտի կանգառների սահմանումները հասանելի են Բաժին 2.2.2-ում: Ինչպես ցույց է տրված Աղյուսակ 17-ում, առաջարկվող ընտրական կենտրոնների 48.2 տոկոսը գտնվում է տրանսպորտի կանգառից մեկ քառորդ մղոնի սահմաններում, իսկ 2 տոկոսից պակասը՝ ավելի քան կես մղոն տրանսպորտի կանգառից:

Table 16. Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ հանրային տրանսպորտից հեռավորության

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԿԱՆԳԱՌՆԵՐ ՏԱՐԱԾՔՆԵՐ	ՈՒՆԵՑՈՂ	ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՈՎՈՍԸ
None	1.7%	
Poor	7.9%	
Fair	42.2%	
Good	24.9%	
Excellent	23.3%	

Figure 29. Առաջարկվող Ընտրական կենտրոններն՝ ըստ հանրային տրանսպորտից հեռավորության





Առաջարկվող Ընտրական կենտրոնների մոտակայքում երթևեկության խցանումներ


Առաջարկվող ընտրական կենտրոններն ընտրվել են՝ հաշվի առնելով, թե որքան հեշտությամբ կարող են ընտրողները մուտք գործել դրանց և մատչելիության տարբեր տեսակի խոչընդոտներ:

Ուսումնասիրելով յուրաքանչյուր Տրանսպորտային վերլուծության գոտում (TAZ) ճանապարհի մեկ մղոնի վրա խցանումների քանակը, հետազոտողները պարզել են նկատելի երթևեկի խցանումներ և փորձել են խուսափել խիստ խցանված տարածքներում առաջարկվող ընտրական կենտրոնների տեղակայումից: Լոս Անջելեսի վարչաշրջանի ավտոկենտրոնացման և խցանված խճուղի ունեցող ճանապարհների պատճառով միշտ չէ, որ հնարավոր էր խուսափել այդ խցանված տարածքներից, մինչույն ժամանակ, փորձելով նաև հաստատություններ տեղակայել խիստ բնակչության և զբաղվածության կենտրոնների մոտ: Ինչպես ցույց է տրված Աղյուսակ 18-ում, առաջարկվող ընտրական կենտրոնների գրեթե 40 տոկոսը գտնվում է բարձր և շատ բարձր երթևեկի խցանում ունեցող տարածքներում, իսկ 35.1 տոկոսը՝ ցածր և շատ ցածր երթևեկի խցանում ունեցող տարածքներում:

Table 17. Առաջարկվող Ընտրական կենտրոնների մոտակայքում երթևեկության խցանումներ

ՃԱՆԱՊԱՐՀԻ ՄԵՎ ՄՂՈՆԻ ՎԸՆ ԽՑԱՆՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ	ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԸՆԿՅԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆԱԿԸ
Very Low ($\leq 6,959$)	23.3%
Low ($\leq 8,934$)	11.8%
Moderate ($\leq 15,892$)	25.9%
High ($\leq 40,401$)	33.6%
Very High ($\leq 12,672$)	5.3%

Figure 30. Առաջարկվող Ընտրական կենտրոնների մոտակայքում երթևեկության խցանումներ



4.4 ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱՔԱՅԼԵՐԸ

Քանի որ քվեարկության նոր մոդելը իրականացվում է ամբողջ նահանգով մեկ, կպարզվեն լավագույն փորձերը, որոնք կօգնեն վարչաշրջաններին բարելավել մատչելի և արդյունավետ ընտրական կենտրոնների ընտրության և գործարկման գործընթացը: PlaceWorks-ը RR/CC-ին է տրամադրել է հետագա գործընթացների և պահպանման առաջարկություններ:

Այս առաջարկությունները RR/CC-ին ուղեկցում են գործընթացում, թե երբ և ինչպես է պետք թարմացնել տվյալների շերտերը, որոնք օգտագործվում են բնակչության խտության, զբաղվածության կենտրոնների, սոցիալ-տնտեսական բնութագրերի և այլ վայրերի որոշման համար, որոնք օգտագործվում են հնարավոր վայրի համապատասխանությունը որոշելիս: PlaceWorks-ը նաև առաջարկում է Ընտրական աշխատողներին ներգրավել ընտրությունից հետո հաստատությունների վերաբերյալ հաշվետվությունների մեջ, որպեսզի լրացնեն RR/CC-ի կողմից տեղում իրականացված վերլուծությունը:

4.4.1